



ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱՐԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
МЕЖДУНАРОДНЫЙ УНИВЕРСИТЕТ ЕВРАЗИЯ
EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻԶԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



Երևան, 2023 | N2

ISSN 1829-4952



ԲԱՆԲԵՐ

ԵՎՐԱՍԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ВЕСТНИК

МЕЖДУНАРОДНОГО УНИВЕРСИТЕТА ЕВРАЗИЯ

BULLETIN

EURASIA INTERNATIONAL UNIVERSITY

2

Երևան - 2023

Հրատարակության է երաշխավորվել Եվրասիա միջազգային համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝

Գագիկ Վարդանյան (գլխավոր խմբագիր), տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ալբերտ Մակարյան, ք.գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Անի Ստեփանյան, ի. գ. թ., դոցենտ, Արդարադատության համառոտական պետական համալսարան (Ռուսաստանի Արդարադատության նախարարության ԱՀՊՀ)

Աննա Օհանյան, ք.գ. դ., ԱՄՆ Ստոնհիլ համալսարանի պրոֆեսոր

Աշոտ Ալեքսանյան, ք.գ. դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան

Աշոտ Խաչատրյան, ի.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ Սահմանադրական դատարանի դատավոր

Աշոտ Մարկոսյան, տ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան
Արամ Այվազյան, ի.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան, ՀՀ քննչական կոմիտե
Գայանե Թովմասյան, տ.գ.թ., դոցենտ, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «ԱՄԲԵՐԴ» հետազոտական կենտրոն

Գրաժինա Չուպադենե, մանկ.գ.դ., դոցենտ, Լիտվայի Միկոլաս Ռոմերիս համալսարան
Դմիտրիս Զախոս, մանկ.գ.դ, դոցենտ Սալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարան

Երանուհի Մանուկյան, փ.գ.թ., դոցենտ, Երևանի պետական համալսարան
Իգոր Կարապետյան, մանկ.գ.դ., պրոֆեսոր, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Լուսինե Հարությունյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան

Լուսինե Ֆլյյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Խաչիկ Գալստյան, ք.գ.դ., դոցենտ, Երևանի պետական համալսարան

Հեղինե Մանասյան, տ.գ.դ., Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն (ՀՌԿԿ)-Հայաստան

Հովհաննես Հարությունյան, տ.գ.թ., Եվրասիա միջազգային համալսարան

Մարիամ Մարգարյան, ք.գ.դ., պրոֆեսոր, փ.գ.թ., դոցենտ, ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Մարտա Մորդովան-Յիվինսկա, ք.գ.թ., Վիստուլայի համալսարան (Վիստուլայի համալսարանների

խումբ, Վարշավա, Լեհաստան) և Վարշավայի Wsztechnica Polska համալսարան

Պյոտր Բորովսկի, տեխ.գ.թ., տնտեսագետ, դոցենտ, Վարշավայի բնական գիտությունների համալսարան

Ռամոն Բուազա Լորենցո, ք.գ.թ., Սանտյագո դե Կոմպոստելայի համալսարան (Իսպանիա)

Սամվել Մուրադյան, ք.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան

Սոնա Հակոբյան, ք.գ.թ., Հայաստանի Եվրոպական Համալսարան

Սուրեն Օհանյան, աշխ.գ.դ., պրոֆեսոր, Եվրասիա միջազգային համալսարան

Ստեփան Ծաղիկյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Վահե Վանեսյան, ք.գ.դ., CIDA-Կանադական միջազգային զարգացման գործակալություն

Վլադիմիր Հովհաննիսյան, ի.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Խմբագրական խորհրդի քարտուղար՝

Նունե Զոմարոյան, Եվրասիա միջազգային համալսարան

ISSN 1829-4952

«Բանբեր Եվրասիա միջազգային համալսարանի» պարբերականը ԲՈԿ-ի 28.06.2019թ. № 164Ա հրամանի համաձայն ընդգրկված է առենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ՀՀ ԿԳՄՍՆ բարձրագույն որակավորման կոմիտեի համար ընդունելի գիտական հրատարակությունների ցուցակում:

© Եվրասիա միջազգային համալսարան, 2023

**Издается по рекомендации ученого совета
Международного университета Евразия**

Редакционная коллегия

Гагик Варданян (главный редактор), д-р экон. наук, профессор, Международный университет Евразия

Альберт Макарян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Ани Степанян, канд. юрид. наук, доцент, Всероссийский государственный университет юстиции (РПА Минюста России)

Анна Оганян, д-р полит. наук, профессор, Стоунхиллский университет, США

Арам Айвазян, канд. юрид. наук, Международный университет Евразия, Следственный комитет РА

Ашот Александян, д-р полит. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Маркосян, д-р экон. наук, профессор, Ереванский государственный университет

Ашот Хачатрян, д-р юрид. наук, профессор, судья Конституционного суда Республики Армения

Ваге Ванесян, д-р полит. наук, CIDA-Канадское агентство международного развития

Владимир Оганесян, д-р юрид. наук, Российско-Армянский (Славянский) университет

Гаяне Товмасян, канд. экон. наук, доцент, Исследовательский центр «АМБЕРД» Государственного экономического университета Армении

Гражина Чуладене, д-р пед. наук, доцент, Университет Миколаса Ромериса, Литва

Дмитриос Захос, д-р пед. наук, Университет Аристотеля в Салониках, Греция

Ерануи Манукян, канд. филос. наук, доцент, Ереванский государственный университет

Игорь Карапетян, д-р пед. наук, профессор, Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна

Лусине Арутюнян, д-р пед. наук, профессор, Государственный экономический университет

Лусине Флджян, д-р филол. наук, профессор, Международный университет Евразия

Мариам Маргарян, д-р полит. наук, профессор, канд. филос. наук, доцент, Академия государственного управления Республики Армения

Марта Молдован-Цывинска, д-р филол. наук, Вислинский университет (Группа университетов Вистулы, Варшава, Польша), Университет Wsztechnica Polska в Варшаве

Оганес Арутюнян, канд. экон. наук, Международный университет Евразия

Петр Боровский, д-р техн. наук, экономист, Варшавский университет естественных наук, Польша

Рамон Бузас Лоренцо, д-р полит. наук, Университет Сантьяго-де-Компостела, Испания

Самвел Мурадян, д-р филол. наук, профессор, Ереванский государственный университет

Сона Аюкян, канд. филол. наук, Европейский университет Армении

Сурен Оганян, д-р геогр. наук, профессор, Международный университет Евразия

Степан Цагикян, д-р юрид. наук, профессор, Российско-Армянский (Славянский) университет

Хачик Галстян, д-р полит. наук, доцент, Ереванский государственный университет

Эгине Манасян, д-р экон. наук, Кавказский исследовательский ресурсный центр-Армения

Секретарь редакционной коллегии:

Нуне Джомардян, Международный университет Евразия

ISSN 1829-4952

Решением Высшей квалификационной комиссией МОНКС РА от 28.06.2019 № 164А Вестник Международного университета Евразия включен в перечень научных изданий приемлемых для публикаций основных результатов и положений диссертаций.

*Recommended for publication by the Scientific
Council of Eurasia International University*

Editorial Board:

Gagik Vardanyan (Chairman), Doctor of Economics, Professor, Eurasia International University

Albert Makaryan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University

Ani Stepanyan, Ph.D. in Law, Associate Professor, All-Russian State University of Justice (RLA of the Ministry of Justice of Russia)

Anna Ohanyan, Ph.D. in Political Science, Stonehill University, USA

Aram Ayvazyan, Ph.D. in Law, Eurasia International University, RA Investigative Committee

Ashot Aleksanyan, Doctor of Political Science, Professor, Yerevan State University

Ashot Khachatryan, Doctor of Law, Professor, Judge of the Constitutional Court of the RA

Ashot Markosyan, Doctor of Economics, Professor, Yerevan State University

Dmitrios Zachos, Ph.D. in Pedagogical Sciences, Associate Professor, Aristotle University of Thessaloniki, Greece

Yeranuhi Manukyan, Ph.D. in Philosophy, Associate Professor, Yerevan State University

Gayane Tovmasyan, Ph.D. in Economics, Associate Professor, "AMBERD" Research Center of the Armenian State University of Economics

Grazina Chuladiene, Ph.D. in Pedagogy, Associate Professor, Mikolas Romeris University, Lithuania

Heghine Manasyan, Doctor of Economics, Caucasus Research Resource Center (CRRRC)-Armenia

Hovhannes Harutyunyan, Ph.D. in Economics, Eurasia International University

Khachik Galstyan, Doctor of Political Sciences, Associate Professor, Yerevan State University

Igor Karapetyan, Doctor of Pedagogical Sciences, Professor, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University

Lusine Harutyunyan, Doctor of Philology, Professor, Armenian State University of Economics

Lusine Fljyan, Doctor of Philological Sciences, Professor, Eurasia International University

Mariam Margaryan, Doctor of Political Sciences, Professor, Ph.D. in Philosophy, Associate Professor, Academy of Public Administration of the Republic of Armenia

Marta Moldovan-Cywińska, Ph. D. in Humanities, Vistula University (Vistula Group of Universities, Warsaw, Poland), Wsztechnica Polska University in Warsaw, Poland

Piotr Borowski, Ph.D. in Engineering, Economist, Associate Professor, Warsaw University of Life Sciences, Poland

Ramón Bouzas Lorenzo, Ph.D. in Political Science, University of Santiago de Compostela, Spain

Samvel Muradyan, Doctor of Philological Sciences, Professor, Yerevan State University.

Sona Hakobyan, Ph.D. in Philological Sciences, European University of Armenia

Stepan Tsaghikyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Suren Ohanyan, Doctor of Geographical Sciences, Professor, Eurasia International University

Vahe Vanesyan, Ph.D. in Political Science, CIDA - Canadian Agency for International Development

Vladimir Hovhannisyan, Doctor of Law, Professor, Armenian-Russian (Slavonic) University

Secretary of Editorial Board:

Nune Jomardyan, Eurasia International University

According to № 164 (A)U decree of RA Supreme Certifying Committee (hereinafter, SCC) dated on June 28, 2019, EIU Bulletin is now recognized as a scientifically relevant journal included in the list of SCC, RA Ministry of Education, Science, Culture and Sport for publicizing the main principals and guidelines of Ph.D. dissertation.

ISSN 1829-4952

© Eurasia International University, 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գևորգ Իսրայելյան

Թարմանաձևավորման քրեաբանական բնութագրերը եվ Կանխարգելման շտաբերը
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

8

Ջավեն Սմբատյան

Վարչական ԱԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԴԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

21

Աշոտ Ջաքարյան

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՋԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԵՏԱԿԱՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓՈՎՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

34

ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռաֆիկ Ավետիսյան

ՎՐԱՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՆԱՏՕ-ՌՈՒՍԱՏԱՆ
ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԴԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

48

Անահիտ Սերոբյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

61

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լիլյա Ավետիսյան

ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՆՈՐ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

74

Համազասպ Գալստյան, Քրիստինե Թաթոսյան, Գագիկ Բաղդոսյան

ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵՎ ՄՈՒՏՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՎ
ԾԱԽՍԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ
(ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԶԱՐԵՆՑԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

93

Փարիզա Մոզհադամ

ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՃԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՈԴԵԼՈՒՄ ՀԻՄՆԱԿԱԾ ԲՀՈՊԱԼ ԳԱԶԻ ԱՂԵՏԻ ՎՐԱ

106

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սուսաննա Գրիգորյան

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՒԵԼՅՈՒՆ ԵՐԲՈՂՆԵՐԻ ԲԱՌԱՅԻՆ ԱՐՎԵՏԱԸ

122

Լուիզա Գասպարյան

ԶԱՐԸՂ ԴԻՔԵՆՍԻ «ՄԱՐՏԻՆ ՉԵՂՎԻԹ» ՎԵՊԸ ԵՒ ԴՐԱ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(ՌՈՒՆԵՐԵՆ և ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ)

134

Մարտա Մորդոկան-Ցիլիխսկա

«ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՍՅՈՒՌԵԱԼԻԶՄԻ ՄԱՆԻՖԵՍՏԱԸ» ՈՐՊԵՍ ՍՅՈՒՌԵԱԼԻԶՄԻ ՕՐԻՆԱԿ ԼԵՀԱԿԱՆ
ՆԱՐՆՋԱԳՈՒՅՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

143

Անի Թամազյան

ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԵՐԸ ԿԱՄ ԴԵՎԼԱՐԱՏԻՎՆԵՐԸ ԵԱՀԿ ՄԻՆՍԿԻ ԽՄԲԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ԻՆՉՈ՞Ւ ՆՐԱՆՔ ՁԵՊԱՏԵՑՅԻՆ ԼԵՌՆԱՅԻՆ ԴԱՐԱՔԱԴԻ ՀԱՎԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԽԱՂԱՂ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆԸ

156

Սյուզաննա Գրիգորյան

ՀԱՐՅՈՒՊԱՏԱՍԽԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԽՈՍՔԱՅԻՆ ԱԿՏԵՐԻ ԼԵԶՎԱԳՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐ ՀԱՐՅԱԶՐՈՒՅՅԻ ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՈՒՄ

167

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍԱՎԱՆԴԱՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱ

Արփինե Սարգսյան

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ
(ՀԻՄՆԱԽՆԴՐԱՀԵՆՔ ՈՒՍՈՒՅՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԿԻՐԱՌՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

180

СОДЕРЖАНИЕ

ЮРИСПРУДЕНЦИЯ

Геворг Израелян

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И ВОПРОСЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ
НАРКОПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ 8

Завен Смбалян

ЗАКОННОСТЬ АДМИНИСТРАТИВНОГО АКТА В КОНТЕКСТЕ ИНСТИТУТА НАДЛЕЖАЩЕГО
АДМИНИСТРИРОВАНИЯ 21

Ашот Закарян

ОСОБЕННОСТИ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ В КОНТЕКСТЕ ПРАВОВОГО ОГРАНИЧЕНИЯ
ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ 34

ПОЛИТОЛОГИЯ

Рафик Аветисян

ВЫЗОВЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ГРУЗИИ В КОНТЕКСТЕ ГЕОПОЛИТИЧЕСКОГО КОНФЛИКТА
НАТО-РОССИЯ 48

Анаит Серобян

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ 61

ЭКОНОМИКА

Лилия Аветисян

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ КОНДИТЕРСКОГО РЫНКА И НОВЫЕ МАРКЕТИНГОВЫЕ ПОДХОДЫ
В ПОСТЭПИДЕМИЧЕСКИЙ ПЕРИОД 74

Амазасп Галстян, Кристине Татосян, Гагик Бададян

ОЦЕНКА УРОВНЯ ДЕЦЕНТРАЛИЗАЦИИ ДОХОДОВ И ОПТИМАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ ЗАТРАТАМИ
КРУПНЫХ НАСЕЛЕНИЙ РА (НА ПРИМЕРЕ ОБЩИНЫ ЧАРЕНЦАВАН КОТАЙКСКОЙ ОБЛАСТИ РА) 93

Париса Могаддам

ТЕХНОГЕННО-ЭКОЛОГИЧЕСКИЕ КАТАСТРОФЫ И ИХ ВЛИЯНИЕ НА ЭКОНОМИКУ; ЭКОНОМИЧЕСКОЕ
МОДЕЛИРОВАНИЕ НА ОСНОВЕ ГАЗОВОЙ КАТАСТРОФЫ В БХОПАЛЕ 106

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

Сусанна Григорян

СЛОВЕСНОЕ ИСКУССТВО ОД ВАРДАНА АРЕВЕЛЦИ 122

Луиза Гаспарян

РОМАН ДИККЕНСА «МАРТИН ЧАЗЛВИТ» И ЕГО ПЕРЕВОДЫ
(РУССКИЙ И АРМЯНСКИЙ ПЕРЕВОД) 134

Марта Молдован-Цывинска

«МАНИФЕСТ СОЦИАЛИСТИЧЕСКОГО СЮРРЕАЛИЗМА» КАК ПРИМЕР СЮРРЕАЛИЗМА В КОНТЕКСТЕ
ДЕЯТЕЛЬНОСТИ ПОЛЬСКОГО ДВИЖЕНИЯ ОРАНЖЕВАЯ АЛЬТЕРНАТИВА 143

Ани Тамазян

РЕЧЕВЫЕ ДЕЙСТВИЯ ИЛИ ДЕКЛАРАТИВЫ ЗАЯВЛЕНИЙ МИНСКОЙ ГРУППЫ ОБСЕ: ПОЧЕМУ ОНИ
НЕ ПОМОГЛИ РАЗРЕШИТЬ НАГОРНО-КАРАБАХСКИЙ КОНФЛИКТ 156

Сюзанна Григорян

ПРАГМАЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ РЕЧЕВЫХ АКТОВ ВЫРАЖАЮЩИХ ВОПРОС-ОТВЕТ
В КОММУНИКАТИВНОЙ МОДЕЛИ БИЗНЕС-ИНТЕРВЬЮ 167

ПЕДАГОГИКА И МЕТОДИКА ОБУЧЕНИЯ

Арпине Саргсян

МОДЕРНИЗАЦИЯ ЭКОНОМИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ, ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ АКТИВНЫХ
МЕТОДОВ ОБУЧЕНИЯ (ПРОБЛЕМНОЕ ОБУЧЕНИЕ И КЕЙС-СТАДИ) 180

CONTENT

JURISPRUDENCE

Gevorg Israyelyan CRIMINOLOGICAL CHARACTERISTICS AND ISSUES OF DRUG CRIME PREVENTION IN THE REPUBLIC OF ARMENIA	8
--	---

Zaven Smbatyan LEGALITY OF AN ADMINISTRATIVE ACT IN THE CONTEXT OF THE INSTITUTION OF GOOD GOVERNANCE	21
---	----

Ashot Zaqaryan FEATURES OF THE PRINCIPLE OF SEPARATION OF POWERS IN THE CONTEXT OF THE LEGAL LIMITATION OF STATE POWER	34
---	----

POLITICAL SCIENCE

Rafik Avetisyan GEORGIA'S FOREIGN POLICY CHALLENGES IN THE CONTEXT OF THE NATO-RUSSIA GEOPOLITICAL CONFLICT	48
--	----

Anahit Serobyan CONCEPTUAL FOUNDATIONS OF TURKISH FOREIGN POLICY AT THE PRESENT STAGE	61
---	----

ECONOMICS

Lilya Avetisyan TRENDS IN THE DEVELOPMENT OF THE CONFECTIONERY MARKET AND NEW MARKETING APPROACHES IN THE POST-EPIDEMIC PERIOD	74
---	----

Hamazasp Galstyan, Kristine Tatosyan, Gagik Badadyan ASSESSMENT OF THE LEVEL OF REVENUE DECENTRALIZATION AND OPTIMAL COST MANAGEMENT OF LARGE COMMUNITIES OF RA (IN THE EXAMPLE OF CHARENTSAVAN COMMUNITY OF KOTAIK REGION, RA)	93
---	----

Parisa Moghaddam MAN-MADE ENVIRONMENTAL DISASTERS AND THEIR IMPACT ON ECONOMY; ECONOMIC MODELING BASED ON BHOPAL GAS DISASTER	106
--	-----

LINGUISTICS AND PHILOLOGY

Susanna Grigoryan THE WORD ART OF VARDAN AREVELTSI'S ODES	122
---	-----

Luiza Gasparyan "INSIGHTS INTO DICKENS'S "MARTIN CHUZZLEWIT" AND ITS TRANSLATIONS" (WITH REFERENCE TO ARMENIAN AND RUSSIAN TRANSLATIONS)	134
---	-----

Marta Moldovan-Cywińska "MANIFESTO OF SOCIALIST SURREALISM" AS AN EXAMPLE OF SURREALISM ENGAGED AGAINST THE BACKGROUND OF OTHER ACTIVITIES OF THE POLISH MOVEMENT ORANGE ALTERNATIVE	143
--	-----

Ani Tamazyan SPEECH ACTIONS OR DECLARATIVES OF THE OSCE MINSK GROUP STATEMENTS: WHY DIDN'T THEY HELP TO RESOLVE THE CONFLICT OF NAGORNO-KARABAGH	156
---	-----

Syuzanna Grigoryan PRAGMALINGUISTIC PECULIARITIES OF SPEECH ACTS EXPRESSING QUESTION-ANSWER IN THE COMMUNICATIVE MODEL OF BUSINESS INTERVIEWS	167
--	-----

PEDAGOGY AND TEACHING METHODOLOGY

Arpine Sargsyan MODERNIZATION OF ECONOMIC EDUCATION. FEATURES OF THE APPLICATION OF ACTIVE LEARNING METHODS (PROBLEM-BASED LEARNING AND CASE STUDIES)	180
--	-----

Գևորգ Իսրայելյան

ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրոյի Քրեաբանության կիրառական հիմնախնդիրների գիտահետազոտական կենտրոնի պետ, Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլ. հասցե՝ gevorg.israelyan@eiu.am

DOI: 10.53614/18294952-2023.2-8

ԹՄՐԱՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՄ

Հայաստանի Հանրապետությունում թմրանյութերի հետ կապված հանցագործությունների ձևավորված միտումները և ստեղծված իրավիճակը ներքին մեծ սպառնալիք են ոչ միայն երկրի սոցիալական կյանքի, այլև ազգային անվտանգության համար: Հոդվածում քննարկվում է թմրանյութերի հետ կապված հանցագործությունների և դրանց հակազդման հիմնախնդիրը, որի արդիականությունը պայմանավորված է՝ ա) վերջին տարիներին այս տեսակի հանցագործությունների աննախադեպ գրեթե կրկնակի աճով (1.78 անգամ), բ) ստեղծված իրավիճակի պատճառահետևանքային կապերի բացահայտման կարևորությամբ, գ) թմրահանցագործության հակազդման արդյունավետ կանխարգելման միջոցների մշակման համար քրեաբանական հետազոտության իրականացման, հիմնախնդրի լուծմանը միտված տեսամեթոդաբանական հենքի ստեղծման անհրաժեշտությամբ:

2017-2022 թթ. պաշտոնական վիճակագրական և անցկացված հարցումներով հավաքագրված տվյալների հիման վրա կատարված իրավիճակի համակողմանի վերլուծությամբ՝ ուսումնասիրվել են թմրահանցագործություններին նպաստող քրեածին, այդ թվում՝ լատենտային, գործոնները, բացահայտվել է ընդհանուր հանցագործությունների միտումների և թմրահանցագործությունների փոխկապվածությունը, առաջարկվել է հակազդման միջոցների շրջանակ:

Հիմնաբառեր. թմրահանցավորություն, քրեաբանական բնութագիր, լատենտայնություն, պատճառական համալիր, կանխարգելում:

Ներածություն

Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների, պրեկուրսորների, խիստ ներգործող կամ թունավոր նյութերի օրինական շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների հետ կապված խնդիրները բազմակողմ են, դրանք էականորեն սպառնում են բնակչության առողջությանը, օրինական ձեռնարկատիրական գործունեությանը, վերջին հաշվով՝ երկրի ազգային անվտանգությանը:

Մեր պետությունն ուշադրության կենտրոնում է պահում թմրահանցավորության դեմ պայքարի հարցերը: Այդ մասին են վկայում Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի տարեկան ծրագրերի ընդունումը և դրանցով նախատեսված, այդ թվում՝ օպերատիվ-կանխարգելիչ և հատուկ միջոցառումների իրագործումը, միջազգային մակարդակով համագործակցությունը, ներառյալ՝ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների և Հավաքական անվտանգության պետությունների կազմակերպության անդամ պետությունների իրավապահ մարմինների (այսպես, 2003 թվականից Հավաքական անվտանգության պետությունների կազմակերպության անդամ պետությունների (Հայաստան, Ռուսաստանի Դաշնություն, Բելառուս, Ղազախստան, Ուզբեկստան, Դրոբդստան և Տաջիկստան) տարածքում յուրաքանչյուր տարի իրականացվում է «Կանալ» թմրամիջոցների դեմ պայքարի միջոցառումը), Հայաստանի Հանրապետությունում Ամերիկայի Միացյալ Նահանգների դեսպանատան թմրամիջոցների և իրավապահ համագործակցության գրասենյակի և այլ կառույցների հետ: Համագործակցության հիմքն է կազմում «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը և այլ ակտերը:

Այդուհանդերձ, վիճակագրական տվյալները վկայում են բացասական քրեաբանական միտումների մասին: Այսպես, վերջին տարիներին արձանագրվել է թմրահանցավորության աճ, ինչը վկայում է ինչպես կանխարգելման միջոցների ցածր արդյունավետության, այնպես էլ կանխարգելման նոր մոտեցումների մշակման անհրաժեշտության մասին:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է թմրահանցավորության քրեաբանական ասպեկտի ուսումնասիրությունը: Այս նպատակին հասնելու համար որպես հետազոտական խնդիր առաջադրվում է 2017–2022 թվականներին Հայաստանի Հանրապետությունում թմրահանցավորության վիճակի, շարժընթացի և կառուցվածքի, պատճառական համալիրի ուսումնասիրությունը, կանխարգելման միջոցների վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը:

Մեթոդը

Հետազոտության մեթոդաբանական հենքը կազմել են հասարակական գործընթացների և սոցիալ-իրավական երևույթների ճանաչողության համընդհանուր դիալեկտիկական մեթոդը, ինչպես նաև փորձագիտական գնահատականների մեթոդը, տվյալների քանակական և որակական վերլուծության մեթոդները, այդ թվում՝ բովանդակային վերլուծությունը:

Հետազոտության էմպիրիկ հենք են հանդիսացել ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական, կատարված հարցումների և փաստաթղթերի ուսումնասիրության միջոցով հավաքագրված տվյալները: Հարցումներին մասնակցել են ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության 128 ծառայող և Երևան քաղաքի, ինչպես նաև բոլոր մարզերի ընդհանուր թվով 332 բնակիչ: Որպես փորձագետ՝ ներգրավվել են ոստիկանության՝ հանցավորության դեմ պայքարի գործառնություններ իրականացնող 53 ծառայող և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի ինքնավար պաշտոն զբաղեցնող 47 անձի: Ուսումնասիրվել են համապատասխան քրեական գործերով 300 դատավճիռներ:

Հիմնական հետազոտությունը

1. Թմրահանցավորության վիճակը, շարժընթացը և կառուցվածքը 2017–2022 թվականներին

Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքները հավաստում են, որ հանցավորության կառուցվածքում թմրահանցավորությունն ունի համեստ տեսակարար կշիռ: Ի դեպ, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ ՆԳՆ) ոստիկանության տեղեկատվական կենտրոնի տվյալների համաձայն հանրապետությունում 2017 թվականին հանցագործությունների թիվը կազմել է 20 285, որից 2071-ը թմրամիջոցների հետ կապված հանցագործությունները (6,27 տոկոս): 2018 թվականին համապատասխանաբար՝ 22 551-ից 877 թմրահանցագործություն կամ 3 տոկոս, 2019 թվականին՝ 26 850 հանցագործություն, որից 1088-ը՝ թմրահանցագործություն (4,05 տոկոս), 2020 թվականին՝ 26 468 հանցանք, որից 1226-ը՝ թմրահանցագործություն (4,63 տոկոս), 2021 թվականին՝ 30 245 հանցանք, որից 1544-ը՝ թմրահանցագործություն (5,1 տոկոս), 2022 թվականին՝ 37 612 հանցանք, որից 2266-ը՝ թմրահանցագործություն (6,02 տոկոս): Այսպիսով, հանցավորության կառուցվածքում թմրահանցագործությունների միջին թիվը 2017–2022 թվականներին կազմել է 5 տոկոս (վիճակագրություն, ՀՀ ոստիկանություն):

Վերը նշված վիճակագրական տվյալների համաձայն՝ 2019 թվականից թմրահանցավորության շարժընթացը դրսևորել է աճի միտում, ինչը հատկապես ցայտուն է արտահայտվել 2022 թվականին, երբ գրանցվել է նաև կրկնահանցավորության աճ:

Թմրահանցավորության կառուցվածքում տեսակարար կշռով առաջատար է թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուր-

սորների ապօրինի իրացման դեպքերը: Այսպես, 2017 թվականին դրանց թիվը կազմել է 48,15 տոկոս, 2018-ին՝ 48,96 տոկոս, 2019-ին՝ 46,69 տոկոս, 2020-ին՝ 43,39 տոկոս, 2021-ին՝ 34,26 տոկոս, 2022-ին՝ 45,5 տոկոս (Վիճակագրություն, ՀՀ ոստիկանություն):

Ոստիկանության կայքէջում (police.am) տեղակայված ամփոփ հաշվետվությունների համաձայն՝ վերը նշված ժամանակահատվածում «ծանր» թմրամիջոցներից ափիոնը և մեթամֆետամինը հիմնականում ապօրինի ներկրվել են Իրանի Իսլամական Հանրապետությունից: Իրանից է ներկրվել նաև Հայաստանում սպառվող հաշիշ տեսակի թմրամիջոցի հիմնական մասը: Արձանագրվել են Եվրոպական երկրներից, մասնավորապես՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետությունից դեպի Հայաստան «բուպրենորֆին» և «MDMA» տեսակի թմրամիջոցների ներկրման դեպքեր:

Երբեմն թմրահանցագործությունները ձևավորում են համակցություն ինչպես միմյանց, այնպես էլ քրեական օրենքով պաշտպանվող այլ հարաբերությունների դեմ ուղղված հանցանքների հետ: Այսպես, տեսակային օբյեկտի առումով իրացնելու նպատակով թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը և ապօրինի իրացնելը հաճախ համակցվել է թմրամիջոցների մաքսանենգության, իսկ առանց իրացնելու նպատակով շրջանառությունը՝ թմրամիջոցները ցանելու և աճեցնելու հետ: Այլ օբյեկտների դեմ ուղղված հանցատեսակներից թմրամիջոցների ապօրինի շրջանառությունը հաճախ համակցություն է կազմել հրազենի ապօրինի շրջանառության հետ:

Վերջին ժամանակահատվածում ավելացել է երեխաների շրջանում որպես քաղցրավենիք ներկայացվող թմրամիջոցների քողարկված տարածման դեպքերի մասին ոչ պաշտոնական տեղեկատվությունը, ինչի մասին ահազանգում են նաև մեդիամիջոցները (Թմրանյութերի հյուրասիրում Գյումրու դպրոցներում...): Այսպես, նշվում է, որ երեխաներին փողոցում մոտենում են տարբեր անձինք և առաջարկում բալի, ելակի համով կոնֆետներ, որոնք պարունակում են տարբեր թմրամիջոցներ:

Որոշակի տեղեկատվություն է շրջանառվում նաև դպրոցներում թմրամիջոցների ապօրինի շրջանառության մասին: Այդուհանդերձ, անհրաժեշտ է շեշտել, որ սվյակ պահի դրությամբ այդ ուսումնական հաստատություններում թմրամիջոցների հայտնաբերման փաստ չի արձանագրվել (Հին թմրամոլները նոր թմրամիջոցները չեն օգտագործում...): Դա կարող է վկայել խնդրո առարկա հանցատեսակների բարձր լատենտայնության մասին:

Մասնագիտական գրականության մեջ (Ղարազյոզյան, 2016, էջ 16, Криминология, 2006, էջ 439) և պաշտոնական փաստաթղթերում (օրինակ՝ «Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2023 թվականի տարեկան ծրագիրը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 30.09.2022թ. N 1530-Լ որոշման հավելվածի 14-րդ կետ) պարբերաբար շեշտվում է այն հանգամանքը, որ բարձր է քննարկվող հանցագործությունների լատենտայնության մակարդակը: Դրա արդյունքն է՝

1. թմրահանցավորության իրական չափերի, պատճառված վնասի չափի

ու բնույթի գնահատման բարդությունը կամ անհնարինությունը, ինչը վերջին հաշվով բացասաբար է ազդում դրա դեմ պայքարի արդյունավետության վրա,

2. հանցագործության կատարումը պայմանավորող գործոնների բացահայտման և դրանց նկատմամբ ներգործության բարդացումը,

3. քրեական օրենքի կանխարգելիչ ազդեցության նվազումը,

4. թմրահանցավորության կանխատեսման և թմրահանցավորության դեմ պայքարի ծրագրերի մշակման հնարավորությունների էական սահմանափակումը,

5. թմրահանցավորության ինքնավերարտադրության աճը՝ կրկնահանցավորության հաշվին,

6. թույլ պաշտպանված և շրջապատող միջավայրի ազդեցության տակ դյուրին հայտնվող անձանց (անչափահասներ) ներգրավումը հակաիրավական արարքների կատարմանը, օրինակ՝ թմրամիջոցներ գործածելուն,

7. հասարակության մեջ իրավասու մարմինների կողմից իրավակարգի, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ ապահովման անկարողության մասին պատկերացման ձևավորումը և այլն (Իսրայելյան, 2020, էջ 61-63, Իսրայելյան, Հարությունյան, 2021, էջ 35-37):

2. Թմրահանցավորության պատճառական համալիրը

Ինչ վերաբերում է թմրահանցավորության պատճառական համալիրին, ապա, սոցիալական, տնտեսական, իրավական և ընդհանուր բնույթի այլ դետերմինանտներից գատ, այն պայմանավորում են հետևյալ գործոնները.

1. ՆԳՆ ոստիկանության պարեկային և այլ ծառայությունների աշխատանքի կազմակերպման գործում որոշ բացթողումները, ինչպես օրինակ՝ քննարկվող հանցագործությունների հավանական կատարման վայրերից պարեկային ծառայության երթուղիների մեծ հեռավորությունը, հետիոտն պարեկների կարգախմբերի քիչ քանակը, հանցագործությունների հավանական կատարման վայրեր, այդ թվում՝ գիշերային ակումբներ քրեական ոստիկանության և այլ համապատասխան ծառայությունների կողմից իրականացվող շրջայցերի սակավաթվությունը, անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ստորաբաժանումների դպրոցական ավագ տեսուչների պասիվությունը, թույլ համագործակցությունը ուսումնական հաստատությունների վարչակազմի և մանկավարժական կազմի հետ,

2. որոշ փողոցներում, այգիներում, թմրահանցանքների հավանական կատարման հասարակական այլ վայրերում լուսավորության բացակայությունը կամ անբավարարությունը, տեսանկարահանող սարքերի սակավաթվությունը,

3. քրեակատարողական հիմնարկներում ծառայության կազմակերպման թերությունները, որոնց արդյունքում թմրամիջոցներ և այլ նյութեր են փոխանցվում տարածք, ինչի մասին իմացվում է հետագայում՝ դրանք դատապարտյալների մոտ հայտնաբերելիս, իսկ իրացման հանգամանքները և իրացնող անձինք մեծ մասամբ չեն բացահայտվում,

4. գորամասերում, ծառայության իրականացման վայրերում գինձառա-

յողների նկատմամբ հսկողության թերությունները, ինչի արդյունքում նրանք անարգել հանցանք են գործում՝ թմրամիջոց ապօրինի իրացնում, խմբակային այն գործածում,

5. երբեմն իրավապահ մարմինների կադրերի ընտրության գործընթացի հանդեպ անհրաժեշտ ուշադրության պակասը, ինչի արդյունքում նրանց շարքերը համալրվում են հակաիրավական վարք դրսևորելու հակումներ ունեցող կամ նման վարք դրսևորող անձինք,

6. տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարվող թմրահանցագործությունների բացահայտման գերդժվարությունը, իրավապահ մարմինների տեխնիկական գինվածության և հնարավորությունների անբավարարությունը և այլն:

Մեր կողմից կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա բացահայտվել են թմրահանցավորության լատենտայնությունը պայմանավորող հետևյալ գործոնները.

1) թմրաշրջանառության մասնակիցների, հատկապես իրացնողի և ձեռքբերողի փոխադարձ հետաքրքրվածությունը գաղտնի պահել իրենց ապօրինի գործողությունները,

2) տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հանցավոր արարքների բարդ, քողարկված բնույթը, որը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հանցագործության կատարման փաստի հայտնաբերումը,

3) տուժողի, վկայի՝ հանցավորի կողմից վրեժխնդիր լինելու վախը,

4) ազգային մտածելակերպը, որի դրսևորումներից է տեղեկատվության փոխանցման դեպքում պատվազրկվելուց՝ «գործ տվողի» պիտակ կրելու վախը (տուժողից և վկայից զատ, սա բնորոշ է նաև հանցակիցներին, քանզի բռնված հանցավորները հաճախ չեն մատնում իրենց «գործընկերներին»),

5) տուժողի, վկայի թերահավատությունն առ այն, որ հանցագործությունը կբացահայտվի կամ պետությունը կարող է ապահովել իր անվտանգությունը,

6) տուժողի, վկայի անվստահությունը ոստիկանության նկատմամբ, մտավախությունը, որ փոխանցված տեղեկատվությունը կմնա անհետևանք,

7) իրավագիտակցության թերությունները. երբեմն տուժողը, վկան գտնում են, որ արարքը հանցավոր չէ կամ հանցագործությունն էական վնաս չի պատճառել, որ դրա մասին հայտնեն,

8) հետագա վարության թաշտուկից, վկայի դատավարական կարգավիճակ ստանալուց խուսափելը,

9) վկայի բացարձակ անտարբերությունը նկատած հանցադեպերի հանդեպ,

10) սեփական ուժերով հանցավորին հայտնաբերելու ձգտումը և այլն:

3. Թմրահանցավորության կանխարգելումը

Թմրահանցավորության, ներառյալ՝ դրա լատենտային մասի կանխարգելման նպատակով առաջարկում ենք իրականացնել կազմակերպական բնույթի հետևյալ միջոցառումները.

1. ՆԳՆ իրավասության ոլորտում՝

1) ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության երթուղիները հնարավորինս մոտեցնել քննարկվող հանցագործությունների կատարման հավանական վայրերին, ավելացնել հետիոտն պարեկների կարգախմբերը,

2) ՆԳՆ համապատասխան ծառայությունների կողմից պարբերաբար իրականացնել շրջայցեր քննարկվող հանցագործությունների կատարման հավանական վայրեր, այդ թվում՝ գիշերային ակումբներ,

3) ակտիվացնել ՆԳՆ ոստիկանության անչափահասների իրավունքների պաշտպանության և ընտանեկան բռնության դեմ պայքարի ստորաբաժանումների դպրոցական ավագ տեսուչների գործունեությունը, ոստիկանության տարբեր ստորաբաժանումների ուժերով ուսումնական հաստատություններում պարբերաբար կատարել շրջայցեր, սերտորեն համագործակցել վարչակազմի և մանկավարժական կազմի հետ,

4) խիստ ուշադրություն դարձնել ոստիկանությունում աշխատելու համար կադրերի ընտրության գործընթացին, մանրակրկիտ ստուգել թեկնածուներին,

5) հաղթահարել ոստիկանության մարմինների ծառայողների ցածր մասնագիտական պատրաստականության և փորձի բացակայության գործոնները, ակտիվացնել վերապատրաստման գործընթացը, ապահովել թեմատիկ ուղղվածությունը, հատկապես՝ տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով հանցագործությունների կատարման վերաբերյալ տեղեկատվության հաղորդումը և գիտելիքների զարգացումը, պարբերաբար անցկացնել ատեստավորումներ, կատարելագործել նաև ուսուցման ու վերապատրաստման մեթոդները,

6) իրավասու մարմիններին առաջարկել ապահովելու լուսավորություն հասարակական այն վայրերում, որտեղ դա բացակայում է կամ բավարար չէ, տեղադրելու տեսանկարահանող սարքեր,

7) կիրառել նյութական խրախուսման միջոցներ՝ դեպք հայտնաբերող ոստիկանության ծառայողների կամ տեղեկատվություն տվող քաղաքացիների համար սահմանել պարգևավճար,

2. Քրեակատարողական ծառայության իրավասության բնագավառում՝

1) քրեակատարողական հիմնարկներում ուժեղացնել հսկողությունը, պարբերաբար իրականացնել կանխարգելիչ միջոցառումներ,

2) հաղթահարել քրեակատարողական ծառայողների ցածր մասնագիտական պատրաստականության և փորձի բացակայության գործոնները,

3. Պաշտպանության նախարարության իրավասության բնագավառում՝

1) զինված ուժերի զորամասերում, ծառայության իրականացման վայրերում ուժեղացնել զինծառայողների նկատմամբ հսկողությունը,

2) զինծառայողների շրջանում ակտիվացնել դաստիարակչական աշխատանքները,

4. Պետական եկամուտների կոմիտեի իրավասության բնագավառում՝

1) բարձրացնել մաքսային հսկողության որակը,

2) ուշադրության կենտրոնում պահել մաքսային համակարգում աշխատելու համար կադրերի ընտրության գործընթացը,

3) գործող ծառայողների համար խնդրո առարկա թեմատիկայով պար-

բերաբար իրականացնել վերապատրաստումներ,

5. Իրավապահ համակարգի համապատասխան կառույցների գործունեության արդյունավետության բարձրացման ուղղությամբ՝

1) Լուծել իրավապահ մարմինների անբավարար տեխնիկական զինվածության հարցը:

Տեղեկատվության և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործմամբ թմրահանցատեսակների հայտնաբերումն ու բացահայտումն առանց բավարար տեխնիկական միջոցների կամ մեխանիզմների բավականին դժվար է կամ անհնարին: Ուստի ակնհայտ է իրավապահ մարմինների տեխնիկական հագեցվածության և հասանելիության հարցի լուծման կարևորությունը:

2) Իրագործել իրավապահ մարմինների հետ բնակչության համագործակցությանը նպաստող միջոցներ:

Այս ուղղությամբ հնարավոր է չեզոքացնել լատենտային թմրահանցավորությանը նպաստող հետևյալ գործոնները.

ա) Հանցավորի կողմից վրեժխնդիր լինելու վախի գործոնը

Սա հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդկանց մեծամասնությունը տեղեկատվություն չունի քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության միջոցների մասին: Ուստի անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 9-րդ գլխով նախատեսված վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանության դրույթների լուսաբանումը մեդիամիջոցներով:

բ) Իրավապահ մարմիններին չդիմելը՝ կատարվածը հանցադեպ չդիտարկելով կամ հանցանքը ոչ էական համարելով կամ ուղղակի անտարբերություն դրսևորելով կամ հանցավորին ինքնուրույն հայտնաբերելու ձգտմամբ

Այս ուղղությամբ անհրաժեշտ է ծավալել նպատակաուղղված իրավական քարոզչություն՝ օգտագործելով մեդիայի տարբեր միջոցների հնարավորությունները: Սոցիալ-քաղաքական ակտիվության, երկրում քրեաբանական իրադրության համար բնակչության պատասխանատվության զգացման ձևավորումը ենթադրում է նրանց համոզումն և առ այն, որ իրավասու մարմիններին հանցագործությունների մասին հայտնելն անհրաժեշտ է: Այդպիսի քարոզչության ազդեցության տակ պետք է ձևավորվի այն մասին համոզումն, որ իրենց և այլոց շահերին ուղղված թմրահանցագործությունների մասին տեղեկատվություն թաքցնելն օբյեկտիվորեն նպաստում է հանցավորների մոտ կայուն հակահասարակական ուղղվածության և հանցավոր գործունեությունը շարունակելու հնարավորության համոզվածության ձևավորմանը: Դա էլ հանգեցնում է թմրահանցավորության ինքնավերարտադրությանը, տարածմանը, ինչը թույլ է տալիս ներթափանցել հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ արդյունքում էապես վնասելով բնակչության առողջությանը: Ոստիկանությունը, դպրոցը, այլ սուբյեկտները պետք է մասնակցեն իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, սերտորեն համագործակցեն թմրահանցավորության դեմ պայքարում: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է միջոցների համակարգ, որոնց կենսագործմանը կմասնակցեն ինչպես իրավապահ մարմինները, այնպես էլ բնակչությունը (Кривенцов, 2014, էջ 127-130):

Իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության հանդեպ թյուրահավատության հաղթահարումը կարող է դրսևորվել իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության անհատական գնահատականի որակական փոփոխությամբ: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ մեդիամիջոցներով ցանկացած քարոզչությունը, առանց թմրահանցավորության դեմ պայքարի իրական ակտիվացման, միայն կվատթարացնի մարդկանց վերաբերմունքն իրավապահ մարմինների նկատմամբ: Ուստի պետք է համադրվեն իրավապահ մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման և այդ մասին բնակչության իրազեկման աշխատանքները: Բնակչի հոգեբանությունը ոչ միայն կախված է իրավապահ մարմինների գործունեության արդյունավետությունից, այլև դրա մասին տեղեկացումից: Որքան բարձր է իրավապահ մարմինների նկատմամբ բնակչության վստահությունը, այնքան թուլանում է լատենտայնությունը պայմանավորող գործոնների ազդեցությունը: Ոստիկանությունը պետք է արձագանքի կատարված թմրահանցագործությունների մասին տեղեկատվությանն այնքան ակտիվ և արագ, որքան թույլ են տալիս հանգամանքները՝ չմոռանալով բարեհամբուրության և ուշադրության մասին: Դրա արդյունքում ոստիկանության և բնակչության միջև հեռավորությունը կկրճատվի: Միաժամանակ անհրաժեշտ է իրավապահ մարմինների կողմից լուրջ քարոզչական աշխատանք տանել, որը կնպաստի քաղաքացիների իրավական գրագիտության մակարդակի բարձրացմանը, ինչը թույլ կտա ճիշտ գնահատական տալ թմրահանցագործություններին (Кривенцов, 2014, էջ 127–130):

Կարևոր խթան կարող է հանդիսանալ նաև վստահության հեռախոսակապի հնարավորության ստեղծումը, որը թույլ կտա ստանալ թմրահանցագործությունների մասին տեղեկատվություն:

Եզրակացություն

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքները հանգում են հետևյալին.

1. 2019 թվականից արձանագրվել է թմրահանցավորության աճ: Դա հատկապես վառ է արտահայտվել 2022 թվականին, երբ գրանցվել է նաև կրկնահանցավորության աճ: Չնայած այն հանգամանքին, որ հանցավորության կառուցվածքում թմրահանցավորության միջին թիվը 2017–2022 թվականներին կազմել է ընդամենը 5 տոկոս, սակայն, մեր կարծիքով, դա խնդրո առարկա հանցատեսակների բարձր լատենտայնության արդյունքն է:

2. Սոցիալական, տնտեսական, իրավական և ընդհանուր բնույթի այլ գործոններից զատ, թմրահանցավորության պատճառական համալիրն ընդգրկում է նաև մի շարք կազմակերպական բնույթի գործոններ՝ ՆԳՆ ոստիկանության պարեկային և այլ ծառայությունների աշխատանքի կազմակերպման, կադրային ապահովման գործընթացում բացթողումները, տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների միջոցով կատարվող թմրահանցագործությունների բացահայտման գերդժվարությունը, իրավապահ մարմինների տեխնիկական զինվածության և հնարավորությունների

անբավարարությունը և այլն:

Ինչ վերաբերում է թմրահանցավորության լատենտայնությունը պայմանավորող գործոններին, ապա դրանց թվին են դասվում՝ թմրաշրջանառության մասնակիցների, հատկապես իրացնողի և ձեռքբերողի փոխադարձ հետաքրքրվածությունը գաղտնի պահել իրենց ապօրինի գործողությունները, տեղեկատվության և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ իրականացվող հանցավոր արարքների բարդ, քողարկված բնույթը, որը դժվարացնում է իրավապահ մարմինների կողմից հանցագործության կատարման փաստի հայտնաբերումը, տուժողի, վկայի՝ հանցավորի կողմից վրեժխնդիր լինելու վախը, ազգային մտածելակերպը, որի դրսևորումներից է տեղեկատվության փոխանցման դեպքում պատվազրկվելուց՝ «գործ տվողի» պիտակ կրելու վախը և այլն:

3. Թմրահանցավորության կանխարգելման համար անհրաժեշտ է մի շարք միջոցառումների իրականացում, ինչպես օրինակ՝ ՆԳՆ ոստիկանության պարենկային և այլ ծառայությունների աշխատանքի կազմակերպման, կադրային ապահովման գործընթացում բացթողումների շտկումը, իրավապահ մարմինների տեխնիկական զինվածության և հնարավորությունների ընդլայնման հարցի լուծումը և այլն: Առաջարկվել են նաև լատենտային թմրահանցավորության կանխարգելման միջոցներ:

Օգտագործված գրականության ցանկ

«Թմրամիջոցների, հոգևերգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիր, ընդունվել է 30.11.2000թ.:

«Հայաստանի Հանրապետությունում թմրամոլության և թմրամիջոցների ապօրինի շրջանառության դեմ պայքարի 2023 թվականի տարեկան ծրագիրը հասարակելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության N 1530-Լ որոշում, ընդունվել է 30.09.2022թ.:

Իսրայելյան, Գ.Վ., Հարությունյան, Ա.Ս. (2021). *Լատենտային հանցավորության կանխարգելման արդի խնդիրները Հայաստանի Հանրապետությունում*: Մենագրություն /Գ.Վ. Իսրայելյան, Ա.Ս. Հարությունյան. – Եր.: Հեղ. հրատ.:

Իսրայելյան, Գ.Վ. (2020): *Քրեաբանություն: Ընդհանուր դրույթներ*: Ուսումնական ձեռնարկ /Գ.Վ. Իսրայելյան: Երևան, Հեղ. հրատ.:

Ղարաբյոզյան, Ժ.Պ. (2016): *Թմրամոլության դեմ պայքարի քրեաիրավական և քրեաբանական հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)*: Ի.գ.թ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր: Երևան: Թմրանյութերի հյուրասիրում Գյումրու դպրոցներում՝ կոնֆեյրների, մասպակի տեսքով: Ահազանգում է ավագանու ՀՀԿ խմբակցության ղեկավարը // <https://www.aravot.am/2023/03/24/1330825/> (վերջին մուտք՝ 09.06.2023):

Հին թմրամոլները նոր թմրամիջոցները չեն օգտագործում, դրանով է բացառվում թմրամոլության երկրասարդացումը
<https://hraparak.am/post/1f7b6b9b0b8e29532842c0ef477c3fc8> (վերջին մուտք՝

09.06.2023):

Վիճակագրություն: Հայաստանի Հանրապետության ոստիկանություն: <https://police.am/fight-against-drug-trafficking/statistics1.html>

Криминология: Учебник для вузов (2006), /под ред. проф. В.Д. Малкова – 2-е изд., перераб. и доп. – М.: ЗАО «Юстицинформ».

Кривенцов, П.А. (2014). *Латентная преступность в России: криминологическое исследование*. Дисс. ... канд. юрид. наук. Специальность 12.00.08 – уголовное право и криминология; уголовно-исполнительное право. Научный руководитель: кандидат юридических наук, доцент Королева М.В., Москва.

References

«*Tmramijocneri, hogenergortsogh nyuteri ev baghadrichneri aporini shrjanarutyuan dem payqarum Ankakh Petutyunneri Hamagortsakcutyan masnacic petutyunneri hamagortsakcutyan masin*» *hamadzaynagir* [Agreement „On the cooperation of the states of the Commonwealth of Independent States in the fight against illegal trafficking of narcotics, psychoactive substances and components“], yndunvel e 30.11.2000t. (In Arm.)

«*Hayastani Hanrapetutyunum tmramolutyuan ev tmramijocneri aporini shrjanarutyuan dem payqari 2023 tvakani tarekan tsragiry hastatelu masin*» *Hayastani Hanrapetutyuan karavarutyuan N 1530-L voroshum* [„On approving the 2023 annual plan to combat drug addiction and illegal drug trafficking in the Republic of Armenia“ of the Government of the Republic of Armenia N 1530- L decision], yndunvel e 30.09.2022t. (In Arm.)

Israyelyan, G.V., Harutyunyan, A.S. (2021). *Latentayin hancavorutyuan kankhargelman ardi khndirneri Hayastani Hanrapetutyunum* [Current issues of latent crime prevention in the Republic of Armenia]. Menagrutyun /G.V. Israyelyan, A.S. Harutyunyan. – Yer.: Hegh. hrat. (In Arm.)

Israyelyan, G.V. (2020) *Qreabanutyun: Yndhanur druytner* [Criminology. General Provisions]. Usumnakan dzernark /G.V. Israyelyan: Yerevan, Hegh. hrat. (In Arm.)

Kharagyozyan, J.P. (2016) *Tmramolutyuan dem payqari qreairavakan ev qreabanakan himnakhndirneri (iravahamematakan verlutsutyun)* [Criminological and criminological basic problems of combating drug addiction (legal comparative analysis)]. I.g.t. gitakan astichani haycman atenakhosutyuan seghmagir: Yerevan. (In Arm.)

Tmramijocneri hyurasirum Gyumru dprocnerum konfetneri, mastakneri tesgov [Treating drugs in Gyumri schools in the form of candies, chewing gum]. Ahazangum e HHK khmbakcutyan ghekvary // <https://www.aravot.am/2023/03/24/1330825/> (accessed: 9.06.2023) (In Arm.)

Hin tmramolnery nor tmramijocnery chen ogtagortsum, dranov e bacatrvm tmramolutyuan eritasardacumy [Old drug addicts do not use new drugs, this explains the rejuvenation of drug addiction],

<https://hraparak.am/post/1f7b6b9b0b8e29532842c0ef477c3fc8> (accessed: 09.06.2023). (In Arm.)

Statistics. *Police of the Republic of Armenia*. <https://police.am/fight-against-drug-trafficking/>

[statistics1.html](#) (In Arm.)

Kriminologiya: Uchebnik dlya vuzov [Criminology: Textbook for universities] (2006). /pod red. prof. V.D. Malkova – 2-e izd., pererab. i dop. – M.: ZAO «Yustichinform». (In Rus.)

Krivencov, P.A. (2014). *Latentnaya prestupnost v Rossii: kriminologicheskoe issledovanie* [Latent crime in Russia: criminal investigation]. Diss. ... kand. jurid. nauk. Specialnost 12.00.08 – ugovnoe pravo i kriminologiya; ugovno–ispolnitelnoe pravo. Nauchny rukovoditel: kandidat juridicheskikh nauk, docent Koroleva M.V., Moskva. (In Rus.)

Геворг Исраелян

Начальник Научно-исследовательского центра прикладных проблем криминологии Национального бюро экспертиз Национальной академии наук Республики Армения, преподаватель Международного университета Евразия, кандидат юридических наук, доцент
Эл. адрес: gevorg.israelyan@eiu.am

КРИМИНОЛОГИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА И ВОПРОСЫ ПРЕДУПРЕЖДЕНИЯ НАРКОПРЕСТУПНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Несмотря на принимаемые в Республике Армения меры по борьбе с наркопреступностью, отмечаются негативные криминологические тенденции: с 2019 года наблюдается рост наркопреступности, что свидетельствует о малоэффективности предупредительных мер и необходимости комплексного криминологического исследования и формирования нового подхода по предупреждению наркопреступности.

В рамках данного исследования автор рассмотрел криминологическую характеристику наркопреступности за период 2017–2022 годов, выявил последствия латентности и определил причинный комплекс. На основе этих данных предложены меры по предупреждению наркопреступности. В частности, автор предлагает следующие организационные меры: обеспечить периодические рейды по вероятным местам совершения обсуждаемых преступных действий, увеличить число пеших нарядов патрульной службы полиции; активизировать деятельность старших школьных инспекторов, осуществлять регулярные посещения учебных заведений с помощью различных подразделений полиции, тесно сотрудничать с администрацией и педагогическим составом; усилить контроль в исправительных учреждениях, регулярно проводить профилактические мероприятия; в воинских частях, по месту несения службы, усилить надзор за военнослужащими в целях недопущения употребления ими наркотических средств, уделять пристальное внимание процессу подбора кадров для работы в полиции, тщательно проверять кандидатов; преодолеть факторы низкой профессиональной подготовки у сотрудников полиции, активизировать процесс переподготовки,

обеспечить совершенствование методов обучения и переподготовки и т.д.

Ключевые слова: наркопреступность, криминологическая характеристика, латентность, причинный комплекс, предупреждение.

Gevorg Israyelyan

Head of the Scientific Research Center of Applied problems in criminology of National Bureau of Expertise of National Academy of Sciences of the Republic of Armenia, Lecturer of the Law Department at Eurasia International University, Ph.D. in Law, Associate Professor, Email: gevorg.israyelyan@eiu.am

CRIMINOLOGICAL CHARACTERISTICS AND ISSUES OF DRUG CRIME PREVENTION IN THE REPUBLIC OF ARMENIA

Despite the fact that appropriate measures are being taken in the Republic of Armenia to combat drug crime, negative criminological trends are being recorded: since 2019, there has been an increase in drug crime, which indicates the ineffectiveness of preventive measures and the need for comprehensive criminological research and the formation of a new approach to drug crime prevention.

Despite the fact that appropriate measures are being taken in the Republic of Armenia to combat drug crime, negative criminological trends are being recorded: since 2019, there has been an increase in drug crime, which indicates the ineffectiveness of preventive measures and the need for comprehensive criminological research and the formation of a new approach to drug crime prevention.

The author revealed the criminological characteristics of drug crime for 2017–2022, the consequences of latency, the causal complex, on the basis of which measures to prevent drug crime are presented. In particular, the author suggests the following organizational measures: to ensure periodic raids on the likely places of commission of the criminal acts under discussion, to increase the number of foot patrol squads of the Police Patrol Service; to intensify the activities of senior school inspectors, to carry out regular visits to educational institutions with the help of various police units, to collaborate closely with educational staff, to strengthen control in penitentiary institutions, to regularly carry out preventive measures in military units, at the place of service, to strengthen supervision of military personnel in order to prevent their use of narcotic drugs, meticulous scrutiny of the police recruitment process, addressing factors contributing to the low professional training of police officers, and an emphasis on retraining processes.

Keywords: drug crime, criminological characteristics, latency, causal complex, prevention.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. հունիսի 23-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. հուլիսի 3-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. օգոստոսի 18-ին:

Զավեն Սմբատյան

*Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության բաժնի պետ, Հայաստանում Եվրոպական համալսարանի հայցորդ
Էլ. հասցե՝ zaven.smbatyan@yerevan.am*

DOI: 10.53614/18294952-2023.2-21

ՎԱՐՉԱԿԱՆ ԱԿՏԻ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՇԱՃ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Հոդվածում քննարկվում են վարչական ակտի՝ որպես ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության ինստիտուտի արդյունավետ կենսագործման արդյունքի էությունն ու նշանակությունը:

Սույն ուսումնասիրության նպատակը իրավական հետազոտության հիման վրա իրավաչափ վարչական ակտի՝ որպես վարչական մարմինների պատշաճ վարչարարության երաշխավորման արդյունքի, և դրա օրինականության վերաբերյալ միասնական դատողությունների ամրագրումն է, ինչպես նաև տեսական և գործնական փորձի հիման վրա առավել արդյունավետ և հատկանշական կարգավորումների խարսխումը ՀՀ գործող օրենսդրական դաշտում:

Սույն ուսումնասիրության գործնական նշանակությունը նրանում է, որ վարչարարության ինստիտուտի սահմանադրաիրավական և վարչաիրավական ընկալումների տարանջատման և Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի առաջարկության քննարկման արդյունքում, պատշաճ վարչարարության տարրերի բացահայտման և գնահատման հիման վրա, ձևակերպվել են միասնական ընկալումները և լավարկվել են առկա կարգավորումները:

Հիմնաբառեր. վարչական ակտ, պատշաճ վարչարարություն, օրինականություն, ողջամիտ ժամկետ, իրավունք, անաչառություն:

Ներածություն

The limitation of state power through the principle of checks and balances is manifested in a unique way in a republic with a form of **parliamentary government**. Despite the fact that the presidential and semi-presidential forms of government continue to predominate in the world, however, in the last decade, the growth of states that have switched to the parliamentary form of government has been observed. Famous parliamentary republics are Italy, Germany, Austria, Switzerland, Ireland, Iceland, Greece, India, Israel, Lebanon, Lithuania, Latvia, Estonia, Georgia, Armenia and several other countries.

It should be noted, **that a republic with a parliamentary form of government** differs from **republics with a presidential and semi-presidential form of government**. First of all, it is the parliament, that forms the government, which is fully accountable to the parliament. Moreover, the president of the country is elected by the parliament, or by a special collegium established on the basis of the parliament. According to part 3 of the Article 89 of the Constitution of RA, the National Assembly shall be elected through a proportional electoral system and the Electoral Code shall guarantee the formation of a stable parliamentary majority. Moreover, Article 149 of the Constitution of RA emphasizes, that immediately after the commencement of the term of powers of the newly-elected National Assembly, the President of the Republic shall appoint as Prime Minister the candidate nominated by the parliamentary majority formed under the procedure prescribed by Article 89 of the Constitution (Constitution of the Republic of Armenia).

As for the veto right of the president, there are also certain subtleties in the

case of a parliamentary republic. In our opinion, the head of state in a parliamentary republic is officially endowed with significant powers, but in practice has almost no influence on the exercise of state power. Any action by the president, including the dissolution of parliament or the use of a veto, is carried out with the consent of the government in some countries. In some cases, normative acts presented by the President gain legal force only after they are ratified by the relevant minister, who is responsible for them. For instance, the Article 129 of the Constitution of RA states: “The President of the Republic shall sign and promulgate a law adopted by the National Assembly within a period of twenty-one days, or shall apply within the same time period to the Constitutional Court for the purpose of determining the compliance of the law with the Constitution. In case the Constitutional Court decides that the law complies with the Constitution, the President of the Republic shall sign and promulgate the law within a period of five days. In case the President of the Republic fails to fulfill the requirements prescribed by this Article, the Chairperson of the National Assembly shall sign and promulgate the law within a period of five days” (Constitution of the Republic of Armenia).

The conducted research shows that the most flexible form of government is a mixed (semi-presidential) republic, which is an average option between a presidential and a parliamentary republic. Traditionally, it is considered that the main attribute of a mixed republic is, on the one hand, the real possibility of the parliament expressing no confidence in the government, and on the other hand, the right of the president to dissolve parliament. Despite the presence of this basic criterion, the semi-presidential republic does not have a specific list of features and a single format, but they are able to mitigate the institutional shortcomings of the classical republics – presidential and parliamentary.

Considering the peculiarities of the **activity of the legislative body** in the context of the principle of separation of powers, and the legal limitation of state power, it can be stated that the legislative initiative should be based on the adoption of laws that meet the interests of society and the state, based on the principles of humanism and justice.

Bezrukov A.V. rightly pointed out, that the principle of separation of powers in a modern democratic rule-of-law state clarifies the purpose of the law, which is the establishment of general rules of conduct and the implementation of which is often entrusted to the branches of government of the states (Bezrukov, 2018, p. 60).

Meanwhile, the constitutional and legal practices of developed countries in the recent period indicate a tendency to strengthen the law-making activity of **the executive power**, which is related to the delegation of certain functions by the parliament (legislative power) to the executive power. Moreover, in modern democratic, legal states, the culture of the distribution of law-making activity between the legislative and executive authorities has mainly been formed, according to which the first should solve general issues, and the second should specify the provisions of the by-law. However, the legislative power is not satisfied

with this, and in many countries, the Parliament has the right to authorize the executive branch to carry out legislative activities for a certain period of time and on specific issues.

It should be noted that Parliament's right **to delegate** is generally enshrined in the Constitution rather than in current legislation. As we have already noted, the Article 109 of the Constitution of RA, stipulates that along with a faction of the National Assembly, a deputy, the Government also has the right to legislative initiative (Constitution of the Republic of Armenia)

The experience of Canada is noteworthy, where the legislature also delegates part of the legislative initiative to the executive branch. At the same time, since 1971, there has been a special Committee (Standing Joint Committee for the Scrutiny of Regulations) created by members of the two chambers of the Parliament. The main function of this committee is to monitor the legal validity of bills and legal acts adopted by the executive body, to check their compliance with the Constitution and laws (Zakonodatel'nyy protsess v zarubezhnykh stranakh: ucheb. posobiye[Legislative process in foreign countries: textbook], 2012).

Considering the role of the judiciary in the system of separation of powers, it should be noted, that, there is an opinion that when federal courts adjudicate separation of powers cases, they are not simple arbitrators of the separation of powers. Thus, by resolving the case, the federal courts become participants in the separation of powers (Ahdout, 2023). Moreover, the activity of **the Constitutional Court** can also be considered as a deterrent, since this court has the right to block all unconstitutional acts. The legislator in his actions is limited to other means established in the Constitution and in other normative acts.

The main activity of the Constitutional Court is reduced to constitutional control – checking for compliance with the Constitution of various acts at the federal and regional levels. He also determines the competence of the authorities, participates in the impeachment of the President, and the referendum, interprets the Constitution and some countries (Russia, Paraguay, Ecuador, Brazil, Venezuela, Bolivia, etc.) have the right of legislative initiative. (Zmievsky, 2021)

Conclusion

Based on the conducted research, we have come to the following conclusions:

The implementation of the principle of separation of powers and the checks and balances system does not violate the integrity and unity of state power.

The principle of separation of powers into legislative, executive and judicial, as one of the elements of the system of limiting state power, means that each of the branches acts independently, without interfering with the powers of the other.

The implementation of the principle of separation of powers is possible and effective only when accompanied by a system of “checks and balances”. It prevents attempts to usurp the powers of one government by another and ensures the normal functioning of State bodies. Checks and balances system allows each branch of a government to amend, override, or veto acts of another branch in

order to prevent any one branch of a government from exerting too much power or power beyond its authority.

The legal limitation of state power of the parliament is manifested by the prohibition of the adoption of discriminatory laws against the legislative body that violates the rights of individuals, groups, or minorities in the given state. Moreover, the legislative power is also limited by a highly coordinated legislative process, with clear stages of adoption of the draft law, which is combined with the use of legal techniques.

Conducted research shows, that the restriction of state power through the mechanism of checks and balances in a parliamentary republic is more pronounced, since, in fact, the parliament, on the one hand, restrains the government and is in the hands of the president.

References

- Ahdout, P. (2023). Separation-of-Powers Avoidance. *Yale Law Journal*, Vol. 132(Issue 8), pp. 2360–2413. (In Eng.)
- Bati, A., & Varghese, N. S. (2023). Separation of powers. *International Journal of New Technologies and Innovation Research*, Vol.10(Issue 5), pp. 656–664. (In Eng.)
- Baykin, I. M. (2010). Sovremennyy vzglyad na problemu teorii razdeleniya vlastey SH.L. Montesk'ye [Amodern view on the problem of the theory of separation of powers Sh.L. Montesquieu]. *Sovremennoye pravo*, № 7, 11–17. (In Russ.)
- Bezrukov, A. V. (2015). *Parlamentskoye pravo i parlamentskiye protsedury v Rossii. Ucheb. posobiye. [Parliamentary law and parliamentary procedures in Russia. Textbook allowance]*. M.: Justitsinform. (In Russ.).
- Black's Law Dictionary. (2004). Ed. Garnier B. A., 8th ed, Dallas. Thomson Reuters. (In Eng.)
- Chirkin, V. A. (2020). Osobennosti pravovogo printsipa «Razdeleniya vlastey» [Features of the legal principle of “Separation of powers”]. *Yuridicheskaya tekhnika [Legal technology]*, No. 14, pp. 348–351. (In Russ.).
- Fomichev, A. V., Komarov, M. V., & Komarov, Y. S. (2021). Osobennosti vzaimodeystviya parlamenta s glavoy gosudarstva i pravitel'stva v ramkakh prezidentskoy (SSHA) i smeshannoy (Frantsiya, Rossii) modeley respublikanskoy formy pravleniya. [Peculiarities of interaction between parliament and the head of state and government within the framework of the presidential (USA) and mixed (France, Russia) models of the republican form of government]. *The Scientific Heritage.*, № 62, pp. 39–44. (In Russ.).
- Kazanchian, L., & Zaqaryan, A. (2023). Some features of the manifestation of legal limitation of state power. *BULWARK OF LAW*, №1, pp. 143–152. (In Eng.)
- Lawrence, M. B. (2021). Subordination and Separation of Powers. *Yale Law Journal*, Vol.131(Issue 1), pp. 82–152. (In Eng.)
- Laws, J. (2021). *The Constitutional Balance*. Oxford: Hart Publishing. (In Eng.)
- Mal'ko, A. V. (2003). *Stimuly i ogranicheniya v prave. [Incentives and restrictions in law]*. M.: Yurist, (In Russ.).
- Marchenko, M. N. (2015). *Problemy obshchey teorii gosudarstva i prava. Uchebnik v 2 t.*

- [*Problems of the general theory of state and law. Textbook: in 2 volumes*]. 2nd, ed. M.: Prospekt (In Russ.).
- Melekhin, A. V. (2007). *Teoriya gosudarstva i prava. Uchebnik. [Theory of State and Law. Textbook]*. M.: Market DS. (In Russ.).
- Milusheva, T. V. (2011). *Predely deyatel'nosti gosudarstvennoy vlasti v Rossii: voprosy teorii i praktiki [The limits of the activities of state power in Russia: issues of theory and practice]*. Saratov. (In Russ.): Saratov State Law Academy.
- Miryayeva, Z. A. (2021). Razdeleniye vlastey v Soyedinennykh Shtatakh Ameriki [Separation of powers in the United States of America]. *Elektronnyy nauchnyy zhurnal «Nauka. Obshchestvo. Gosudarstvo» [Electronic scientific journal «Science. Society. State»]*, Vol. 9, № 1 (33), pp. 38–44. (In Russ.).
- Partlett, W. (2023). Separation of Powers. *Elgar Encyclopedia of Comparative Law (3rd ed)*, pp. 1–8. (In Eng.)
- Pfersmann, O. (2004). Ponyatiye razdeleniya vlastey i problema “vlasti vo vlasti” [The concept of separation of powers and the problem of “power in power”]. *The concept of Konstitutsionnoye pravo: vostochnoyevropeyskoye obozreniye [Constitutional Law: Eastern European Review]*, 2(47), pp. 44–49 (In Russ.).
- Stanskikh, S. N. (2005). K kakoy vetvi vlasti prinadlezhit prokuratura: opyt Konstitutsionnogo Suda Pridnestrovsakoy Moldavskoy Respubliki [Which branch of government does the prosecutor's office belong to: the experience of the Constitutional Court of the Pridnestrovian Republic]. *Konstitutsionnoye i munitsipal'noye pravo [Constitutional and municipal law]*, 8, pp. 39–45. (In Russ.).
- The Constitution of India. (adapted on 26.11.1949, last amend. 15.09.2021). <https://legislative.gov.in/constitution-of-india/> (accessed on 10.09.2023). (In Eng.).
- The Constitution of the Republic of Armenia. (adopted on 05 July 1995, with amendments approved on 06 December 2015). URL: <https://www.president.am/ru/constitution-2015/> (accessed 10.09.2023). (In Eng.).
- The Constitution of Virginia. (adapted on June 26, 1776). URL: <https://law.lis.virginia.gov/constitution/article3/section1/> (accessed 10.09.2023). (In Eng.).
- Wex legal dictionary and encyclopedia. (2023, August 24). Separation of powers. URL: <https://www.law.cornell.edu/wex> (accessed 10.09.2023). (In Eng.).
- Zakonodatel'nyy protsess v zarubezhnykh stranakh: ucheb. posobiye [Legislative process in foreign countries: textbook]*. (2012). Pod red. YU.I. Leybo. M.: MGIMO Universitet (In Russ.).
- Zmievsy, D. V. (2021). Pravo zakonodatel'noy initsiativy v sisteme polnomochiy konstitutsionnogo suda Rossiyskoy Federatsii [The right of legislative initiative in the system of powers of the constitutional court of the Russian Federation]. *Oeconomia et Jus.*, №4, 46–52. (In Russ.).

Օգտագործված գրականության ցանկ

- Ahdout, P. (2023). Separation-of-Powers Avoidance. *Yale Law Journal*, Vol. 132(Issue 8), 2360–2413.
- Bati, A., & Varghese, N. S. (2023). Separation of powers. *International Journal of New Tech-*

- nologies and Innovation Research, Vol.10(Issue 5), 656–664.*
- Байкин, И.М. (2010). Современный взгляд на проблему теории разделения властей Ш.Л. Монтескье. Современное право. М.: Новый Индекс. № 7. С. 11–17.
- Безруков, А. В. (2018). *Парламентское право и парламентские процедуры в России*. Учеб. пособие. М.: Юстицинформ.
- Black's Law Dictionary. (2004). Ed. Garner B. A., 8th ed, Dallas. Thomson Reuters. (In Eng.)
- Чирякин, В. А. (2020). Особенности правового принципа «Разделения властей» *Юридическая техника*. 2020. №14. Р.348–351.
- Constitution of Virginia. (б.д.). *Co(adapted on June 26,1776) URL: <https://law.lis.virginia.gov/constitution/article3/section1/>(accessed 10.09.2023).* (In Eng.).
- Фомичев, А. В., Комаров, М. В., Комарова, Ю. С. (2021). Особенности взаимодействия парламента с главой государства и правительства в рамках президентской (США) и смешанной (Франция, России) моделей республиканской формы правления. *The Scientific Heritage*. № 62. С. 39.–44.
- Kazanchian, L., & Zaqaryan, A. (2023). Some features of the manifestation of legal limitation of state power. *BULWARK OF LAW, №1*, 143–152(In Eng.)
- Lawrence, M. B. (2021). Subordination and Separation of Powers. *Yale Law Journal, Vol.131(Issue 1)*, 82–152.
- Laws, J. (2021). *The Constitutional Balance*. Oxford: Hart Publishing
- Малко, А.В. (2003). Стимулы и ограничения в праве. Монография М.: Юрист. 2003.
- Марченко, М. Н. (2015). Проблемы общей теории государства и права. Учебник: в 2 т. Изд. 2-е, перераб. и доп. М.: Проспект.
- Мелехин, А. В. (2007). Теория государства и права. Учебник. М.: Маркет ДС.
- Милушева, Т.В. (2011). Пределы деятельности государственной власти в России: вопросы теории и практики. Саратов.
- Миряева, Ж. А. (2021). Разделение властей в Соединенных Штатах Америки// Электронный научный журнал «Наука. Общество. Государство». Т. 9, № 1 (33). С.38–44.
- Partlett, W. (2023). Separation of Powers. *Elgar Encyclopedia of Comparative Law (3rd ed)*.1–8.
- Пферсмман, О. (2004). Понятие разделения властей и проблема «власти во власти» Конституционное право: восточноевропейское обозрение. № 2 (47). С. 44–49.
- Станских, С.Н. (2005). К какой ветви власти принадлежит прокуратура: опыт Конституционного Суда Приднестровской Молдавской Республики // *Конституционное и муниципальное право*. № 8. С. 39–45.
- The Constitution of India. (adapted on 26.11.1949, last amend. 15.09.2021). <https://legislative.gov.in/constitution-of-india/> (accessed on 10.09.2023).(In Eng.).
- The Constitution of the Republic of Armenia. (adopted on 05 July 1995, with amendments approved on 06 December 2015). URL: <https://www.president.am/ru/constitution-2015/>(accessed 10.09.2023). (In Eng.).
- Wex legal dictionary and encyclopedia. (2023, August 24). *Separation of powers*. URL: <https://www.law.cornell.edu/wex> (accessed 10.09.2023). (In Eng.).
- Законодательный процесс в зарубежных странах: учеб. пособие (2012). Под ред. Ю.И.

Лейбо. М. МГИМО Университет, 2012.

Змиевский, Д. В. (2021). Право законодательной инициативы в системе полномочий конституционного суда Российской Федерации. *Oeconomia et Jus*. №4. С.46–52.

Աշոտ Ջազարյան

*Երևանի Ավան վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ,
ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի
հայցորդ*

Էլ. հասցե՝ ashot.zaqaryan.55555@inbox.ru

ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Սույն հոդվածը անդրադառնում է արդի իրավագիտության կարևորագույն տեսական և գործնական հիմնախնդիրներին՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի դրսևորմանը պետական իշխանության իրավական սահմանափակման համատեքստում: Հոդվածում բացահայտվում է արդի իրավաբանական գրականությունում առկա «իրավական սահմանափակում» հայեցակարգի, իշխանությունների բաժանման սկզբունքի, ինչպես նաև զսպումների և հակակշիռների համակարգի էությունն ու դրսևորման առանձնահատկությունները:

Թեմայի ուսումնասիրության նպատակն է՝ հիմք ընդունելով կատարված հետազոտություն առանձնահատկությունները և ստացված արդյունքները, ներկայացնել իշխանությունների տարանջատման սկզբունքի վերաբերյալ հայտնի իրավագետների, փիլիսոփաների տարաբնույթ մոտեցումները, տվյալ սկզբունքի դրսևորման առանձնահատկությունները նախազահական, կիսասանախազահական և խորհրդարանական հանրապետություններում, ինչպես նաև ներյակացնել դրանց վերաբերյալ հեղինակային վերլուծությունները: Առանձնակի ուշադրության են արժանացնել իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում օրենսդրական նախաձեռնության իրավունքի պատվիրակման և նախազահի կողմից վետոյի կիրառման հիմնախնդիրները:

Ուսումնասիրության արդյունքները հնարավորություն կընձեռնեն առավել մանրամասն պատկերացում կազմել տարբեր պետություններում և պետական կառավարման ձևերում իշխանությունների տարանջատման սկզբունքի օրենսդրական ամրագման վերաբերյալ, ինչի արդյունքում կկարողանանք կատարելագործել ՀՀ օրենսդրությունը:

Հիմնաբառեր. իշխանությունների տարանջատում, զսպումների և հակակշիռների համակարգ, վետո, պետական իշխանության սահմանափակում, կառավարություն, նախազահ, խորհրդարան, պատվիրակում, կառավարման խորհրդարանական ձև:

Ашот Закарян*Руководитель юридического отдела Аппарата
административного района Аван г. Ереван**Соискатель Института философии, социология и право НАН РА**Эл. адрес: ashot.zaqaryan.55555@inbox.ru*

ОСОБЕННОСТИ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ В КОНТЕКСТЕ ПРАВОВОГО ОГРАНИЧЕНИЯ ГОСУДАРСТВЕННОЙ ВЛАСТИ

Статья затрагивает ключевые теоретические и практические вопросы современной юриспруденции, фокусируясь на проявлении принципа разделения властей в контексте правового ограничения государственной власти.

В статье раскрывается сущность и особенности проявления концепции «правовое ограничение», принципа разделения властей, а также системы сдержек и противовесов, существующих в современной юридической литературе. Цель исследования заключается в представлении различных точек зрения известных правоведов и философов относительно принципа разделения властей, особенностей его проявления в президентских, полупрезидентских и парламентских республиках, а также в представлении авторского анализа относительно данных явлений. Особое внимание было уделено проблемам делегирования права законодательной инициативы и применения права вето президентом в контексте принципа разделения властей.

Результаты исследования предоставят возможность получить более детальное представление о законодательном закреплении принципа разделения властей в разных государствах и формах государственного правления. Это позволит усовершенствовать законодательство Республики Армения.

Ключевые слова: разделение властей, система сдержек и противовесов, вето, ограничение государственной власти, правительство, президент, парламент, делегирование, парламентская форма правления.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. սեպտեմբերի 20-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. հոկտեմբերի 4-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. հոկտեմբերի 16-ին:

Ռաֆիկ Ավետիսյան

*ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող,
Քաղաքական գիտությունների թեկնածու
Էլ. հասցե՝ ravetisyan94@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2023.2-48

ՎՐԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՆԱՏՕ-ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Սույն հոդվածում քննարկվում են Վրաստանի արտաքին քաղաքականության մարտահրավերները, մասնավորապես՝ Ռուսաստան-Վրաստան հարաբերությունների զարգացման խնդիրները և ՆԱՏՕ-Վրաստան համագործակցության հեռանկարները: Վերջին տարիների աշխարհաքաղաքական փոփոխությունները սպառնալիքներ են ստեղծում Վրաստանի անվտանգության համար, որոնք Վրաստանը փորձում է հաղթահարել արտաքին քաղաքականության հավասարակշռման միջոցով: Հետազոտության նպատակը՝ ՆԱՏՕ-Ռուսաստան աշխարհաքաղաքական մրցակցության պայմաններում Վրաստանի արտաքին քաղաքականության հավասարակշռման գնահատումն է: Քննարկվում են Վրաստանի ներքաղաքական ձգնաժամի և արտաքին քաղաքականության փոխկապակցվածությունը, ռուս-վրացական հարաբերությունների զարգացման խնդիրները, ՆԱՏՕ-Վրաստան համագործակցության հեռանկարները: Հետազոտությունն իրականացվել է Արցախյան պատերազմի և ռուս-ուկրաինական պատերազմի հաշվառմամբ: Ըստ գնահատումների՝ վերջինիս հանգուցալուծմամբ և Արևելյան Եվրոպայում Ռուսաստան-Արևմուտք քաղաքական հարաբերությունների հետագա ընթացքով է պայմանավորված լինելու ռուս-վրացական հարաբերությունների և Վրաստանի եվրոատլանտյան ձգտումների ապագան:

Հիմնաբառեր. Ռուսաստան-Վրաստան հարաբերություններ, ՆԱՏՕ-Վրաստան համագործակցություն, արտաքին քաղաքականություն, ներքաղաքական ճգնաժամ, տարածաշրջանային անվտանգություն, ռուս-ուկրաինական պատերազմ:

Ներածություն

Վրաստանում «Վարդերի հեղափոխությունից» հետո առաջացած ներքաղաքական գործընթացները լուրջ ազդեցություն են ունեցել Վրաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխման հետ կապված: 2008 թ. ռուս-վրացական պատերազմի հետևանքով Վրաստանը որդեգրեց եվրոատլանտյան ինտեգրման ուղին և նվազագույնի հասցրեց Ռուսաստանի հետ համագործակցությունը, ինչը փոխվեց միայն 2012 թ. իշխանափոխության արդյունքով: Ռուսաստան-ՆԱՏՕ հարաբերությունների տարածաշրջանային լարումները նոր մարտահրավերներ առաջացրեցին Վրաստանի անվտանգության համար:

2020 թ. Արցախյան պատերազմից հետո ստեղծված աշխարհաքաղաքական իրողությունները փոփոխության ենթարկեցին ոչ միայն Հայաստանի և Ադրբեյջանի անվտանգային միջավայրը, այլև կանխորոշեցին տարածաշրջանի անվտանգային նոր ճարտարապետությունը, որը որոշակի ազդեցություն կունենա Վրաստանի անվտանգային համակարգի վրա: Հետպատերազմյան ժամանակաշրջանում ստեղծված իրողությունները Հարավային Կովկասում նշանակալի ամրապնդեցին Վրաստանի հիմնական հակառակորդ պետության՝ Ռուսաստանի ռազմական ներկայությունը: Վրաստանի համար Արցախյան պատերազմը կտրեց այն կարծրատիպը, թե Արևմուտքը չի թողնի, որ ուժի կիրառմամբ լուծվեն տարածաշրջանում առկա հակամարտությունները, չի հանդուրժի տարածաշրջանի է՛լ ավելի ռազմականացումը: Հարևան պետություններում սպառնալիքի աղբյուր չընկալվող, արևմտյան կողմնորոշում ունեցող և իր անվտանգային համակարգը արևմտյան մոդելով արդիականացնող Վրաստանը տարածաշրջանում Ռուսաստանի, Թուրքիայի, Իրանի դիրքերի ամրապնդման և ԵՄ-ի, ԱՄՆ-ի աշխարհաքաղաքական դիրքերի թուլացման համար նպաստավոր պայմանների ստեղծման պատճառով կանգնեց անվտանգային լուրջ խնդիրների առջև: Ռուս-ուկրաինական պատերազմը ևս նոր անվտանգային խնդիրներ առաջացրեց Վրաստանի արտաքին քաղաքականության ուղեգծում: Ռուսաստան-ՆԱՏՕ լարված հարաբերություններում Վրաստանը սկսեց նոր որակի հարաբերություններ կառուցել Ռուսաստանի և Արևմուտքի հետ: Այդ պայմաններում անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու Վրաստանի արտաքին քաղաքականության հավասարակշռման խնդիրները, Ռուսաստան-Վրաստան և ՆԱՏՕ-Վրաստան հարաբերությունների զարգացման հեռանկարները:

Տեսական և մեթոդաբանական հիմքերը

Հետազոտության տեսական հիմքում ընկած են տարածաշրջանային անվտանգային հիմնախնդիրներին վերաբերող ռեալիզմի ուժերի հավասարակշ-

ռության և լիբերալիզմի տնտեսական փոխկախվածության տեսական հասկացությունները, որոնք թույլ են տալիս վերլուծելու Վրաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթությունները, ռուս-վրացական հարաբերությունների գարգացման խնդիրները, Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության հեռանկարները, ինչպես նաև ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով առաջացած Վրաստանի անվտանգության հիմնախնդիրները: Այդ նպատակով օգտագործվել են տարբեր աշխատություններ, իրավական փաստաթղթեր, պաշտոնական հրապարակումներ և այլն:

Օգտագործվել են վերլուծության պատմանկարագրական, համեմատական, դիալեկտիկական, արժեքաբանական, գործառնական-կիրառական, իրադարձությունների վերլուծության, վերլուծական-կանխատեսական մեթոդները:

Վրաստանի ներքաղաքական ճգնաժամի ազդեցությունը արտաքին քաղաքական ուղեգծի ձևավորման գործընթացի վրա

Վրաստանում մինչև 2003 թ. «Վարդերի հեղափոխությունը» հաստատվել էր որոշակի քաղաքական կայունություն, սակայն 2003 թ. նոյեմբերին քսանօրյա բողոքի ցույցերից հետո է. Շևարդնաձեն հրաժարական տվեց և ընտրությունների միջոցով ազատական գաղափարախոսություններով իշխանության հասավ «Ազգային շարժում-դեմոկրատներ» կոալիցիան: «Վարդերի հեղափոխությունը» գլխավորում էին Մ. Սահակաշվիլին, Ն. Բուրջանաձեն և Զ. Ժվանիան: Նախագահական ընտրություններում Մ. Սահակաշվիլին ընտրվեց նախագահ: Ն. Բուրջանաձեն հետագայում անցավ ընդդիմության շարքերը, իսկ Զ. Ժվանիան անհայտ հանգամանքներում մահացավ, իսկ որպես իշխող քաղաքական ուժ մնաց Մ. Սահակաշվիլու գլխավորած «Միացյալ ազգային շարժումը»:

2003 թ. «Վարդերի հեղափոխությունը» վճռական եղավ Վրաստանի արտաքին քաղաքականության ուղեգծի փոփոխման համար: 2003 թ. Սկսած, Վրաստանի իշխող քաղաքական ուժը վարում էր հակառուսական քաղաքականություն և փորձում էր սերտացնել հարաբերությունները ԱՄՆ-ի, ԵՄ-ի և ՆԱՏՕ-ի հետ: Ռուս-վրացական հարաբերությունների լարվածությունը հասավ իր գագաթնակետին 2008 թ. օգոստոսին տեղի ունեցած ռազմական բախումներից հետո: 5-օրյա պատերազմից հետո Ռուսաստանը ճանաչեց Հարավային Օսիայի և Աբխազիայի անկախությունը, որի հետևանքով նույնիսկ խզվեցին կողմերի միջև առկա դիվանագիտական հարաբերությունները: 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո սկիզբ դրվեց Ռուսաստանի հարավկովկասյան ազդեցության թուլացմանը, որն աստիճանաբար խթանեց տարածաշրջանում Արևմուտքի, Թուրքիայի, Ադրբեյջանի տնտեսական և քաղաքական ազդեցության մեծացմանը:

Վրաստանում հաջորդ իշխանափոխությունը եղավ 2012 թ. հոկտեմբերի 1-ին անցկացված խորհրդարանական ընտրություններում, երբ Բ. Իվանիշվիլիի գլխավորած ընդդիմադիր «Վրացական երազանք» կոալիցիան կա-

րողացավ հասնել հաջողության: Իշխող ուժը հայտարարեց Վրաստանի արտաքին քաղաքականության ուղեգծի որոշակի փոփոխության մասին՝ փորձելով հրաժարվել հակառուսականությունից և պահպանել Արևմուտքի հետ համագործակցությունը: 2012 թ. սկսած Վրաստանի ներքաղաքական գործընթացների ընդդիմություն-իշխանություն հարաբերություններում սկսեց առաջնային քննարկման առարկա դառնալ Ռուսաստանի և Արևմուտքի միջև ընտրություն կատարելու խնդիրները:

Վրաստանի ներքաղաքական ճգնաժամի խնդիրները հիմնականում պայմանավորված են սահմանադրության փոփոխություններով, քանի որ 2003 թ. սկսած իշխանությունները իրենց արտաքին քաղաքական նպատակների իրագործման համար փորձում էին պետությունում հաստատել իշխանությունը երաշխավորող սահմանադրական նորմեր: «Վարդերի հեղափոխությունից» հետո Վրաստանի սահմանադրությունը երկու անգամ ենթարկվել է փոփոխության: Եթե 2004 թ. փոփոխություններն առավելագույնս բավարարեցին նախագահի հավակնությունները, և նրան օրենսդրական նախաձեռնություններ իրականացնելու, խորհրդարանը լուծարելու, վարչապետ ու կառավարության անդամներ նշանակելու, նրանց պաշտոնից ազատելու անսահման իշխանություն տվեցին, ապա 2010 թ. փոփոխությունների համաձայն՝ ավելի մեծ իշխանություն տրվեց վարչապետին: Խորհրդարանը սկսեց գերակա դեր ստանձնել կառավարության ձևավորման գործում, և վրացական կառավարման ձևը բավականաչափ նմանվեց կառավարման խառը ձևին՝ փորձելով հասնել օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև հավասարակշռության:

2012 թ. ընտրություններից առաջ «Վրացական երազանքը» հայտարարել էր, որ իշխանության գալուց հետո նախաձեռնելու է սահմանադրական փոփոխություններ, որոնցով պետությունը կդառնա խորհրդարանական հանրապետություն: Սահմանադրության նոր տարբերակով նախատեսում էին նախագահական լիազորությունների կրճատում, կառավարության ու խորհրդարանի լիազորությունների մեծացում, ինչպես նաև դատական համակարգի բարեփոխումներ: 2017 թ. հոկտեմբերի 13-ին Վրաստանի խորհրդարանը երրորդ ընթերցմամբ ընդունեց նոր սահմանադրությունը: Խորհրդարանի 150 անդամներից 115-ը «Վրացական երազանք» կուսակցությունից էին և ևս երկու պատգամավոր, որոնք խորհրդարան էին մտել ոչ որպես «Վրացական երազանքի» անդամներ, բոլոր հարցերում աջակցում էին իշխող ուժին: Սահմանադրությունը փոփոխելու համար 113 պատգամավորի համաձայնությունն էր պետք, այդպիսով այդ խնդրի լուծումը իշխող կուսակցության համար դժվար չէր լինի:

2018 թ. նոյեմբերին Վրաստանում կայացած նախագահական ընտրություններից հետո հաղթանակ գրանցած Ս. Զուրաբիշվիլի երդմնակալությունից հետո ամբողջությամբ իրավական ուժ ստացավ Վրաստանի նոր սահմանադրությունը, որի համաձայն՝ կառավարման համակարգը կիսանախագահականից վերափոխվեց խորհրդարանականի: Նոր սահմանադրության համաձայն՝ Վրաստանի նախագահը մնում է պետության ղեկավարի պաշ-

տոնում, բայց ամբողջ իշխանությունը գործնականում կենտրոնացված է լինում Վրաստանի կառավարության ձեռքում, որին վերահսկում է խորհրդարանը: Վրաստանի նախագահը դառնում է նոմինալ գործիչ, որն այլևս չի ընտրվելու ժողովրդական ընտրությունների միջոցով, այլ նրան կընտրի 300 հոգանոց ընտրական կոլեգիան, որի կազմում ընդգրկված են լինելու խորհրդարանի 150 պատգամավոր և տեղական ինքնակառավարման մարմինների 150 ներկայացուցիչ: Նախորդ սահմանադրության համաձայն՝ նախագահի լիազորություններում մնացել են միայն վետոյի իրավունքը, քաղաքացիություն շնորհելու, պետական պարգևներ հանձնելու, զինվորական և դիվանագիտական կոչումներ շնորհելու, հանրաքվե նշանակելու իրավունքները: Մնացյալ բոլոր որոշումների համար անհրաժեշտ է վարչապետի համաձայնությունը: Ինչ վերաբերում է վարչապետի ինստիտուտին, ապա նրա լիազորություններն ընդլայնվել են, և արդեն վարչապետն է ստորագրում բոլոր կարևոր պայմանագրերն ու որոշումները:

2020 թ. անցկացված խորհրդարանական ընտրություններից հետո համամասնական կարգով 48% ձայն հավաքեց իշխող «Վրացական երազանքը», ստանալով 60 մանդատ, իսկ ընդդիմությունը՝ «Ուժը միասնության մեջ է» (Միացյալ ազգային շարժում, Վրաստանի Հանրապետական կուսակցություն, Պետություն ժողովրդի համար, Եվրոպական դեմոկրատներ, Առաջընթաց և ազատություն) դաշինքը հավաքեց 27%՝ ստանալով 36 մանդատ: Մեծամասնական ընտրակարգով իշխանությունը ստացավ ևս 13 մանդատ, իսկ մեծամասնական ընտրակարգի երկրորդ փուլում, որին ընդդիմությունը հրաժարվեց մասնակցել, իշխանությունը ստացավ ևս 17 մանդատ: 2020 թ. խորհրդարանական ընտրությունների անցողիկ 1% շեմը հաղթահարեցին ևս 7 ուժ, դրանք են՝ Ազատության շարժում-Եվրոպական Վրաստան, ԼԵԼՕ, Ռազմավարություն աղմաշենեբելի, Վրաստանի հայրենասերների դաշինք, Գիրչի, Քաղաքացիներ, Վրաստանի լեյբորիստական կուսակցություն (Election administration of Georgia, 2020):

Դասվելով երիտասարդ ժողովրդավարություն ունեցող պետությունների շարքին և փոփոխելով կառավարման համակարգը՝ Վրաստանը փորձում է դառնալ է՝ լ ավելի ժողովրդավարական և հենց դրան էին ուղղված սահմանադրական վերջին փոփոխությունները: Սակայն ոչ բոլոր դեպքերում է, որ սահմանադրական փոփոխությունները հանգեցնում են ժողովրդավարության մակարդակի բարձրացման: Վրաստանի կառավարման համակարգի փոփոխությունների վրա վճռորոշ ազդեցություն են թողել եվրոպական մոդելի պետություն դառնալու և ԵՄ-ին անդամակցելու ռազմավարական նպատակը, ըստ որի ենթադրվում է ժողովրդավարական կառավարմամբ զարգացած բազմակուսակցական համակարգ: Վրաստանը համարվում է թույլ ժողովրդավարություն ունեցող պետություն, և անկախ նախագահի ինստիտուտի առկայությունը կարող է չափազանց կարևոր դերակատարություն ունենալ, քանի որ միայն ուժեղ լիազորություններով օժտված նախագահն է ունակ հավասարակշռություն պահպանելու իշխանության ճյուղերի միջև: Միաժամանակ, նախագահին վետոյով օժտելը կարող է հանգեցնել

ներքաղաքական ձգնաժամի: Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից ի վեր իշխող ուժը և նախագահը սկսել են արտաքին քաղաքական հարցերում սկզբունքային տարբեր դիրքորոշումներ արտահայտել, ինչը էականորեն ազդում է Վրաստանի քաղաքական անվտանգության վրա:

Ռուս-վրացական քաղաքական և տնտեսական հարաբերությունների զարգացման խնդիրները

Վրաստանի և Ռուսաստանի փոխհարաբերությունների քննարկումը միշտ էլ շատ արդիական է եղել, հատկապես 2008 թ. օգոստոսյան պատերազմից հետո: Ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո այդ պետություններն անցնում են փոխհարաբերությունների զարգացման նոր փուլ: Վրաստանի իշխանությունները, հաշվի առնելով Ռուսաստանի կարևորությունը տարածաշրջանում, հատկապես առևտրաշրջանառության առումով, փորձում են նվազագույնը չվատացնել հարաբերությունները Ռուսաստանի հետ: Ավելին, Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի պատժամիջոցները, Վրաստանի համար տարանցիկ փոխադրումների իրականացման նոր հնարավորություններ են ստեղծում: Դրա ապացույցներից է այն, որ Ռուսաստանը և Վրաստանը սկսեցին վերականգնել միմյանց միջև օդային և ծովային փոխադրումները:

Ռուսաստանի արտաքին քաղաքական ուղեգծում Վրաստանի հետ համագործակցությունը սկսում է է՛լ ավելի կարևորվել: Ռուսաստանի հարավ-կովկասյան ռազմավարությունում տարածաշրջանային անվտանգության վերահսկումը առաջին հերթին կարևորվում է սեփական անվտանգության ապահովման տեսանկյունից, ուստի՝ Ռուսաստանին վրացական կողմի հետ լավ հարաբերությունները առաջին հերթին անհրաժեշտ են իր հարավային սահմանների անվտանգության ապահովման համար (Тренин, 2021, էջ 423): Վրաստանի համար Ռուսաստանի հետ փոխհարաբերությունների պահպանումը և զարգացումը հետապնդում է, նախևառաջ, տնտեսական շահեր, Ռուսաստանի հետ առևտրաշրջանառությունը նշանակալի ազդեցություն ունի Վրաստանի տնտեսության վրա: Բացի այդ, Վրաստանը հաշվի է առնում Ռուսաստանում բնակվող վրացիների գործոնը, որը մեծ ներուժ է համարվում երկու կողմերի փոխշահավետ հարաբերությունների զարգացման համար: Այնուամենայնիվ, 2012 թ. հոկտեմբերի 1-ին Վրաստանում իշխանության փոփոխմամբ որոշակի հույսեր արթնացան, որ ռուս-վրացական հարաբերությունները կվերականգնվեն, սակայն Վրաստանի նորընտիր իշխանությունները, որոշ չափով մեղմելով Ռուսաստանի նկատմամբ հռետորաբանությունը, պետության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունը՝ արևմտյանը, թողեցին անփոփոխ. 2023 թ. դեկտեմբերին Վրաստանը ստացավ ԵՄ անդամակցության թեկնածուի կարգավիճակ:

Ի հակադրություն քաղաքական հակասությունների, ռուս-վրացական տնտեսական հարաբերություններն աննկատ զարգանում են, քանի որ օրեցօր մեծանում են երկկողմ առևտրաշրջանառության ծավալները: Ռուսաստ-

տանը Վրաստանի արտաքին առևտրային առաջատար գործընկերներից: Ռուսաստանի դաշնային մաքսային ծառայության տվյալներով՝ Ռուսաստանի և Վրաստանի միջև առևտրաշրջանառությունը 2018 թ. կազմել է 1,355 միլիարդ դոլար (2017 թ. համեմատ աճը՝ 25 տոկոս), այդ թվում՝ Ռուսաստանից արտահանումը՝ 957 միլիոն դոլար, ներմուծումը՝ 398 միլիոն դոլար (Торговля между Россией и Грузией в 2018г.): 2018 թ. Ռուսաստանից Վրաստան արտահանման կառուցվածքում գերակշռել են պարենային և գյուղատնտեսական ապրանքները, տարբեր տեսակի սարքավորումները և տրանսպորտային միջոցները, քիմիական արդյունաբերության արտադրանքը: Վրաստանից դեպի Ռուսաստան ներմուծման կառուցվածքում գերակշռում են պարենային, գյուղատնտեսական ապրանքները և մետաղական արտադրանքը: Ռուս-վրացական առևտրաշրջանառության ակտիվացում է նկատվում ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո: Եթե 2021 թ. առաջին կիսամյակում Ռուսաստանից դեպի Վրաստան արտահանվել է մոտ 180 հազար տոննա նավթահումքային ռետորսներ, մոտ 20 հազար տոննա ցորեն և ալյուր, մոտ 50 հազար տոննա ածուխ, ապա այդ ցուցանիշը 2022 թ. առաջին կիսամյակում կազմել է համապատասխանաբար 500 հազար, 150 հազար, 80 հազար տոննա: Արդյունքում 2022 թ. ռուս-վրացական ապրանքաշրջանառությունն աճել է գրեթե 60%-ով (Официальный сайт Минэкономразвития России, 2023):

Վրաստանի ազգային-վիճակագրական ծառայության տվյալներով՝ 2022 թ. Վրաստանի և Ռուսաստանի միջև առևտրաշրջանառությունը 2021 թ. համեմատ աճել է 52,3 տոկոսով և կազմել մոտ 2,5 միլիարդ դոլար, մինչդեռ Վրաստանից դեպի Ռուսաստան արտահանումն աճել է գրեթե 7 տոկոսով: 2022 թ. Վրաստանից Ռուսաստան արտահանվել է ավելի քան 92 հազար տոննա հանքային և քաղցրահամ ջուր, ավելի քան 73 հազար տոննա գինի, 57,4 հազար տոննա համաձուլվածք, մոտ 12,3 հազար տոննա ակոհոլային տարբեր խմիչքներ և այլն: Վրաստանի համար Ռուսաստանը հացահատիկի և ալյուրի ամենամեծ մատակարարն է: 2022 թ. Ռուսաստանից դեպի Վրաստան ներմուծվել է 179,7 հազար տոննա ցորենի ալյուր, ինչպես նաև ավելի քան 174 հազար տոննա ցորեն և մեալին (ցորենի և տարեկանի խառնուրդ): Վրաստանը Ռուսաստանից ներմուծել է նաև 657,4 հազար տոննա նավթ և նավթամթերք, 416,8 հազար տոննա բնական գազ, ինչպես նաև 114,4 հազար տոննա կոքսային վառելիքային (National Statistic Office of Georgia 2022, էջ 13-15):

Այնուամենայնիվ, ռուս-վրացական հարաբերություններում նոր լարվածության առաջացումը և արևմտյան պատժամիջոցներին Վրաստանի աջակցելը ձեռնտու չեն և՛ Ռուսաստանին, և՛ Վրաստանին, քանի որ երկուսն էլ հարաբերությունների որոշակի սրումից հետո միայն տուժում են, հատկապես՝ տնտեսական առումով: Ռուս-վրացական հարաբերությունները դեռևս հետևողական ֆիլիտային փուլում են և ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով առաջացած առևտրաշրջանառության ակտիվացումը որոշակի հետևանքներ կարող է ունենալ հարաբերությունների հետագա զարգացման վրա:

Բայցևայնպես, հաշվի առնելով ռուս-վրացական հարաբերությունների զարգացման հեռանկարները, կարելի է նշել, որ դրանք տևական ժամանակ չեն հասնի մինչ 2008 թ. եղած լիարժեք համագործակցության մակարդակին: Հարաբերությունների զարգացում կարող է դրսևորվել միայն երկարաժամկետ հեռանկարում՝ պայմանավորված միջազգային և տարածաշրջանային քաղաքական գործընթացների զարգացմամբ:

Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության ծրագրերը և այդ դաշինքին անդամակցության հեռանկարները

Վրաստան-ՆԱՏՕ համագործակցության զարգացման գործում վճռական եղավ 2003 թ. «Վարդերի հեղափոխությամբ» պետության արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխումը: Վրաստանի արտաքին քաղաքականության մեջ եվրոատլանտյան ինտեգրման առաջնայնությունը հաստատվեց 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո, երբ պաշտոնական մակարդակով Վրաստանում հայտարարվեց արտաքին քաղաքական ուղեգծի փոփոխման անհրաժեշտության մասին: Այդ իրողությունների պայմանավորմամբ՝ Վրաստան-ՆԱՏՕ համագործակցությունը նոր մակարդակի բարձրացվեց, և ՆԱՏՕ-ն սկսեց Վրաստանի զինված ուժերի արդիականացման գործընթացում առաջնային դերակատարություն ունենալ: 2008 թ. օգոստոսյան ռուս-վրացական պատերազմից հետո Վրաստանը ՆԱՏՕ-ի հետ անցկացրել է ավելի քան 45 տարբեր զորավարժություններ: Պատերազմի ավարտից հետո իշխանությունները հետամուտ են եղել զինված ուժերը ՆԱՏՕ-ի չափանիշներին համապատասխանեցնելու:

2008 թ. ի վեր «ՆԱՏՕ-Վրաստան» հանձնաժողովը սկսեց զբաղվել կողմերի միջև քաղաքական երկխոսության հաստատմամբ, որը հիմք դրեց Վրաստանի ռազմական բարեփոխումներին ՆԱՏՕ-ի աջակցության քաղաքականությամբ: Վերջնական անդամակցության նախապատրաստական աշխատանքները կատարվում են հաջորդական տարեկան ազգային ծրագրերի մշակմամբ և իրագործմամբ: 2010 թ. Վրաստանում ստեղծվել է ՆԱՏՕ-ի կապի գրասենյակ՝ պետության բարեփոխումների ջանքերին աջակցելու նպատակով: 2018 թ. հուլիսին ՆԱՏՕ-Վրաստան համագործակցության խորացման և անդամակցության առնչությամբ ընդունվել է հռչակագիր, իսկ 2020 թ. դեկտեմբերին ընդունվել է ՆԱՏՕ-Վրաստան համագործակցության բարեփոխումների իրագործման արդիականացված փաթեթը:

2011 թ. ի վեր երկու տարին մեկ անգամ անցկացվում են «Agile Spirit» («Արագաշարժ ոգի») զորավարժությունները՝ իբրև ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի հետ Վրաստանի համագործակցության կարևոր ծրագրերից մեկը: Ջորավարժությունների նպատակը Վրաստանի զինված ուժերի համապատասխանեցումն է ՆԱՏՕ-ի չափանիշներին, ինչպես նաև վրացի զինվորականների վերապատրաստումը՝ միջազգային խաղաղապահական առաքելություններին մասնակցելու համար (U.S. Army Europe and Africa, 2023): 2021 թ. անցկացված 10-րդ բազմազգ զորավարժություններին մասնակցում էին ՆԱՏՕ-ի 15 դաշ-

նակից և գործընկեր պետությունների 2500 զինծառայող: Վրաստանի պաշտպանության ուժերի և ԱՄՆ-ի բանակի Եվրոպայի և Աֆրիկայի հրամանատարության գլխավորությամբ զորավարություններն անցկացվեցին բրիգադի մակարդակով: Այն ընդգրկում էր սինուլյացված հրամանատարաշտաբային զորավարություն, գումարտակի մակարդակով համակցված զինատեսակների ուղիղ կրակի վարժանքներ:

2015 թ. սկսած Վրաստանը ՆԱՏՕ-ի հետ համատեղ իրագործում է «Noble Partner» («Բարձր մակարդակի գործընկեր») ծրագիրը: Առաջին զորավարությանը մասնակցում էին 400 վրացի և 200 ամերիկյան զինվորականներ: Այդ ժամանակվանից սկսած զորավարություններն անցկացվում են ամեն տարի կամ երկու տարին մեկ անգամ: 2018 թ. «Բարձր մակարդակի գործընկեր» զորավարությանը մասնակցել են 13 պետությունից ավելի քան 3000 զինծառայող, այդ թվում՝ ՀՀ ՋՈՒ-ից 4 սպա: Զորավարությունների անցկացման նպատակը՝ ռազմական համագործակցության, փոխգործունակության ուժեղացումն էր, մասնակից պետությունների ռազմական պատրաստվածության աստիճանի բարձրացումը (U.S. Army Europe and Africa, 2023): Նպատակներից մեկն էլ մասնակից պետությունների կարողության բարելավումն էր բազմազգ ռազմական գործողությունները համատեղ և ինտեգրված կերպով ծրագրելու և իրագործելու համար: Հիմնական նպատակներից էր նաև Վրաստանի զինված ուժերի կարողությունների բարձրացմանը նպաստելը: Զորավարությունները ներառում էին տարբեր գործողություններ՝ հրամանատարաշտաբային վարժանքներ, ուղիղ կրակի վարժանքներ, մարտավարական զորավարություններ և փոխգործության վարժանքներ: Այս ամենը հնարավորություն է տալիս սցենարային զորավարությունների միջոցով բարձրացնելու համատեղ ռազմական գործողությունների իրագործման արդյունավետությունը: Զորավարությունները, սովորաբար, անցկացվում են Վրաստանի Վազիանի ռազմաբազայում, որտեղ առկա են ուսումնական համապատասխան պայմաններ:

«Agile Spirit» և «Noble Partner» զորավարություններից բացի, Վրաստանում տեղի են ունեցել նաև «Գործընկերություն հանուն խաղաղության» զորավարությունները: Իմերեթի շրջանի Սաչխերի լեռնային ուսումնավարժական ավանում անցկացվում են լեռնագնացության դասընթացներ, որոնց, սովորաբար, մասնակցում են ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի, Ադրբեջանի, Ուկրաինայի, Հունգարիայի, Լիտվայի, Բելառուսի ՋՈՒ ներկայացուցիչ զինծառայողներ:

Վրաստանում բազմիցս քննարկվել է ռազմածովային նավատորմի ստեղծման գաղափարը, սակայն վրացական իշխանությունները մտադիր չեն ստեղծել այն, քանի որ ոչ միայն մեծ ծախսեր է պահանջվում, այլև դրանով կմեծանա Ռուսաստանի հետ աշխարհաքաղաքական բախման սպառնալիքը: Վրաստանում ծովային սահմանը վերահսկում է Վրաստանի ներքին գործերի նախարարությունը, բայց դա ավելի շուտ պարեկային վերահսկողություն է: Վերջին շրջանում ՆԱՏՕ-ի բարձրաստիճան պաշտոնյաները հայտարարություններ են անում Սև Ծովում ՆԱՏՕ-ի ներկայության ամրապնդ-

ման անհրաժեշտության մասին, բայց այդ հարցում դեռևս հստակ համաձայնություն ձեռք չի բերվել վրացական իշխանությունների հետ:

ՆԱՏՕ-ին անդամակցելու չափանիշները և դաշինքին միանալու գործընթացը ուրվագծված են ՆԱՏՕ-ի հիմնարար փաստաթղթերում: Ամենակարևոր փաստաթղթերից մեկը, որ նախանշում է ՆԱՏՕ-ի բաց դռների քաղաքականությունը և անդամակցության չափանիշները՝ անդամակցության գործողությունների ծրագրի ուղեցույցն է (NATO, Membership Action Plan (MAP), 1999): Գործողությունների ծրագրի իրագործումը հայտ ներկայացրած պետությունների հնարավորություն է ընձեռում նախապատրաստվելու անդամակցությանը և կատարելու անհրաժեշտ բարեփոխումներ՝ դաշինքին հնարավոր անդամակցության համար: ՆԱՏՕ-ին անդամակցելու մյուս, ներառյալ քաղաքական, անվտանգության և ժողովրդավարական չափանիշները, հաճախ նշվում են ՆԱՏՕ-ի տարբեր գագաթնաժողովների հռչակագրերում, կոմյունիկեներում և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների պաշտոնական հայտարարություններում: Ի վերջո, նույնիսկ համապատասխան բարեփոխումների դեպքում, ՆԱՏՕ-ի անդամ դառնալու պարտադիր պայման է այդ գործընթացի՝ բոլոր անդամ-պետությունների խորհրդարանների վավերացումը:

Ձգտելով միանալ ՆԱՏՕ-ին, Վրաստանը, այնուամենայնիվ, կարող է կանգնել մի շարք դժվարությունների առջև, քանի որ ունի չլուծված տարածքային խնդիրներ, չսահմանազատված սահմաններ: Այս պայմաններում ՆԱՏՕ-ի անդամ պետությունները մոտ ապագայում չեն համաձայնի Վրաստանի անդամակցությանը: Հաշվի առնելով ՆԱՏՕ-ին անդամակցելու ձգտումները՝ Վրաստանը հետզհետե փորձում է իր պաշտպանության ուժերի և ռազմաբազաների կազմակերպական մակարդակները մոտեցնել ՆԱՏՕ-ի գործող չափանիշներին: 2008 թ. ռուս-վրացական պատերազմից հետո առաջին քայլերից մեկը եղավ այն, որ Վրաստանը հրաժարվեց ռուսական «AK-74» ինքնաձիգներից և ձեռք բերեց ամերիկյան «M4»-երը: Այդ ժամանակից ի վեր, Վրաստանի ռազմատեխնիկական գնումները մեծամասամբ կատարվում են արևմտյան պետություններից:

2020 թ. Արցախյան պատերազմից անմիջապես հետո, Հարավային Կովկասում Ռուսաստանի ազդեցության մեծացմամբ՝ Վրաստանի քաղաքական շրջանակները էլ ավելի կարևորեցին Վրաստանում ամերիկյան ռազմական ուժերի տեղակայման հնարավորությունների և ՆԱՏՕ-ին Վրաստանի ինտեգրման հեռանկարների հարցերին: Վրաստանում սկսեցին ակտիվորեն քննարկել նաև ՆԱՏՕ-ին անդամակցելու հնարավորությունների հարցը, նույնիսկ տարբեր փորձագիտական կարծիքներ հնչեցին առանց ՆԱՏՕ-ի հավաքական պաշտպանության մասին 5-րդ հոդվածի՝ Աբխազիային և Հարավային Օսիային վերաբերելու առնչությամբ բանակցություններ վարելու անհրաժեշտության մասին: 2020 թ. Արցախյան պատերազմից հետո Արևմուտքը համապատասխան չի արձագանքում Վրաստանի քաղաքական ձգտումներին, ուստի՝ առաջիկա տարիներին Վրաստանում ամերիկյան ուժերի տեղակայումը և ՆԱՏՕ-ին անդամակցելը վրացական իշխանություններն սկսում են համարել անիրատեսական: Ռուս-ուկրաինական պատերազմը ևս փաս-

տեց, որ ՆԱՏՕ-ի արևելյան ընդլայնումը լուրջ աշխարհաքաղաքական խնդիրներ է առաջացնում կազմակերպությունում: Ավելին, օգտվելով այդ հանգամանքից, Ռուսաստանը փորձում է վերանայել ՆԱՏՕ-ին անդամակցելու ցանկություն ունեցող, բայց այս փուլում ՆԱՏՕ-ի համար նպատակահարմար չհամարվող պետությունների հետ վարվող քաղաքականությունը:

Եզրակացություն

Այսպիսով՝ ուսումնասիրելով Վրաստանի արտաքին քաղաքականության մարտահրավերները Ռուսաստան-ՆԱՏՕ հակամարտության պայմաններում, կարող ենք նշել, որ ռուս-ուկրաինական պատերազմի հանգուցալուծմամբ և Արևելյան Եվրոպայում Ռուսաստան-Արևմուտք քաղաքական հարաբերությունների հետագա ընթացքով է պայմանավորվելու ռուս-վրացական հարաբերությունների և Վրաստանի եվրոատլանտյան ձգտումների ապագան: Ուկրաինական ճգնաժամի պայմաններում Վրաստանի համար առանցքային է դառնում Ռուսաստանի հետ առձակատման բացառման քաղաքականության իրականացումը, որի դրսևորումներից է այն, որ Վրաստանը հրաժարվում է ամբողջությամբ միանալ Ռուսաստանի նկատմամբ Արևմուտքի պատժամիջոցների քաղաքականությանը: Ավելին՝ Վրաստանը ռուս-ուկրաինական պատերազմի մեկնարկից հետո զգալի տնտեսական ձեռքբերումներ է ունեցել որպես Արևմուտքի և Ռուսաստանի միջև ընկած տարանցիկ պետություն: Այդ խնդիրների գնահատմամբ՝ Վրաստանի գործող իշխանությունը սկսել է պրագմատիկ գնահատել տարածաշրջանային անվտանգության հիմնախնդիրները, մասնավորապես՝ Ռուսաստանից եկող սպառնալիքների չեզոքացման ռեսուրսների բացակայությունը, և ՆԱՏՕ-ի տարածաշրջանային ներգրավվածության հեռանկարների անորոշությունը: Նմանատիպ աշխարհաքաղաքական իրողությունները սպառնալիքներ են ստեղծում ոչ միայն Վրաստանի արտաքին քաղաքականության, այլև ներքաղաքական կայունության ապահովման գործընթացներում: Ուստի՝ գործող իշխանությունը Վրաստանի եվրոատլանտյան ինտեգրման խորացումը դիտում է որպես ընդդիմության դերի մեծացմանը նպաստող անուղղակի գործողություն, և այդ համատեքստում փորձում է հնարավորինս հավասարակշռել արևմտյան պետություններից ունեցած անվտանգային կախվածությունը:

Օգտագործված գրականության ցանկ

Тренин, Д. (2021). *Новый баланс сил Россия: в поисках внешнеполитического равновесия*, Альпина Паблишер, М.

Торговля между Россией и Грузией в 2018г., *Внешняя торговля России* <https://russian-trade.com/reports-and-reviews/2020-02/torgovlya-mezhdu-rossiey-i-gruziey-v-2018-g/> (մուտք՝ 05.09.2023)

Election administration of Georgia, 2020 Parliamentary Elections, Report On October 31, <https://cesko.ge/en/archevnebi/2020/october-31-2020-parliamentary-elections-of-georgia/saqartvelos-parlamentis-2020-tslis-31-oqtombris-archevnebis-an>

garishi- (մուսն՝ 14.09.2023)

- National Statistic Office of Georgia: *External Merchandise Trade of Georgia* (2022). <https://www.geostat.ge/en/single-archive/3392> (մուսն՝ 11.09.2023)
- NATO: *Membership Action Plan (MAP)*, Issued on 24 Apr. 1999, https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_27444.htm (15.09.2023)
- Piriz, J. (2021). *NATO Says 'Clear No' to Article 5 Excluding Occupied Regions*, Civil Georgia, <https://civil.ge/archives/460422> (08.09.2023)
- U.S. Army Europe and Africa, *About Noble Partner* (2023). <https://www.europeafrica.army.mil/What-We-Do/Exercises/Noble-Partner/> (մուսն՝ 12.09.2023)

References

- Trenin, D. (2021). *Novyy balans sil Rossiya: v poiskakh vneshnepoliticheskogo ravnovesi*, Alpina Publisher, M. (In Rus.)
- Torgovlya mezhdu Rossiiyey i Gruziiyey v 2018 g. [Trade between Russia and Georgia in 2018], *Vneshnyaya torgovlya Rossii* <https://russian-trade.com/reports-and-reviews/2020-02/torgovlya-mezhdu-rossiye-i-gruziye-v-2018-g/> (accessed 05.09.2023) (In Rus.)
- Election administration of Georgia, *2020 Parliamentary Elections*, Report On October 31, <https://cesko.ge/en/archevnebi/2020/october-31-2020-parliamentary-elections-of-georgia/saqartvelos-parlamentis-2020-tslis-31-oqtombris-archevnebis-angarishi-> (accessed 14.09.2023) (In Eng.)
- National Statistic Office of Georgia, *External Merchandise Trade of Georgia* (2022). <https://www.geostat.ge/en/single-archive/3392> (accessed 11.09.2023) (In Eng.)
- NATO, *Membership Action Plan (MAP)*, Issued on 24 Apr. 1999, https://www.nato.int/cps/en/natohq/official_texts_27444.htm (accessed 15.09.2023) (In Eng.)
- Piriz, J. (2021). *NATO Says 'Clear No' to Article 5 Excluding Occupied Regions*, Civil Georgia, <https://civil.ge/archives/460422> (accessed 08.09.2023) (In Eng.)
- U.S. Army Europe and Africa, *About Noble Partner* (2023). <https://www.europeafrica.army.mil/What-We-Do/Exercises/Noble-Partner/> (accessed 12.09.2023) (In Eng.)

Рафик Аветисян

*Научный сотрудник Института арменоведения ЕГУ,
кандидат политических наук
Эл. адрес: ravetisyan94@gmail.com*

ВЫЗОВЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ГРУЗИИ В КОНТЕКСТЕ ГЕОПОЛИТИЧЕСКОГО КОНФЛИКТА НАТО–РОССИЯ

В данной статье рассматриваются вызовы внешней политики Грузии, особенно проблемы развития российско-грузинских отношений и перспективы сотрудничества НАТО–Грузия. Геополитические изменения последних лет создают угрозы безопасности Грузии, поэтому Грузия пытается преодолеть вызовы региональной безопасности, балансируя свою внешнюю политику.

Цель исследования – оценить проблемы балансирования внешней политики Грузии в условиях геополитической конкуренции НАТО и России. Для достижения цели исследования проанализирована взаимосвязь внутривнутриполитического кризиса Грузии с ее внешней политикой, проблемы развития российско-грузинских отношений, перспективы сотрудничества НАТО–Грузия. Исследование проведено с учетом реалий Нагорно–Карабахской войны и российско–украинской войны. И, по оценкам, будущее российско–грузинских отношений и евроатлантические устремления Грузии будут зависеть от разрешения украинского кризиса и дальнейших процессов политических отношений России и Запада в Восточной Европе.

Ключевые слова: Российско–грузинские отношения, сотрудничество НАТО–Грузия, внешняя политика, внутривнутриполитический кризис, региональная безопасность, российско–украинская война.

Rafik Avetisyan

Researcher at the Institute for Armenian Studies of Yerevan State University,

PhD in Political Science

Email: ravetisyan94@gmail.com

GEORGIA’S FOREIGN POLICY CHALLENGES IN THE CONTEXT OF THE NATO–RUSSIA GEOPOLITICAL CONFLICT

This article discusses the challenges of Georgia’s foreign policy, in particular, the problems of the development of Russia–Georgia relations and the prospects of NATO–Georgia cooperation. The geopolitical changes of recent years create threats to Georgia’s security, so Georgia is trying to overcome regional security challenges by balancing its foreign policy. The purpose of the research is to evaluate the problems of balancing Georgia’s foreign policy in the conditions of NATO–Russia geopolitical competition. In order to achieve the goal of the research, we have analyzed the following issues: the interdependence of Georgia’s internal political crisis and foreign policy, the development issues of Russian–Georgian relations, the prospects of NATO–Georgia cooperation. The research was carried out by taking into account the realities of the Nagorno Kharabakh and the Russian–Ukrainian war. And according to estimates, the future of Russian–Georgian relations and Georgia’s Euro–Atlantic aspirations will be determined by the resolution of the Ukrainian crisis and the further course of Russia–West political relations in Eastern Europe.

Key words: Russia–Georgia relations, NATO–Georgia cooperation, foreign policy, internal political crisis, regional security, Russian–Ukrainian war.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. հոկտեմբերի 5–ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. հոկտեմբերի 25–ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. դեկտեմբերի 8–ին:

Անահիտ Սերոբյան

*Երևանի պետական համալսարանի քաղաքագիտության ամբիոնի հայցորդ
Էլ. հասցե՝ anahitserobyan99@gmail.com*

DOI: 10.53614/18294952-2023.2-61

ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՔԵՐԸ

Հոդվածում քննարկվում են «Արդարություն և զարգացում» կուսակցության սահմանած՝ Թուրքիայի արտաքին քաղաքականության ժամանակակից հայեցակարգային մոտեցումներին վերաբերող հարցեր: Անդրադարձ է կատարվում այդ քաղաքականության հիմնադիրներից մեկի՝ Ահմետ Դավիթօղլու «Ռազմավարական խորություն» մենագրության մեջ արտացոլված հայեցակարգային մոտեցումներին, որոնք առնչվում են Թուրքիայի դերին՝ փոփոխվող աշխարհակարգի պայմաններում: Թեմայի ուսումնասիրության հիմնական նպատակն է՝ վեր հանել տարածաշրջանային աճող անկայունությունը, անվտանգության խնդիրները, որոշ հարևանների հետ հարաբերությունների վատթարացումը, որդեգրած դոկտրինը, ներքաղաքական գործոնները, որոնք նպաստել են ավելի հաստատակամ և պրագմատիկ արտաքին քաղաքականության իրականացմանը: Ուսումնասիրությամբ փորձ է արվել ըմբռնել նոր իրողությունների խորապատկերին Թուրքիայի կողմից ձեռնարկվող քայլերի, այդ համատեքստում՝ Հարավային Կովկասում Թուրքիայի կիրառած, «կոշտ ուժի» և «փափուկ ուժի» զուգակցման քաղաքականության տրամաբանությունը և արդյունավետությունը՝ տարածաշրջանային մարտահրավերների հաղթահարման, իր ազգային շահերի պաշտպանության, հարևան երկրների հետ հարաբերությունների կայունացման տեսանկյունից:

Հիմնաբառեր: Թուրքիայի արտաքին քաղաքականություն, «Արդարություն և զարգացում» կուսակցություն, Ահմետ Դավիթօղլու, ռազմավարական խորություն, Հարավային Կովկաս, նեոօսմանիզմ, նեոպանթուրքիզմ:

Ներածություն

Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգի վերափոխման և առանցքային դերակատարների դերի փոփոխման համատեքստում պետությունների մեծ մասի ներքին և արտաքին քաղաքական ռազմավարությունները քարացած չեն մնում և ժամանակին համընթաց փոփոխվում են, և Թուրքիայի Հանրապետությունը, որը ստանձնել է Մերձավոր Արևելքի տարածաշրջանային ենթահամակարգում ուժի գլխավոր կենտրոններից մեկի դերը, բացառություն չի կազմում:

Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը տարբերվում է այլ պետությունների արտաքին քաղաքականության համեմատ, քանի որ շատ ավելի գաղափարականցված է: Ֆորմալ առումով դրանք միավորված չեն մեկ գաղափարախոսության մեջ, սակայն դրանք կայուն գաղափարաքաղաքական անկյունաքար են, որոնք լիովին կարելի է անվանել արտաքին քաղաքական գաղափարախոսություն: Հանրապետության գոյության ողջ ընթացքում այն չի փոխվել, սակայն «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո խաղաղույթները սկսեցին դրվել նոր գաղափարական տրամաբանության վրա: Արդյունքում կարելի է խոսել Թուրքիայի նոր պահպանողական արտաքին քաղաքականության ձևավորման մասին՝ ավելի մեծ շեշտադրմամբ ազգային և վերազգային (սեռօսմանիզմ, պանթուրքիզմ) շահերի և արժեքների վրա:

Մեթոդ

Հոդվածում կիրառվել են ժամանակագրական, պատմական և համեմատական մեթոդները: Ժամանակագրական մեթոդը օգտագործվել է դեպքերը դիտարկելու համար՝ հաշվի առնելով դրանց ժամանակագրական և տրամաբանական հաջորդականությունը: Պատմական մեթոդը թույլ է տալիս մեզ հետևել Թուրքիայի վարած քաղաքականության էվոլյուցիային, իսկ համեմատական մեթոդը մեզ թույլ տվեց համեմատել քաղաքական իրադարձությունները:

Արդյունքներ և քննարկում

Տարիների ընթացքում քենալիզմի սկզբունքները ենթարկվել է արմատական փոփոխությունների՝ աստիճանաբար նահանջելով դեպի անցյալ և իր տեղը զիջելով համաշխարհային քաղաքական ասպարեզում զարգացման նոր ուղենիշներին: Այդ այլընտրանքներից մեկն էլ Թուրքիայի նախկին արտգործնախարար և վարչապետ Ահմեդ Դավութօղլուի կողմից առաջարկված արտաքին քաղաքական դոկտրինն էր՝ «Զրո խնդիրներ հարևանների հետ» (Moskalenko, 2020, էջ 116): Դոկտրինան ընդունվել է 2008 թվականին և երկար ժամանակ որոշիչ գործոն է եղել Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: Այն հիմնված էր խաղաղության և արդարության սկզբունքի վրա և արտացոլում էր թուրքական իդեալիզմի էությունը: Առանցքային գաղափարը խաղաղ արտաքին քաղաքականություն վարելն էր, որը համապա-

տասխանում էր Աթաթուրքի աշխարհակարգի հիմնական սկզբունքին՝ «խաղաղություն երկրում՝ խաղաղություն ողջ աշխարհում»: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Մերձավոր Արևելքի այն պետություններին, որոնց հետ Թուրքիան բազմամակարդակ հարաբերություններ է հաստատել տարբեր ոլորտներում: Չնայած այն հանգամանքին, որ շոշափվել են նաև սոցիալ-մշակութային ասպեկտները, հիմնական նպատակը փոխշահավետ տնտեսական զարգացումն էր՝ պայմանավորված պետությունների միջև հակասությունները նվազեցնելու անհրաժեշտությամբ:

Ենթադրվում էր, որ նոր աշխարհակարգի պայմաններում Թուրքիան պետք է ակտիվ և բազմավեկտոր քաղաքականություն իրականացնի Օսմանյան կայսրության նախկին տարածքների նկատմամբ և այնտեղ ստեղծի ազդեցության գոտի: Ա.Դավութօղլուն, սկզբում մատնանշելով Եվրոպայի և Ասիայի միջև Թուրքիայի կապող դերը, հետագայում զարգացրեց իր գաղափարները և պնդեց, որ երկիրն «ունի ծայրամասից կենտրոնական պետության վերածվելու ներուժ» (Davutoğlu, Davutoglu 2004), այնուհետև՝ համաշխարհային խաղացողի: Որպես այս մոտեցման փաստարկ՝ նա զարգացրեց այն միտքը, որ Թուրքիան՝ որպես եվրոպական, բալկանյան, միջերկրածովյան, ասիական, մերձավորարևելյան, կովկասյան, սևծովյան պետություն, ունի «ռազմավարական խորություն» թե՛ աշխարհագրական, թե՛ պատմական հարթություններում: Հետևաբար՝ նա իրավունք ունի այս շրջաններում հանդես գալ որպես առաջատար և հաստատել իր վերահսկողությունը: Ըստ Ա.Դավութօղլուի, ապագայում համաշխարհային քաղաքականության կենտրոնը լինելու է Թուրքիան՝ վերահսկողությամբ Բալկաններով, Կովկասով և Մերձավոր Արևելքով (Cornell, 2012):

Բացի Թուրքիայի արտաքին քաղաքականության նեոօսմանյան տեսլականից, Ա.Դավութօղլուն զարգացրել է նաև համախլամական գաղափարներ: Նա կարծում էր, որ Թուրքիան անխուսափելիորեն պետք է վերահաստատի իր դերը որպես հզոր պետություն, որը, որպես «մոդել» հանդես գալով չափավոր իսլամիստական կուսակցության կառավարման և աճող ժողովրդավարացման համադրությամբ, կկառավարի մահմեդական աշխարհը և պրագմատիկորեն կհամագործակցի Արևմուտքի հետ (Matusiak, 2015, էջ 18):

Ա.Դավութօղլուի գաղափարները ներկայացվել են «Արդարություն և զարգացում» կուսակցության նախընտրական ծրագրերում, որոնք հանդիսանում են ներկայիս փուլում Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական հայեցակարգերի, ուղղությունների և խնդիրների ուսումնասիրման հիմնական աղբյուրները:

ԱԶԿ-ի 2007 թվականի նախընտրական ծրագիրն արդեն ավելի հստակ արտացոլում էր նրա առաջնորդների նեոօսմանական գաղափարները: Կուսակցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը հռչակեց երկրի՝ որպես միջազգային ազդեցիկ դերակատարի ձևավորումը: Ծրագիրը ցույց էր տալիս, որ անհրաժեշտ է տեղափոխել հետադիմական/պաշտպանական քաղաքականությունը դեպի հարձակողական արտաքին քաղաքականությունը: Ծրագիրն արտացոլում էր Թուրքիայի ար-

տաքին քաղաքականության տեսական և մեթոդաբանական հիմքերը, որոնք ներառում էին Ահմեդ Դավութօղլուի կողմից ընդգծված երեք «մեթոդաբանական սկզբունքներ»:

Սկզբունքներից առաջինը ենթադրում էր, որ Թուրքիան պետք է որոշակի մոտեցումներ ունենա տարածաշրջանային տարբեր խնդիրների լուծման հարցում և հրաժարվի հետադիմական քաղաքականությունից: Երկրորդ սկզբունքն այն էր, որ Թուրքիայի արտաքին քաղաքականությունը պետք է հիմնված լինի «տարբեր տարածաշրջանների հետևողականության և զարգացման վրա, որոնք պետք է ունենան ընդհանուր տրամաբանություն և չհակասեն միմյանց: Երրորդ սկզբունքը վերաբերում էր նոր դիսկուրսի և դիվանագիտական ոճի որդեգրմանը, որը պետք է հանգեցներ տարածաշրջանում Թուրքիայի «փափուկ ուժի» առաջնումանը:

2007 թվականի նախընտրական ծրագրում բացահայտվեցին նաև «գործնական սկզբունքներ»՝ ուղղված երկրի արտաքին քաղաքականության իրականացմանը: Այս սկզբունքներն ավելի հստակ ձևակերպվել են Ա.Դավութօղլուի հոդվածում: Հեղինակը առանձնացրել է 5 սկզբունք՝ ներառյալ անվտանգության և ժողովրդավարության հավասարակշռությունը, «գրո խնդիրներ հարևանների հետ», ակտիվ դիվանագիտություն, բազմակերպոր քաղաքականություն և Davutogluի թմիկ դիվանագիտություն (Davutoğlu, 2008, էջ 77):

Այսպիսով, երկրի արտաքին քաղաքականության գործնական սկզբունքներից առաջինի իմաստն այն էր, որ ցանկացած քաղաքական ռեժիմի լեգիտիմությունը պայմանավորված է քաղաքացիների անվտանգությունն ու ազատությունն ապահովելու կարողությամբ: Եթե երկրում չկա անվտանգության և ժողովրդավարության հավասարակշռություն, ապա իր շուրջը ազդեցության գոտի ստեղծելու հնարավորություն չի լինի: Ա.Դավութօղլուն նշել է, որ գերիշխող ժողովրդավարության հիման վրա ազատություն ապահովելու որոշումը ինքնաբերաբար կհանգեցնի հարևանների հետ զրոյական խնդիրների մակարդակի (Yeşiltas, 2014, էջ 11):

Երկրորդ սկզբունքը՝ «գրո խնդիր հարևանների հետ», որը Ա.Դավութօղլուն ձևավորեց դեռ 2004 թվականին, դարձավ առաջինի տրամաբանական շարունակությունը: Այս սկզբունքը ենթադրում էր քաղաքական երկխոսության, տնտեսական փոխկախվածության և մշակութային ներդաշնակության աճ: Այս մոտեցման արդիականությունը պայմանավորված էր նրանով, որ Թուրքիան ուներ բազմաթիվ պատմաքաղաքական խնդիրներ իր հարևանների հետ, որոնց հաղթահարման մեջ Ա.Դավութօղլուն տեսավ երկրի տարածաշրջանային քաղաքականության իրականացման հաջողությունը: Ա.Դավութօղլուն շեշտը դրել է տնտեսական հարաբերությունների զարգացման վրա, քանի որ կարծում է, որ միայն սերտ կապերը կօգնեն հաղթահարել քաղաքական տարաձայնությունները: Այս մոտեցումը ԱԶԿ-ը կարևորեց, քանի որ «տնտեսական փոխկախվածությունն ամենակարևոր միջոցն է Թուրքիայի համար՝ իր հարևանության մեջ խորության հասնելու համար», և երկկողմ հարաբերություններում գերակա նշանակություն պետք է տրվի տնտե-

սությանը, ոչ թե քաղաքականությանը կամ ռազմական բաղադրիչին: Այս սկզբունքի իրականացման առաջին տարիները ցույց են տվել իրենց արդյունավետությունը: Դա հաստատեցին փոխայցելությունները, Սիրիայի հետ բարդ հարաբերությունների բարելավումը, Հայաստանի հետ սահմանի բացման և դիվանագիտական հարաբերությունների հաստատման բանակցությունների մեկնարկը, Վրաստանի, ինչպես նաև Ադրբեջանի հետ Թուրքիայի համագործակցությունը որակապես տեղափոխվեց նոր մակարդակ: Թուրքիան սկսեց իր հարևանների հետ համաձայնագրեր ստորագրել առանց վիզայի ռեժիմի հաստատման մասին, ինչը խթան դարձավ երկկողմ հարաբերությունների զարգացման համար: Այսպիսով, ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակում Թուրքիային հաջողվեց բարելավել երկկողմ տնտեսական և մշակութային հարաբերությունները հարևան երկրների և հարևան տարածաշրջանների հետ՝ ստեղծելով իր ազդեցության գոտի:

Հարևան երկրների հետ Թուրքիայի հարաբերությունների բարելավումն ապահովել է երկրի արտաքին քաղաքականության երրորդ գործնական սկզբունքի իրականացումը, որը նախատեսում է նախաձեռնողական դիվանագիտություն, որի նպատակն էր քայլեր ձեռնարկել մինչև ճգնաժամերի առաջացումը և սրումը: Ա.Դավությանը պնդում էր, որ քաղաքական և տնտեսական կայունության ամրապնդումը թույլ կտա Թուրքիային միջնորդական դեր խաղալ հարևան տարածաշրջաններում և լծակներ տրամադրել: Թուրքիայի տարածաշրջանային ազդեցությունը տարածվում էր Բալկանների, Մերձավոր Արևելքի և Կովկասի վրա: 2011 թվականին Ա.Դավությանը Թուրքիայի դեսպանների տարեկան հանդիպման ժամանակ հռչակեց «իմաստուն երկրի» հայեցակարգը, որը կարող է իրականացվել հենց այս սկզբունքի շնորհիվ:

Չորրորդ սկզբունքը՝ հավատարմությունը բազմաչափ արտաքին քաղաքականությանը, այն էր, որ Թուրքիայի հարաբերությունները համաշխարհային այլ դերակատարների հետ պետք է լինեն փոխլրացնող, ոչ թե մրցակցային: Նման քաղաքականությամբ Թուրքիան ԱՄՆ-ի հետ հարաբերությունները դիտարկել է ռազմավարական գործընկերությանը համահունչ: Սա նշանակում էր, որ Ռուսաստանի հետ լավ հարաբերությունները այլընտրանք չէին ԵՄ-ի հետ հարաբերություններին, սակայն ԱՄՆ-ի հետ գործընկերությունը մրցակից գործընկերություն էր Ռուսաստանի հետ: Հատկանշական է, որ ԵՄ-ի և ԱՄՆ-ի հետ հարաբերությունները հասցվել են ծրագրի արտաքին քաղաքական բաժնի ավարտին՝ դրանով իսկ ցույց տալով կուսակցության ղեկավարության նպատակները՝ երկիրը վերածել Արևմուտքի հետ գործընկերոջ՝ անկախ խաղացողի: Այսպիսով, ԱԶԿ-ի ղեկավարությունը երկրի ներսում իր դիրքերն ամրապնդելուց հետո, գործընկերային հարաբերություններ պահպանելով Արևմուտքի հետ, սկսեց արտահայտել ԱՄՆ-ից և ՆԱՏՕ-ից անկախ արտաքին քաղաքականություն վարելու երկրի ցանկությունը:

Հինգերորդ սկզբունքը՝ միթմիկ դիվանագիտությունը, պետք է Թուրքիային ավելի ակտիվ դեր ապահովեր միջազգային հարաբերություններում: Այս սկզբունքը ենթադրում էր ակտիվ մասնակցություն բոլոր միջազգային կազ-

մակերպություններում և գլոբալ ու միջազգային նշանակության բոլոր հարցերում: Թուրքիան դարձավ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամ և նախագահեց Աֆղանստանի, Հյուսիսային Կորեայի և ահաբեկչության դեմ պայքարի երեք հիմնական հանձնաժողովները: Թուրքիան ստանձնեց ֆորումի նախագահությունը՝ հանուն բալկանյան պետությունների և նրանց ամենամոտ հարևանների միջև երկխոսության (2009 և 2010 թթ.): Թուրքիան նաև դարձավ G-20-ի անդամ, դիտորդի կարգավիճակ ստացավ Աֆրիկյան միությունում, ձեռք բերեց ռազմավարական երկխոսության մեխանիզմ Պարսից ծոցի համագործակցության խորհրդի հետ և դարձավ Արաբական լիգայի աշխատանքների ակտիվ մասնակից:

Չնայած 2000-ականներին «գրո խնդիր հարևանների հետ» քաղաքականությունն ընդհանուր առմամբ հաջող էր, 2011 թվականից տարածաշրջանային նոր գործընթացների զարգացման արդյունքում այն դադարել է ծառայել իր նպատակին (Weitz, 2015, էջ 85): Այն համոզմունքը, որ սերտ տնտեսական հարաբերությունները կարող են լուծել քաղաքական տարաձայնությունները, կասկածի տակ է դրվել: Թուրքիայի ղեկավարության հույսերը, որ երկրները չեն կենտրոնանա բացասական տարրերի վրա՝ տնտեսական հարաբերությունների բարելավումից դրական օգուտներ ստանալու համար, չարդարացան: Միննույն ժամանակ, Թուրքիան անտեսեց իր հարևանների վարչակարգերի և ժողովուրդների տարբերությունը, և պատահական չէ, որ քաղաքական տեսության և պրակտիկայում պնդում են, որ բանակցությունների ռազմավարությունը մեծապես կախված է մյուսի աշխարհայացքի ըմբռնումից (Hudson, 2014, էջ 39):

Թուրքիայում տնտեսական աճի տեմպերի հետագա դանդաղումը և մերձավորարևելյան գործընթացում ներգրավվածությունը հանգեցրին արտաքին քաղաքականության հարացույցի փոփոխության: Աշխարհի առաջատարներից մեկը դառնալն անհնարին դարձավ: Եթե 2011-ի նախընտրական ծրագրում արտաքին քաղաքականության բաժինը կոչվում էր «առաջատար երկիր», ապա 2015-ի նախընտրական ծրագրում այն կոչվում էր «առաջատար երկիր՝ տեսլականով» (AK Parti, 2015): Չնայած թուրք-արևմտյան հարաբերությունների վատթարացմանը՝ ծրագրում ԵՄ-ն նշվում էր որպես երկրի ռազմավարական առաջնահերթություն: Միաժամանակ նշվել է, որ Եվրամիության հետ հարաբերությունները ոչ թե այլընտրանք են այլ երկրների հետ հարաբերություններին, այլ լրացնում են դրանք: Եթե 2011 թվականի ծրագրում որպես նպատակ նշվում էր ԵՄ անդամակցությունը, ապա 2015 թվականի ծրագրում ընդգծվում էր ԵՄ երկրների հետ հարաբերությունների զարգացման կարևորությունը: Ա.Գավոթոլուն իր աշխատություններում նշել է, որ «Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին ցանկալի է, բայց դա չի համարվում Թուրքիայի միակողմանի կողմնորոշում» (Grigoriadis, 2010, էջ 9):

ԱԶԿ-ը նաև ճշգրտեց իր արտաքին քաղաքական մոտեցումը Հարավային Կովկասի նկատմամբ: Շեշուրը դրվեց «Թուրքիա-Ադրբեջան-Վրաստան» մեխանիզմի իրականացման վրա: ԱԶԿ-ի 2018-ի նախընտրական ծրագիրը չփոխվեց, փաստաթուղթը կենտրոնանում էր «եղբայրական» Ադրբեջանի

հետ հարաբերությունների ամրապնդման և «Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան» եռակողմ համագործակցության հետագա զարգացման վրա: Հայաստանի հետ հարաբերությունները չի դիտարկվել, և դա թույլ է տալիս պնդել, որ Թուրքիան ուշադրություն չի դարձնում Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման գործընթացին, նույնիսկ երկարաժամկետ հեռանկարում, շարունակում է հակադրել իր հարաբերությունները Ադրբեջանի և Վրաստանի հետ Ռուսաստան-Հայաստան ռազմավարական առանցքին: Միաժամանակ, ի տարբերություն նախորդ ծրագրերի, ընթացիկ ծրագրում ընդգծվում է Թուրքիայի դեկավարության ցանկությունը՝ զարգացնելու Ռուսաստանի հետ հետագա համագործակցությունը ոչ միայն տնտեսական հարաբերությունների, այլ նաև անվտանգության հարցերում:

«Արդարություն և զարգացում» կուսակցությունը արտաքին քաղաքականության մեջ հատուկ ուշադրություն է դարձրել էներգետիկայի ոլորտին: Երկիրն իրականացնում էր տարածաշրջանային նշանակության էներգետիկ նախագծեր՝ փորձելով դառնալ էներգետիկ հանգույց Կասպից ծովի տարածաշրջանի և Եվրոպայի միջև: Ահմեդ Դավութօղլուի կարծիքով՝ Թուրքիայի ռազմավարական դիրքը, նրա տեղը աշխարհի նավթային հոսքերը տարանցող պետությունների շարքում թույլ չտվեցին տարածաշրջանային քաղաքականություն ձևավորել «առանց Թուրքիայի» (Kaňa, 2013): Այսինքն՝ Թուրքիայի աշխարհագրական դիրքը ստեղծել է բոլոր պայմանները երկիրը, թեկուզ, էներգետիկ միջանցքի վերածելու համար:

Թուրքիայի էներգետիկ քաղաքականության հիմնական նպատակները շարադրված են 10-րդ Ազգային զարգացման ծրագրում (2014–2018 թթ.), որը հաստատվել է Թուրքիայի Ազգային Մեջլիսի 2013 թ. որոշմամբ: Հիմնական նպատակների թվում են հետևյալը. կախվածություն ներմուծումից՝ աղբյուրների և մատակարարման ուղիների դիվերսիֆիկացում, նավթի և գազատարների նախագծերի իրականացում, որոնք բարելավում են էներգաարդյունավետությունը և զարգացնում վերականգնվող էներգիայի աղբյուրները, բարձրացնելով մրցունակությունը էլեկտրաէներգիայի և բնական գազի շուկաներում: Ընդգծվել է, որ Թուրքիան պետք է դառնա էներգիա արտադրող երկրների և սպառողների միջև էներգետիկ հանգույց՝ իր աշխարհառաջնավարական դիրքի արդյունավետ օգտագործման միջոցով (Kalkıma, 2013, էջ 104–105):

Էներգետիկ ոլորտում միջնաժամկետ քաղաքականության գործողությունները ներկայացված են Թուրքիայի էներգետիկայի և բնական պաշարների նախարարության 2015–2019 թվականների ռազմավարական ծրագրում: Պլանը բաղկացած է 8 մասից, պարունակում է 16 նպատակ և 62 առաջադրանք: Ռազմավարական ծրագրի հիմնական առաջնահերթությունը էներգիայի մատակարարման անվտանգությունն է, քանի որ երկիրը ձգտում է բավարարել ածխաջրածնային ռեսուրսների աճող ներքին պահանջարկը: Էներգամատակարարման անվտանգությունը կարգավորվում է 3 քաղաքրիչով՝ հուսալի էներգետիկ ենթակառուցվածքի ապահովում, էներգետիկ ռեսուրսների օպտիմալ դիվերսիֆիկացում, պահանջարկի արդյունավետ

կառավարում: Ենթակառուցվածքը կապում է պահանջարկը և առաջարկը, և այդ բաղադրիչների բացակայությունը նշանակում է, որ մատակարարման անվտանգությունը չի կարող արդյունավետորեն ապահովվել: Էներգառեսուրսների դիվերսիֆիկացում նշանակում է վերացնել կախվածությունը մատակարարող երկրներից՝ մղելով Թուրքիային համագործակցել էներգառեսուրսներով հարուստ տարբեր երկրների հետ:

Այսօր, որպես Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր կուրսի ձևավորման մաս, հաճախ նկատվում է նաև թյուրքական ժողովուրդներին միավորելու միտում: Այս ամենը կապված է գաղափարական հայացքներով, որոնք այսօր կիսում է պետության ղեկավարությունը: Խոսքը նեոպանթուրքիզմի գաղափարախոսության մասին է, որը ներկայիս փուլում Թուրքիայի Հանրապետության արտաքին քաղաքականությունը բնութագրող կենտրոնական գաղափարական ուղղություններից է:

Նեոպանթուրքիզմը գաղափարական բարդ երևույթ է՝ բաղկացած մի քանի գաղափարախոսություններից: Պատմականորեն պանթուրքիզմը սերտորեն կապված է «պանթուրանիզմի» հետ, Թուրանը թյուրքական ժողովուրդների առասպելական պատմական համայնք է իրենց բնակության ողջ տարածքում՝ Բայկալից մինչև Բալկաններ: Հայեցակարգը ենթադրում է թուրքերի աջակցություն այս տարածքում մուսուլմաններին, ինչպես նաև օժանդակություն ենթակառուցվածքների կառուցման գործում: Ընդ որում, պանթուրքիզմը, ի տարբերություն պանթուրանիզմի, ավելի որոշակի ու գործնական հասկացություն է և ավելի շատ հենվում է ապագայի գաղափարների վրա, քան անցյալի հիմքերի վրա:

Ժամանակակից քաղաքականության տեսանկյունից, թվում է, թե վերոնշյալ ուղղությունները չափազանց հեռու են նման տեսակետների իրականացումից և պետության իրական քաղաքականության մեջ ինտեգրվելուց: Այնուամենայնիվ, ժամանակակից քաղաքական իրողությունների դիտարկումը հուշում է, որ այս բոլոր հասկացությունները ենթարկվել են միայն որոշ փոփոխությունների, բայց դեռևս բավականին արդիական են և իսկապես կիրառելի են գործնականում:

Ուսումնասիրությունը պարզեց, որ այսօր այդ գաղափարախոսությունները փոխարինվում են վերը նշված նեոպանթուրքիզմով, որն, ըստ էության, հիմնված է արդի վերաիմաստավորման ենթակա նույն գաղափարական դոգմաների վրա: Նեոպանթուրքիզմը մասամբ արտացոլված է Թուրքիայի Հանրապետության քաղաքականության մեջ, որը նա վարում է Կենտրոնական Ասիայի տարածքում և Ռուսաստանի Դաշնության թյուրքալեզու շրջաններում: Ժառանգելով պանթուրքիզմի սկզբունքները՝ դրա նոր տարբերակումը նաև ձգտում է հասնել թվարկված շրջաններում բնակվող թյուրքական ժողովուրդների էթնոմշակութային միավորմանը: Միակ տարբերությունն այն է, որ զարգացման ներկա փուլում Թուրքիան կարողանում է նման գաղափարներ իրականացնել նորարարական մեթոդների օգնությամբ՝ տնտեսական, մարդասիրական, ինչպես նաև «փափուկ ուժի» գործիքների միջոցով:

Խոսելով նաև նեոսոմանիզմի մասին, պետք է շեշտենք, որ թյուրքական

հասկացության մեջ նեոսմանիզմին բնորոշ է պետության կայսերական անցյալին հավատարիմ մնալը, ինչպես նաև գոյություն ունեցող հանրապետական Թուրքիայի միջոցով իրականում գոյություն չունեցող Օսմանյան կայսրության մեծությունը վերակենդանացնելու ցանկությունը: Նեոսմանիզմի գաղափարախոսության շրջանակներում հիմնական խնդիրներն են՝ Թուրքիայի վերադարձը զարգացման նախկին «կայսերական» մակարդակին. դրա հիմնական գործիքներն են ազդեցության ամրապնդումը՝ առաջին հերթին աշխարհի թյուրքական պետությունների վրա, ինչպես նաև սեփական սահմանների ընդլայնումը՝ վերադարձնելով Օսմանյան կայսրության փլուզումից հետո կորցրած տարածքները, հաջորդը՝ թյուրքական ժողովուրդների աստիճանական միավորումը սեփական գաղափարական կառույցներին ինտեգրվելու միջոցով՝ ազգային նոր ինքնության ձևավորման հետ մեկտեղ:

Թուրքիան պետական մակարդակով չի շտապում պաշտոնապես հայտարարել, որ արտաքին քաղաքականությունը նման գաղափարներ է հետապնդում, ինչը, սակայն, առանց դրա էլ չափազանց պարզ է: Նեոսմանիզմը դարձել է պետության չսաված արտաքին քաղաքական դոկտրինը Թուրքիայի Հանրապետության զարգացման ներկա փուլում:

Այսօր Ռ. Թ. Էրդողանը ապրում է կայսերական հավակնություններով և իր գաղափարների իրականացման նոր ռազմավարություններ է մշակում այս հայեցակարգի շրջանակներում:

Վերջին տարիներին պետության արտաքին քաղաքականության մեջ հաստատապես հաստատվել է «Եվրասիականության» ֆենոմենը, որը ենթադրում է Կենտրոնական Ասիայի, Կովկասի, ինչպես նաև Ռուսաստանի և Չինաստանի պետությունների և ժողովուրդների քաղաքական և տնտեսական փոխգործակցությունը: Ինչ վերաբերում է երկրների առաջին երեք բլոկներին, ապա Թուրքիան վարում է ինտեգրացիոն քաղաքականություն՝ ներգրավելով այդ պետություններին իր գաղափարական պարադիգմով: Ազդեցության գոյություն ունեցող տարբեր ձևաչափերը՝ պետական և ոչ պետական կազմակերպությունների, մշակութային կենտրոնների, կրթական ծրագրերի, ինչպես նաև ընդհանուր ազգության, արյան և կրոնի կոչերի միջոցով, ուղղակիորեն հաստատում են Թուրքիայի՝ պանթուրքիզմի գաղափարները կյանքի կոչելու քաղաքականությունը:

Աննկատ պետք է թողնել Մերձավոր Արևելքի տարածաշրջանը և աֆրիկյան մայրցամաքի երկրները, որտեղ Թուրքիան նույնպես փորձում է որոշակի կապեր կառուցել՝ դրանով իսկ ընդլայնելով իր ազդեցության գոտին նեոսմանիզմի հայեցակարգի շրջանակներում:

Հարցն այն է, թե որքանով է արդյունավետ այս ընթացքը հենց Թուրքիայի համար, քանի որ վերջին շրջանում նման պահվածքը բերում է միայն աշխարհաքաղաքական և իմիջային կորուստների: Նեոսմանիզմի հայեցակարգի իրագործման միակ տեսանկյուն արդյունքը մի շարք երկրների հետ հարաբերությունների փոփոխությունն է և Թուրքիայի Հանրապետության աստիճանական օտարացումը առանձին համաշխարհային ուժային կենտրոններից:

Այսպիսով, «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության ներքո Թուրքիայի արտաքին քաղաքականությունը զգալի փոփոխություններ է կրել, պետք է խոսել արտաքին քաղաքականության պահպանողական բաղադրիչի ամրապնդման մասին, այսինքն՝ ազգային շահերի վրա ավելի մեծ շեշտադրման մասին: Արժեքի և շահերի հարաբերակցության մեջ պետք է նշել արժեքային գործոնի և արևելյան մոտեցումների (առաջնորդի դերը և այլն) կարևորության աճը որոշումների կայացման գործում: Մասնավորապես, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը նշանավորվում է ազգային և վերագգային (սեռօսմանիզմ, պանթուրքիզմ) շահերի և արժեքների շեշտադրմամբ: Նեոօսմանիզմը ենթադրում է նվիրվածություն պետության կայսերական անցյալին, ինչպես նաև ցանկություն՝ վերակենդանացնելու Օսմանյան կայսրության մեծությունը:

Ուսումնասիրելով Թուրքիայի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները՝ կարող ենք անել հետևյալ ենթադրությունը՝ եթե 1990-ական թթ. Թուրքիան հետխորհրդային տարածքում հանդես էր գալիս որպես արևմտյան շահերի հովանավոր, ապա 2002 թվականից սկսեց ավելի ակտիվ քաղաքականություն վարել՝ աստիճանաբար հրաժարվելով ԱՄՆ-ի «կրտսեր գործընկերոջ» կարգավիճակից:

ԱԶԿ-ի օրոք Թուրքիայի արտաքին քաղաքականության տեսական և գործնական ասպեկտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տեսական հիմքը բաղկացած է նեոօսմանական տեսականի և պանիսլամական գաղափարների սինթեզից, որոնք ուղղված են երկիրը տարածաշրջանային առաջնորդի և գլոբալ խաղացողի վերածելուն:

Եզրակացություն

«Զրո խնդիր հարևանների հետ» սկզբունքը, որն ընկած էր երկրի արտաքին քաղաքականության հիմքում ԱԶԿ-ի կառավարման առաջին տասնամյակում՝ սկսած 2010-ական թթ. սկսեց լուրջ խնդիրների առաջ կանգնել՝ աստիճանաբար կորցնելով իր արդյունավետությունը: Դրա մասին են վկայում Թուրքիայի բարդ հարաբերությունները հարևանների մեծ մասի հետ, ինչպես նաև տարածաշրջանային բարդ խնդիրների կարգավորման հարցում նրա միջնորդական դերի անկումը:

Այս քաղաքականության հետագա իրականացման ընթացքում որոշակի խնդիրների առաջացումը պայմանավորված է նրանով, որ թուրքական իշխանությունները սխալմամբ հույս ունեին տնտեսական հարաբերությունները զարգացնելով հաղթահարել քաղաքական խնդիրները: Սա արդյունավետ է գործում միայն այն դեպքում, երբ ռազմավարական մակարդակում փոխըմբռնումը կարող է ծառայել որպես երկարաժամկետ հարաբերությունների երաշխավոր:

Այսպիսով, Ա.Դավութօղլուի դիրքորոշումների և ԱԶԿ-ի նախընտրական ծրագրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հարավային Կովկասը հանդիսանում է երկրի արտաքին քաղաքականության առաջնահերթ ուղղություններից մեկը: Թուրքիան տարածաշրջանն ընկալում է Լեռնային Ղա-

բաբաղի հակամարտության պրիզմայով, ինչի պատճառով էլ Հայաստանի հետ հարաբերությունները շարունակում են բարդ մնալ: Միննույն ժամանակ, զարգացնելով և խորացնելով իր հարաբերությունները Վրաստանի և Ադրբեջանի հետ, Թուրքիան փորձում է տարածաշրջանում ազդեցության գոտի ստեղծել՝ հակադրելով Ռուսաստան–Հայաստան ռազմավարական առանցքին Ադրբեջանի և Վրաստանի հետ ռազմավարական հարաբերությունների զարգացմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

- Cornell, S. (2012). What drives Turkish Foreign Policy // *Middle East Quarterly*. Vol. 18. – URL: <https://www.meforum.org/articles/2011/what-drives-turkish-foreign-policy#>.
- Davutoğlu, A. (2008). Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007 // *Insight Turkey*. Vol. 10. No 1. էջ 77.
- Grigoriadis, I. (2010). The Davutoğlu Doctrine and Thurkish foreign Policy // *ELIAMEP. Working paper* 8. էջ 9.
- Hudson, V. (2014). Foreign Policy Analysis: classic and contemporary theory. ROMANANDIITTFIELD, էջ 39.
- Matusiak, M. (2015). The Great Leap. Turkey under Erdogan. *OSW Point of View*. Warsaw. No. 51. P.18.93. էջ 109.
- Weitz, R. (2015). Turkey's New Regional Security Role: Implications for the United States // *Encyclopedia of Turkey*. ed. By Rivera D. New York: Nova. էջ 85.
- Yeşiltaş, M. (2014). Balcı A. A Dictionary of Turkish Policy in the AK Party Era: A Conceptual Map // *SAM*. No. 7. էջ 11.
- AK Parti 7 (2015). *Haziran Genel Seçimleri Seçim Beyannamesi*. – URL: <http://m.akparti.org.tr/site/dosya/59647>
- Davutoğlu, A. (2004). Türkiye merkez ülke olmalı // *Radikal*. 26 Şubat.
- Onuncu Kalkınma planı 2014–2018* (2013). // T.C. Kalkınma Bakanlığı. Ankara.S. էջեր 104–105. URL: <http://kcp.tarim.gov.tr/sp/Onuncu%20Kalk%C4%B1nma%20Plan%C4%B1%282014–2018%29.pdf>.

References

- Cornell S. (2012). What drives Turkish Foreign Policy // *Middle East Quarterly* Vol. 18. – URL: <https://www.meforum.org/articles/2011/what-drives-turkish-foreign-policy#>. (In Eng.)
- Davutoğlu A. (2008). Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007 // *Insight Turkey*. Vol. 10. No 1. Ej 77. (In Eng.)
- Grigoriadis I. (2010). The Davutoğlu Doctrine and Thurkish foreign Policy // *ELIAMEP. Working paper* 8. Ej 9. (In Eng.)
- Hudson V. (2014). Foreign Policy Analysis: classic and contemporary theory. ROMANANDIITTFIELD, Ej 39. (In Eng.)
- Matusiak, M. (2015). The Great Leap. Turkey under Erdogan. *OSW Point of View*. Warsaw. No. 51. P.18.93. Ej 109. (In Eng.)

- Weitz R. (2015). Turkey's New Regional Security Role: Implications for the United States // Encyclopedia of Turkey. ed. By Rivera D. New York: Nova. Eջ 85. (In Eng.)
- Yeşiltaş M. (2014). Balcı A. A Dictionary of Turkish Policy in the AK Party Era: A Conceptual Map // SAM. No. 7. Eջ 11. (In Eng.)
- AK Parti 7 (2015), Haziran Genel Seçimleri Seçim Beyannamesi [June General Election Election Declaration]. – URL: <http://m.akparti.org.tr/site/dosya/59647> (In Tur.)
- Davutođlu A. (2004) Türkiye merkez ülke olmalı [Türkiye should be the central country]// Radikal. 26 Şubat. (In Tur.)
- Onuncu Kalkınma planı 2014–2018* [Tenth Development plan 2014–2018] (2013). // T.C. Kalkınma Bakanlığı. Ankara. Ejer 104–105. URL: <http://kkp.tarim.gov.tr/sp/Onuncu%20Kalk%C4%B1nma%20Plan%C4%B1%282014–2018%29.pdf>. (In Tur.)

Анаит Серобян

Соискатель кафедры политологии Ереванского государственного университета

Эл. адрес: anahitserobyan99@gmail.com

КОНЦЕПТУАЛЬНЫЕ ОСНОВЫ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ

Эта статья посвящена изучению внешней политики Турции. В частности, рассматриваются региональные приоритеты, а также изучается доктрина «Ноль проблем с соседями». Основная цель изучения темы – выявить растущую региональную нестабильность, проблемы безопасности, ухудшение отношений с некоторыми соседями, принятую доктрину, внутривнутриполитические факторы, которые способствовали реализации более решительной и прагматичной внешней политики: результаты исследования позволят понять ориентацию внешней политики Турции на Южном Кавказе, политику «мягкой силы», а также позволят понять, какие шаги предпринимает Турция в сложной ситуации, стремясь защитить свои интересы, одновременно преодолевая региональные вызовы и сохраняя стабильность в соседних странах.

Ключевые слова: внешняя политика Турции, партия «Справедливость и развитие», Ахмет Давитоглу, стратегическая глубина, Южный Кавказ, неоосманизм, неопантюркизм.

Anahit Serobyán*Ph.D. student of Political Science Department at Yerevan State University,**Email: anahitserobyán99@gmail.com*

CONCEPTUAL FOUNDATIONS OF TURKISH FOREIGN POLICY AT THE PRESENT STAGE

This article is devoted to the study of Turkey's foreign policy. In particular, reference is made to the regional priorities, as well as to the study of the well-known doctrine "Zero problem with neighbors", the adopted doctrine, internal political factors that contributed to the implementation of a more firm and pragmatic foreign policy. The results of the study will help to understand the orientation of Turkey's foreign policy in the South Caucasus, the policy of "soft power", and will also help to understand what steps Turkey is taking in a difficult situation, seeking to protect its interests, while overcoming regional challenges and maintaining stability in neighboring countries.

Key words: Turkish foreign policy, "Justice and development" party, Ahmet Davitoglu, strategic depth, South Caucasus, neo-Ottomanism, neo-pan-Turkism.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. հոկտեմբերի 2-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. հոկտեմբերի 16-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. նոյեմբերի 17-ին:

Լիլյա Ավետիսյան
Հայաստանի պետական ​​​​տնտեսագիտական ​​​​համալսարանի
Մարքեթինգի ամբիոնի և Եվրասիա միջազգային համալսարանի
Կառավարման և ՏՏ ամբիոնի դոցենտ,
տնտեսագիտության թեկնածու,
Էլ. հասցե՝ L.a.avetisyan.l@gmail.com

DOI: 10.53614/18294952-2023.2-74

ՀՐՈՒՇԱԿԵՂԵՆԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՄԱՐՔԵԹԻՆԳԱՅԻՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀԵՏՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Հոդվածում ներկայացվել են մարքեթինգի արդի միտումները, վերլուծվել է հրուշակեղենի համաշխարհային շուկայի զարգացման դինամիկան ըստ ապրանքատեսակների, տարիքային խմբերի, գնային կատեգորիայի, բաշխման կապուղիների, տարածաշրջանների, ինչպես նաև վերհանվել են մարքեթինգի առանձնահատկությունները հրուշակեղենի շուկայի զարգացման ժամանակակից պայմաններում, ՀՀ հրուշակեղենի շուկայում գործող առաջատար ընկերություններից մեկի՝ «Գրանդ Քենդի»-ի մարքեթինգային գործունեության համակողմանի վերլուծության արդյունքում բացահայտվել են առկա հիմնախնդիրները և առաջարկվել դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:

Հիմնաբառեր. հրուշակեղենի շուկա, սոցիալական մեդիա մարքեթինգ, ինֆլյուենսեր մարքեթինգ, առցանց գովազդ, քաղցրավենիք, էլեկտրոնային առևտուր:

Ներածություն

Հրուշակեղենի համաշխարհային շուկան մշտապես զարգանում է: Մարդկանց փոփոխվող նախաստիքությունները տարեցտարի նոր մարտահրավեր-

ներ են նետում հրուշակեղեն արտադրող ընկերություններին՝ ստեղծելու նոր, ինքնատիպ, անսովոր համային համադրություններ: Հրուշակեղենի գործածությունը կրկնակի մեծացավ այն ժամանակ, երբ տարածվեց միմյանց շոկոլադ նվիրելու մշակույթը: Բրենդները, կիրառելով մարքեթինգային գործիքներ, շարունակաբար ստեղծում են տարբերվող, յուրահատուկ, գրավիչ մեթոդներ ապրանքի ներկայացման և դրա միջոցով սպառողների ուշադրությունը գրավելու համար, քանի որ հրուշակեղենը հիմնականում ձեռք է բերվում իմպուլսիվ գնումների արդյունքում:

ՀՀ հրուշակեղենի շուկան հագեցած է ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան արտադրանքով: Ինչ վերաբերվում է տվյալ ոլորտում մարքեթինգային գործունեությանը, հարկ է նշել, որ հրուշակեղենի համաշխարհային շուկայում մարքեթինգի նոր միտումները մասամբ են կիրառվում Հայաստանում: ՀՀ հրուշակեղենի ոլորտում գործող ընկերությունների շրջանում թերացումներ կան նաև սոցիալական ցանցերում մարքեթինգային գործունեության իրականացման հետ կապված: Վերոնշյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակն է բացահայտել մարքեթինգի զարգացման արդի միտումները հրուշակեղենի համաշխարհային շուկայում և դրանց դրսևորումները Հայաստանում՝ «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի օրինակով:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ ներկայացված առաջարկությունները, հիմնական դրույթներն ու արդյունքները կարող են օգտագործվել ՀՀ հրուշակեղենի ոլորտում գործող ընկերությունների, այդ թվում՝ «Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի մարքեթինգային գործունեության զարգացման և բարելավման գործընթացում:

Մեթոդ

Հետազոտության ընթացքում կիրառվել են խառը՝ և՛ քանակական, և՛ որակական մեթոդներ: Որակական մեթոդներից կիրառվել են գրականության և փաստաթղթերի վերլուծությունը, փորձագիտական հարցումը, իսկ քանակական մեթոդներից՝ իրականացվել է հարցում սպառողների շրջանում, որին մասնակցել են 150 ռեսպոնդենտներ: Մասնակիցները ընտրվել են պատահականության սկզբունքով: Հարցման նպատակն էր պարզել ՀՀ հրուշակեղենի շուկայի այն հիմնական խաղացողներին, որոնց ապրանքներին նախապատվություն են տալիս սպառողները, ինչպես նաև բացահայտել «Գրանդ Քենդի» ընկերության արտադրանքի և գործունեության վերաբերյալ սպառողների կարծիքները, վերաբերմունքը, առաջարկությունները: Հարցաթերթը կազմվել է «Գուգլ Ֆորմ» (Google Form) ծրագրի միջոցով և լրացվել է առցանց եղանակով:

Մարքեթինգի առանձնահատկությունները հրուշակեղենի համաշխարհային շուկայի զարգացման համատեքստում

Զեռնարկատերերը և շուկայագետները հետհամաձայնակային «նոր նոր-

մալ» միջավայրին հարմարվելու համար ստիպված են վերագնահատել գրեթե ամեն ինչ՝ բյուջեի հատկացումները, մարքեթինգային համալիրը, աճի և զարգացման ռազմավարությունները: Մարքեթինգային ստրատեգ Յուսի Հեբերը ներկայացնում է մարքեթինգի հետևյալ միտումները.

- Թվայնացման առավել արագ զարգացում:

Համաձայնակի սկզբից ի վեր մեր ընտանիքների հետ շփվելու, մեր գործերն անելու, բժիշկների հետ զրուցելու, ճանապարհորդելու, ազատ ժամանակ անցկացնելու և մեր «ամենօրյա» գրեթե բոլոր առաջադրանքները կատարելու մեջ լուրջ փոփոխություններ են եղել: Այդ փոփոխություններն արագացրել են թվային վերափոխումը ապշեցուցիչ մասշտաբներով և արագությամբ բոլոր ոլորտներում: Նույնիսկ COVID-19-ից հետո թվայինը որոշիչ դեր ունի բիզնեսների զարգացման գործում: Քանի որ հաճախորդները շարունակում են առավել հաճախակի շփում ունենալ թվայինի հետ, ընկերությունները պետք է արագ վերանայեն և արագացնեն թվային լուծումների զարգացումը:

- Առևտրի միգրացիան դեպի թվային միջավայր:

Ըստ McKinsey-ի¹, սպառողները հինգ տարվա թվային ադապտացիայի միջոցով անցել են ընդամենը ութ շաբաթվա ընթացքում: Ամբողջ աշխարհում մարդիկ դիմում են թվային և նվազեցված կոնտակտային եղանակներին ապրանքներին և ծառայություններին հասանելիություն ունենալու համար: Այս թվային միտումը, հատկապես վերաբերում է «Z» սերնդին, միլլենիալներին և ընդհանրապես ավելի բարձր եկամուտ ունեցող սպառողներին: Սոցիալական առևտուրը նույնպես աճում է, և մարդկանց 34 տոկոսը ասում է, որ գնումներ է կատարել Instagram-ից՝ հիմնվելով ինֆլուենսերների առաջարկությունների և գովազդների վրա: Այս անցումը ամենայն հավանականությամբ երկար կպահպանվի հատկապես այն պատճառով, որ էլեկտրոնային առևտուրը հաճախ ավելի արդյունավետ է, ավելի էժան հաճախորդների համար, քան խանութներից ֆիզիկապես գնումներ կատարելը: Մարքեթոլոգների համար դա ազդակ է վերանայելու սպառողների հետ կապ հաստատելու միջոցներն ու եղանակները: Ակնհայտ է, որ ավելի մեծ շեշտադրում է կատարվում էլեկտրոնային առևտրի և թվային ուղիների կիրառման վրա:

- Տունը՝ որպես կառավարման և հրահանգման կենտրոն:

Համաձայնակը տունը վերածել էր բազմաֆունկցիոնալ կենտրոնի՝ վայրի, որտեղ մարդիկ ապրում են, աշխատում, սովորում, գնումներ կատարում և խաղում: Շատ ընկերություններ և աշխատակիցներ փորձում են պահպանել հեռահար աշխատելառձը, քանի որ արդեն զգացել են որոշ առավելություններ: Հետաքրքիր է, որ բացի մթերքներից և տնային պարագաներից, տնային ժամանցը միակ կատեգորիան է, որտեղ ծախսերը կայուն են ինչպես ձգնաժամից առաջ, այնպես էլ ձգնաժամի ընթացքում և հետո: Մարքեթո-

1 Բիզնես կառավարման խորհրդատվական ընկերություն

լոգների համար դա կարող է նշանակել, որ նրանք պետք է վերանախագծեն գնորդի «ձանապարհորդությունը»: Տանը գնորդները ավելի հարմարավետ միջավայրում են. նրանք ցանկանում են տեսնել ընտրանքներ իրենց ներկայացված արտադրանքներում և ժամանակ ծախսել դրանց ուսումնասիրման համար: Նրանք չեն շտապում, ուստի նրանք կարող են ապրանքները «ավելացնել զամբյուղի մեջ», իսկ հետո վերադառնալ ավելին տեսնելու համար: Նրանք կարող են գնումներ կատարել տարբեր ժամերի՝ հարմարեցնելով հեռավար աշխատանքին: Նրանք կարող են ամբողջ ընտանիքի համար գնումներ կատարել մի քանի ապրանքային կատեգորիաներով:

- Նպատակը կարևոր է:

Ներկայիս պայմաններում, երբ շատերը կանգնած են ֆինանսական դժվարությունների առջև, բրենդները պետք է մտածեն, թե ինչ կարող են անել բարեգործության և սոցիալական պատասխանատվության տեսանկյունից: Գովազդի և սոցիալական հարթակներում գործունեությանը «նպատակային» հաղորդագրություն ավելացնելը կարող է դրական և նույնիսկ երկարատև տպավորություն թողնել սպառողների և հաճախորդների վրա: Եվ սա հատկապես կարևոր է, երբ թիրախավորում եք միլլենյալներին, ովքեր սովորաբար բրենդների նկատմամբ ավելի բարձր ստանդարտներ ունեն (Heber, 2021, էջ 7, 8, 9)

- SPARXOO-ն² ներկայացնում է այլ կարևոր փոփոխություններ մարքեթինգի ոլորտում:

Եթե «բոլորը լսում են միայն այն, ինչ հասկանում են» ասացվածքը ճիշտ է, ապա պարտադիր է, որ շուկայագետները օգնեն պոտենցիալ սպառողներին արագ հասկանալ իրենց արտադրանքը կամ ծառայությունները: Հաշվի առնելով դա՝ լավ է իմանալ, որ վիդեո շուկայավարողների 95 %-ը նկատել է արտադրանքի կամ ծառայության ըմբռնման բարելավվում սպառողների կողմից՝ տեսանյութի օգտագործման միջոցով: Վիդեո հոլովակների ճիշտ օգտագործման միջոցով կրճատվել են սպառողների աջակցման և սպասարկման կենտրոնների զանգերը, իսկ նոր սպառողների ներգրավումը և տպավորիչ կոնտենտի ստեղծումը պատճառներից մի քանիսն են, թե ինչու վիդեո մարքեթինգն ավելի կարևոր կդառնա հետագայում:

Երբ պոտենցիալ հաճախորդները հնարավորություն ունեն դիտելու ուսուցանող և տեղեկատվական տեսանյութեր ապրանքի կամ ծառայության վերաբերյալ, ապա 73 %-ը ամենայն հավանականությամբ գնումներ կատարելու որոշում կկայացնի: Տեսանյութերի ներգրավումը կարևոր է, եթե ցանկանում եք աչքի ընկնել անընդհատ աճող մարքեթինգային ուսուցողական ոլորտում: Կրթական, զվարճալի և գրավիչ վիդեո բովանդակություն ստեղծելու բազմաթիվ եղանակներ կան, բայց պետք է սկսել օգտատիրոջ, սպառողի ինքնությունից: Սա կօգնի որոշել, թե որ ռազմավարությունները լա-

2 Թվային մարքեթինգային գործակալություն, տեղակայված Ֆլորիդայի Թամպա քաղաքում, որը մասնագիտացած է թվային մարքեթինգի, SEO-ի, վճարովի մեդիայի, սոցիալական մեդիայի կառավարման և այլ գործունեության մեջ:

վագույնս կաշխատեն ընտրված թիրախային լսարանի համար: Վիդեոմարքեթինգի նորարարություններից մի քանիսը ներառում են 360° դիտման հնարավորություն, ինչը սպառողներին թույլ է տալիս ավելի վառ պատկերացում կազմել կազմակերպության ներկայացրած ապրանքի կամ ծառայության վերաբերյալ:

COVID-19 համաճարակի սկզբից ի վեր ամբողջ աշխարհում համացանցում անցկացրած միջին ժամանակը կտրուկ աճել է: 2020 թվականի սեպտեմբերի դրությամբ այն կրկնապատկվել է միջինում 3 ժամ 17 րոպեից մինչև 6 ժամ 59 րոպե (DoubleVerify): Այս տվյալները տեսնելուց հետո հարց է առաջանում. «Ի՞նչ են մարդիկ այդքան ժամ դիտում համացանցում»: ԱՄՆ-ում Ինտերնետ-գովազդի բյուրոն (Internet Advertising Bureau (IAB)) պարզել է, որ համացանցում անցկացրած ժամանակի կտրուկ աճը (30%-40%) պայմանավորված է տեսանյութերով, մասնավորապես առցանց տեսանյութով (YouTube, TikTok և այլն), հեռուստատեսային հեռարձակմամբ և առցանց գովազդով, առցանց ֆիլմերով: Մարդիկ օրական 6-7 ժամ անցկացնում են կոնտենտ դիտելով, և նրանց մի մասին հատկապես գրավում է սոցիալական մեդիան և երկարաժամկետ կոնտենտ ունեցող ծրագրեր, ինչպիսիք են հեռուստահաղորդումները և բազմասերիանոց սերիալները, ուստի ինչպես կարող ենք դա կիրառել բիզնեսում.

1. Սպառողների ուշադրության ծավալը ժամանակի հետ աստիճանաբար նվազում է, ուստի, անհրաժեշտ է ստեղծել հետաքրքրաշարժ բովանդակություն և պարզել, թե ինչպես հարմարեցնել բովանդակությունը լսարանի ուշադրությունը գրավելու համար:
2. Հաշվի առնելով մարքեթինգի զարգացման արդի միտումները՝ անհրաժեշտ է վերագնահատել մարքեթինգային գործունեության համար նախատեսված բյուջեն:
3. Անհատականացնել տեսանյութը կամ տեսանյութի որոշ մասերը՝ թիրախավորված լսարանի հետ ուղղակիորեն խոսելու համար: (SPARXOO, 2021, էջ 4,12):

Ոչ շատ ժամանակ առաջ ինֆլյուենսեր արտահայտությանը ակնածանքով էին վերաբերվում, իսկ երևույթը սովորաբար սահմանափակում էին՝ սոցցանցերում գեղեցիկ նկարներ տեղադրելով: Հիմա, սակայն, ինֆլյուենսերները կոտրել են այդ կարծրատիպերը և համարվում են շուկայի ուժեղ և վստահելի խաղացողներ: Ուստի արհամարհել նրանց, կնշանակի կորցնել բազմաթիվ հնարավորություններ և մեխանիկորեն մեկուսանալ ավելի երիտասարդ սպառողներից: Համաձայն McCarthy Group-ի³ կողմից կատարված հետազոտությունների՝ միլենիալների 84 %-ը հավանություն չի տալիս և չի վստահում ավանդական մարքեթինգին, մինչդեռ 57 %-ն ասել է, որ հաճույք և բավականություն է ստանում հովանավորչական կոնտենտ դիտելուց՝ «վստահելի անձանց», այսինքն ինֆլյուենսերների կողմից:

Ինֆլյուենսերը իրականում, պարզապես մարդ է, ով սոցիալական հար-

3 McCarthy Group, Inc.-ը մասնավոր ներդրումային և առևտրային բանկային ընկերություն է: Ընկերությունն իր դուստր ձեռնարկությունների միջոցով տրամադրում է ներդրումային, բանկային ակտիվների կառավարման և անշարժ գույքի խորհրդատվական ծառայություններ:

թականերում ունի մեծ լսարան, այսպես կոչված հետևորդներ, և որի խոսքը լսելի և ընդունելի է այդ լսարանի համար: Մարքեթոլոգները, տեսնելով դա, համագործակցում են ինֆլյուենսերների հետ իրենց ապրանքը կամ ծառայությունը մեղիա հարթականերում գովազդելու նպատակով (հիմնականում Instagram-ում և YouTube-ում): «Ազդելու» մարքեթինգը շուկայում արդեն առանցքային դեր ունի: Հարցումները ցույց են տվել, որ մարդկանց 74 %-ը այն օգտագործում են գնման որոշում կայացնելու համար, իսկ մարքեթոլոգների 75 %-ը գումար են հատկացնում նման եղանակով գովազդների իրականացման համար:

Մարքեթինգի այս տեսակը (Influencer Marketing) ապահովում է բարձր ROI (Return of investment. ներդրման վերադարձ), իսկ վերջին տվյալները ցույց են տալիս, որ յուրաքանչյուր դոլարի դիմաց, որոնք բիզնեսները ծախսում են ինֆլյուենսեր մարքեթինգի վրա, միջինում ստանում են 7,65 դոլար (Roberts, 2020, p. 14):

Մենդի ընտրության հարցում սպառողների նախասիրությունները տարբերվում են, կախված տարբեր գործոններից՝ սոցիոտնտեսական, առողջական, գնային, վարքաբանական, սոցիոդեմոգրաֆիական և այլն:

Մենդի շուկան ամենամրցակցայիններից է, ուստի մարքեթինգային համալիրի տարրերի կիրառման հետ մեկտեղ առանցքային նշանակություն ունի ապրանքի փաթեթավորումը: Այն կարող է սպառողի մոտ ասոցացվել պրոդուկտի առողջարար կամ ոչ առողջարար լինելու հետ (Martinho, 2020, էջ 7):

Հրուշակեղենի շուկան տնտեսության աճող ոլորտներից մեկն է: Հրուշակեղենը վերաբերում է սննդի այն տեսակներին, որոնք հարուստ են շաքարով և ածխաջրերով: Այն ներառում է ապրանքների լայն տեսականի, ինչպիսիք են շոկոլադը, թխվածքաբլիթները, սալիկները, ծամոնները, անանուխը և այլն: Որպես կանոն, հրուշակեղենային արտադրանքը քիչ սննդանյութեր է պարունակում և ունի բարձր կալորիականություն:

Հրուշակեղենի շուկան կարելի է բաժանել երկու լայն կատեգորիաների՝ շաքարավազի հիմքով հրուշակեղենի և խմորային հիմքով հրուշակեղենի: Շաքարավազի հիմքով հրուշակեղենը իր մեջ ներառում է կոնֆետներ, շոկոլադներ և մաստակ: Խմորային հիմքով հրուշակեղենը ներառում է խմորեղեն, տորթեր, բլիթներ և թխվածքաբլիթներ:

Սպառողների սովորությունները, ճաշակները և նախասիրությունները մշտապես զարգանում են: Սա հանգեցրել է հրուշակեղենի ոլորտում նորարարությունների, որոնք խթանում են շուկայի աճը: Արտադրողները ընդլայնում են իրենց արտադրանքի տեսականին՝ ներառելով ֆունկցիոնալ բաղադրիչներ, օրգանական բուսական լցոնումները, արևադարձային մրգեր ու ընկույզի վրա հիմնված և էկոտիկ համեր արտադրանքի ձևավորման և արտադրության մեջ՝ սպառողների փոփոխվող պահանջները բավարարելու համար: Ավելին, հրուշակեղենային ապրանքների նվիրելու միտումը, ինչպիսիք են թխվածքաբլիթները, շոկոլադները, վերջին տարիներին զգալիորեն նպաստել են հրուշակեղենի շուկայի աճին:

Հրուշակեղենի համաշխարհային շուկան 2019 թվականին գնահատվել է 210,3 միլիարդ դոլար, և կանխատեսվում է, որ մինչև 2027 թվականը կհասնի 270,5 միլիարդ դոլարի՝ գրանցելով 3,6% համակցված տարեկան աճ (Compound annual growth rate (CAGR)): (Bhavana, Roshan, 2020):

Հրուշակեղենի շուկայի վերլուծության շրջանակներում շուկան բաժանված է ըստ ապրանքատեսակի, տարիքային խմբի, գնային կատեգորիայի, բաշխման կապուղիների, տարածաշրջանի:

Կախված ապրանքի տեսակից՝ շուկան բաժանվում է հետևյալ մեծ հատվածների. պինդ կոնֆետներ, անանուխ, մաստակներ և դոնդոլ, շոկոլադ, կարամել և իրիս, դեղագործական հրուշակեղեն, թխվածքներ: Ըստ տարիքային խմբերի՝ շուկան բաժանված է երեխաների, մեծահասակների, ծերաբուժության (առնչվում է ծերերին, հատկապես նրանց՝ ուլքեր ունեն առողջությանը վերաբերող խնդիրներ): Կախված գնային կատեգորիայից՝ շուկան բաժանվում է հետևյալ հատվածների. էկոնոմ դասի, միջին գնային, թանկարժեք: Ըստ բաշխման ուղիների տարբերում ենք. սուպերմարկետներ կամ հիպերմարկետներ, մթերային խանութներ, դեղատներ, հասարակական սննդի հաստատություններ, մաքսային դաշտից դուրս խանութներ (Duty-free), էլեկտրոնային առևտուր և այլն: Ըստ տարածաշրջանի՝ առանձնացնում ենք. Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Ասիա-խաղաղօվկիանոսյան, LAMEA (Լատինական Ամերիկա, Մերձավոր արևելք և Աֆրիկա):

Ըստ ապրանքատեսակների՝ 2019 թվականին գերիշխող էր շոկոլադի կատեգորիան՝ 35,2% շուկայական մասնաբաժնով: Բոլոր տարիքային խմբերի սպառողները օգտագործում են շոկոլադե հրուշակեղեն՝ իրենց համային պահանջումները բավարարելու համար: Տնտեսական աճը, հատկապես զարգացող տնտեսություններում, մեծ խթան է դարձել շոկոլադի հատվածի շուկայի համար: Բացի այդ, շոկոլադը մի քանի երկրներում մեկ շնչի հաշվով (կգ) ամենաշատ սպառվող հրուշակեղենն է:

Շոկոլադե արտադրանքների հատվածը հսկայական և դինամիկ զարգացող շուկա է, որի համաշխարհային մանրածախ վաճառքների ծավալը 2023 թվականի ավարտին կգերազանցի 107 միլիարդ եվրոն / 128 млрд. դոլարը, իսկ CAGR կկազմի 1,9% առաջիկա երեք տարիներին (Euromonitor, 2023):

Այնուամենայնիվ, կանխատեսվող ժամանակահատվածում (մինչև 2027թ.) ակնկալվում է, որ դեղորայքային հրուշակեղենի հատվածը կաճի ավելի արագ տեմպերով: Հիվանդությունների և առանց դեղատոմսի դեղերի կամ սննդային հավելումների տարածվածության աճը պահանջում է ակտիվ բաղադրիչներ, ինչպիսիք են հակաօքսիդները, վիտամինները և բուսական էքստրակտները: Այս ապրանքները մեծապես խթանում են դեղագործական հրուշակեղենի հատվածի աճը: Բացի այդ, ակնկալվում է, որ առաջիկա 10 տարիների ընթացքում ծերաբուժական բնակչության արագ աճը կարագացնի դեղագործական հրուշակեղենի շուկայի աճը: Դեղորայքային հրուշակեղենի սեգմենտը կգրանցի ամենաարագ աճի տեմպը՝ կանխատեսվող ժամանակահատվածում գրանցելով 4.1% տարեկան աճ (Bhavana, Roshan, 2020):

Աշխարհում հրուշակեղենի սպառողների մեծ մասը գտնվում է մեծահա-

սակների տարիքային տիրույթում (16-ից 60 տարեկան): Բացի այդ, բրենդները իրենց գործունեությունը ուղղվում են այս տարիքային խմբին, կիրառելով այնպիսի հնարներ, ինչպիսիք են անսովոր գույները, սառնաշաքարները, կծու և թթու տարբերակները, սառեցման էֆեկտները, ինչպես նաև ավելի անհատականացված փաթեթավորումը: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ տարեցների հատվածը կաճի ավելի բարձր CAGR-ով կանխատեսվող ժամանակահատվածում (մինչև 2027թ.): Հաջորդ տասնամյակում բնակչության մեծ մասը, հատկապես զարգացած տնտեսություններում, կլինի 60 և ավելի տարեկան: Բացի այդ, կանխատեսվում է, որ հրուշակեղենի պահանջարկը կտարբերվի ներկայիս օրինաչափությունից: Ակնկալվում է, որ այս փոփոխությունը մեծ հնարավորություններ կստեղծի հրուշակեղենի շուկայում՝ ուղղված ծերաբուժական հատվածին: Կանխատեսվող ժամանակահատվածում ամենաարագ աճի տեմպերը կարձանագրվեն ծերաբուժական սեգմենտում՝ գրանցելով 4,5% տարեկան աճի ցուցանիշ:

Գնային կատեգորիայի առումով էկոնոմ դասը ունի զգալի շուկայական մասնաբաժին: Այս դասի հրուշակեղենային արտադրանքն ուղղված է մեծ մասամբ զանգվածային սպառմանը: Այն իր մեջ ներառում է ամենացածր, ամենամատչելի գներով ապրանքներ և, ընդհանուր առմամբ հասանելի է բոլոր երկրների սպառողներին: Այնուամենայնիվ, ակնկալվում է, որ կանխատեսվող ժամանակահատվածում միջին գնային շուկայական հատվածը կաճի ավելի բարձր CAGR-ով (3.7%): Կանխատեսվում է, որ տնօրինվող եկամտի և այնպիսի գործոնների դերի աճը, ինչպիսիք են արտադրանքի նորարարությունը, սպառողների ճաշակը/կենսակերպը և մարքեթինգային/գովազդային գործունեությունը, կխթանեն միջին դասի հրուշակեղենի շուկայի աճը:

Բաշխման կապուղիների առումով մեծ շուկայական մասնաբաժնով առանձնանում է սուպերմարկետ/հիպերմարկետ կատեգորիան (մոտ 38%): Հրուշակեղենի շուկայի սուպերմարկետների/հիպերմարկետների հատվածի աճը պայմանավորված է հասուն և զարգացող շուկաներ սուպերմարկետների/հիպերմարկետների ներթափանցման աճով: Այնուամենայնիվ, կանխատեսվող ժամանակահատվածում ակնկալվում է, որ էլեկտրոնային առևտրի հատվածը կաճի ավելի բարձր CAGR-ով (5.7%): Հրուշակեղենի վաճառքի առցանց պորտալների ստեղծումը, հատկապես ինտերնետից օգտվող բնակչություն մեծ զանգված ունեցող զարգացող երկրներում, խթանում է շուկայի աճը: Ինտերնետ հարթակը մի շարք զեղչեր է առաջարկում հրուշակեղենի առցանց գնման դեպքում՝ ավելի շատ հաճախորդներ ներգրավելու համար: Առաջատար տեխնոլոգիաների զարգացումը խթանում է առցանց բիզնեսի աճն ամբողջ աշխարհում:

Տարածաշրջանային առումով դոմինանտ է Եվրոպան, որին հետևում են Հյուսիսային Ամերիկան և Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը: ԱՄՆ-ն ներկայացնում է հրուշակեղենի խոշորագույն շուկա աշխարհում, որին հետևում են Չինաստանը և Մեծ Բրիտանիան: Հնդկաստանը հանդիսանում է առանցքային շուկա Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում

և ամենաարագ աճող հրուշակեղենի շուկան աշխարհում (Global Confectioneries Industry Research Report, 2022):

Առանց շաքարի հրուշակեղենի համաշխարհային շուկայի ծավալը կազմեց 2,1 միլիարդ դոլար 2022 թվականին: Կանխատեսվում է, որ 2028 թվականին շուկան կհասնի 2,8 միլիարդ դոլարի՝ արձանագրելով 4,5% աճի տեմպեր (CAGR) 2023–2028 թվականների ընթացքում: Առողջ ապրելակերպի տարածումը, դիետիկ սահմանափակումների ուժեղացումը, պետական կարգավորման ներդրումը, տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը, ագրեսիվ մարքեթինգային և գովազդային գործունեությունը, տնօրինվող եկամտի աճը և մանրածախ առևտրի օնլայն և օֆլայն կապուլիների ընդլայնումը հանդիսանում են այն հիմնական գործոնները, որոնք խթանում են շուկան (Sugar-Free Confectionery Market Report 2023–2028):

Երբ խոսքը վերաբերում է քաղցրավենիքին, շատ մարդիկ հավատարիմ են իրենց մանկության սիրելի համերին, բայց նաև հետաքրքրվում են նոր և համարձակ համերով: Հրուշակեղենի շուկայում այժմ գովազդվում են համեր, որոնք տարբեր խոհանոցների և մշակույթների ասոցիացիաներ են առաջացնում, ինչպիսիք են կանաչ թեյի կամ սակեյի համով կոնֆետները, ինչպես նաև յուրահատուկ համային համադրություններ, ինչպիսիք են կիվիի և նեխուրի համով մաստակներ կամ վասաբիի և կոճապղպեղի համով մարշմելլոններ: Այս տիպի պրոդուկտները արկածային փորձառություն են ստեղծում՝ առաջացնելով անսովոր համային զգացողություններ:

Հրուշակագործները ունեն խնդիր ոչ միայն մտածելու նոր համերի մասին, այլև պահպանել արտադրանքի առողջ բաղադրությունը և թափանցիկությունը: Քաղցրավենիքը հաճույք է, ուստի դրա օգտագործումը պետք է չափավոր լինի: Արտադրողները պետք է օգնեն սպառողներին, որ ոչ միայն հաճույք ստանան քաղցրավենիքի օգտագործումից, այլև վերահսկեն շաքարի օգտագործումը՝ արտադրանքի հստակ և թափանցիկ մակնշմամբ (Cargill, 2020, էջ 2, 3, 4):

Այսպիսով, սպառողները շարունակում են օգտվել իրենց սիրելի քաղցրավենիքներից, սակայն նաև փնտրում են նոր և տարբերվող համեր իրենց պահանջմունքները բավարարելու համար:

«Գրանդ Քենդի» ՍՊԸ-ի մարքեթինգային գործունեության վերլուծությունը

«Գրանդ Քենդի» ընկերությունը Հայաստանի Հանրապետության սննդի արդյունաբերության ամենախոշոր ձեռնարկություններից մեկն է: Այն հիմնադրվել է 2000 թվականին: Գործարկելով նոր արտադրամասեր, տարեցտարի ավելացնելով աշխատատեղերը, արտադրության ու վաճառքի ծավալները՝ «Գրանդ Քենդի» ընկերության արտադրանքն այսօր զբաղեցնում է Հայաստանի Հանրապետության հրուշակեղենի շուկայի զգալի մասը: Արդյունավետ կազմակերպված արտադրության շնորհիվ կարճ ժամանակահատվածում «Գրանդ Քենդի» ընկերությունն իր հաստատուն տեղն է զբաղեցրել

շուկայում՝ սպառողներին ներկայացնելով արդեն իսկ հայտնի ավանդական, ինչպես նաև տեղական շուկայի համար յուրահատուկ նոր արտադրատեսակներ: «Գրանդ Քենդի» ընկերության ողջ անձնակազմն առաջնորդվում է մեկ կարգախոսով՝ «Մենք արտադրում ենք ուրախություն» («Գրանդ Քենդի» ընկերություն, 2023):

Ընկերության մարքեթինգային գործունեությունը ուսումնասիրելու համար իրականացվել է մարքեթինգ-միքսի՝ 4P-երի համալիրի վերլուծություն:

Ապրանք (Product): «Գրանդ Քենդի» ընկերությունն արտադրում է ավելի քան 400 անուն ապրանքատեսակ: Ներկայումս կազմակերպությունը իրականացնում է հրուշակեղենի, պաղպաղակի, սուրճի, սառը սուրճի և թեյի արտադրություն:

Հրուշակեղենի տեսականին իր մեջ ներառում է կարամել, դրաժե, շոկոլադ, շոկոլադե ընտրանի, շոկոլադե սալիկներ, JOYCO, բիսկվիթ, վաֆլի, մրգանուշ, ռահաթ-լոխում, թխվածքներ:

Կարամելի տեսականին բաղկացած է 42 անուն արտադրանքից, որի մեջ ընդգրկված են սառնաշաքարային, մրգային, կաթնային, ընկույզի, պոմադային միջուկով և շոկոլադապատ տեսակներ, ինչպես նաև անուշահամ իրիս:

Դրաժեի տեսականին ընդգրկում է 25 անուն արտադրանք, որոնք բաժանվում են 2 տեսակի՝ շոկոլադապատ և շաքարային ջնարակով պատված: Տեսականու մեջ, որպես առաջնային հումք, օգտագործվում են բարձրորակ նուշ, գետնանուշ, պնդուկ, ընկույզ, արևածաղկի սերմեր, չամիչ, կոկոսի քերուկ, քունջութի սերմեր, որոնք պատված են բնական կակաո-հատիկավորից պատրաստված ջնարակով: Առանձնահատուկ են շոկոլադե ջնարակով պատված մրգերի չրերը:

Շոկոլադի ապրանքատեսականին բաղկացած է 58 անուն պոմադային, պրալինե, վաֆլե և կրեմային շոկոլադե կոնֆետներից՝ ջնարակապատ շոկոլադով: Ապրանքացանկի մեջ իրենց ուրույն տեղն են զբաղեցնում նրբահամ տրյուֆելները և 4 տեսակի շոկոլադե կրեմները՝ ավանդական և վանիլային համերով, ինչպես նաև գետնանուշի և պնդուկի հավելումներով:

Շոկոլադե ընտրանու տեսականին ներառում է 120-500 գր քաշով 37 անուն կոնֆետների ամենաբազմազան միջուկներով պատրաստված ընտրանի՝ կակաո մթերքներից, կոկոսի քերուկից և ընկուզեղենից: Տեսականին պարունակում է շոկոլադե սալիկներ, պոմադային, պրալինե, կրեմային կոնֆետներ, բազմատեսակ շոկոլադե կոնֆետներ, ինչպես նաև ձեռքով պատրաստվող 3 տեսակի բացառիկ կոնֆետներ:

Շոկոլադե սալիկների տեսականին ներառում է 35 անուն ապրանք՝ պատրաստված բարձրորակ կակաո-հումքով և բնական զանազան հավելումներով:

2014 թվականին «Գրանդ Քենդի» ընկերությունն սկսեց «JOYCO» շոկոլադե կոնֆետների արտադրությունը՝ օգտագործելով չրեր և տարատեսակ ընկուզեղեն՝ պատված բարձրորակ շոկոլադով, ինչպես նաև ելակի չիր պնդուկով, արմավի չիր պիստակով, սալորաչիր նուշով, թզի չիր ընկույզով, բալի

չիր պնդուկով, դեղձի չիր նուշով և ծիրանաչիր ընկույզով: «JOYCO» ապրանքանիշով սպառողը կարող է ձեռք բերել 79 տեսակի շոկոլադե կոնֆետներ, կարամել, դրաժե, վաֆլի, մրգանուշ, ռահատ-լոխում, սուրճ և յուրօրինակ դիզայն ունեցող կոնֆետատուփերով:

Բիսկվիթների տեսականին ներառում է 30 անուն թխվածքաբլիթներ, որոնք պատրաստված են բարձրակարգ ցորենի ալյուրից՝ մրգային, շոկոլադե և կաթնային հավելումներով: Շոկոլադապատ տեսականին շոկոլադի սիրահարների առանձնահատուկ ընտրության հնարավորություն է ընձեռնում: Տեսականու մեջ իրենց ուրույն տեղն ունեն նաև աղի ձողիկները, կրեմային միջուկով երկշերտ թխվածքաբլիթները, մանկական շաքիթ թխվածքաբլիթները, որոնք առավել հազեցած են կաթնային մթերքներով:

Վաֆլիների բաժնում ներառված են շոկոլադե, ընկուզային, կաթնային, մրգային կրեմի փափուկ շերտերով 20 անուն վաֆլիներ, որոնք նաև շոկոլադապատ են:

Մրգանուշի տեսականին իր մեջ ներառում է 4 անուն գունեղ և քաղցրահամ արտադրանք՝ պատրաստված բարձրորակ հումքերից: Առանձնահատուկ են նաև դառը և կաթնային շոկոլադով ջնարակապատ մրգանուշները:

«Ռահաթ-լոխում» արևելյան քաղցրավենիքը ներկայացված է 9 անուն նրբահամ տեսականիով, որ արտադրվում է միայն բարձրորակ բնական հումքից: Տեսականին ներառում է վանիլային, ընկույզի հավելումներով և վարդի յուղով տեսակները: Առանձնահատուկ է նաև կաթնային շոկոլադով ջնարակապատ տեսականին: Բոլոր տեսակները վաճառվում են թե՛ առանձին փաթեթավորմամբ, թե՛ հավաքածուի տեսքով:

Թխվածքների տեսականին ընդգրկում է մրգային, մեղրային, ընկույզի և շոկոլադե հավելումներով 24 անուն ավանդական տորթեր, 27 անուն քաշային և 30 տեսակ հատային խմորեղեն: Հատուկ հանդիսությունների համար սպառողին են առաջարկվում նաև 20 հատ և 40 կտոր խմորեղեն պարունակող «Ֆուրշեթ» խմորեղենի հավաքածուները:

Պաղպաղակի տեսականին պատրաստվում է անարատ կաթնային հումքից և ներառում է 78 անուն ապրանքատեսակ: Սերուցքային, շոկոլադե, մրգային և այլ բնական հավելումներով պաղպաղակներն արտադրվում են թե՛ քաշային, թե՛ հատային տարբերակներով: Ցուրահատուկ տեղ են գրավում ջնարակապատ և ոչ ջնարակապատ էսկիմոները, բրիկետները, պլիէթիլենային տոպրակներով, պլաստիկ տարաներով ներկայացված տեսականին, ինչպես նաև վաֆլե բաժակով պաղպաղակները: Ի դեպ, վաֆլե բաժակներն ևս արտադրվում են ընկերության գործարանում:

Սուրճի տեսականին ներառում է «արաբիկա» և «տորուստա» տեսակի ամենատարբեր բույրերով և համերով 33 անուն սուրճ, որ վաճառվում է և՛ քաշային (աղացած և հատիկավոր) տարբերակով, և՛ 100-գրամանոց փաթեթավորմամբ: Սուրճը ներկրվում է աշխարհի 12 երկրներից:

Ընկերությունը նաև սառը սուրճ և 3 տեսակի սառը թեյ է արտադրում՝ դասական սև, կիտրոնով ու դեղձի համով:

«Գրանդ Քենդի» ընկերությունում ներդրված է ISO 9001 միջազգային

ստանդարտին համապատասխան Որակի կառավարման համակարգ, ինչպես նաև արտադրական բոլոր փուլերի համար նախատեսված միջազգային ISO 22000 Սննդի անվտանգության կառավարման ստանդարտի պահանջներին համապատասխան ռիսկերի կառավարման վերլուծության համակարգ: Միաժամանակ «Գրանդ Քենդի» ընկերությունը ներառված է հեղինակավոր GFSI համակարգով սերտիֆիկացված ընկերությունների ցանկում և սերտիֆիկացված է FSSC 22000 միջազգային ստանդարտի պահանջներով: «Գրանդ Քենդի» ընկերության արտադրանքի առավելությունն ու բարձր որակի գրավականը բացառապես բնական հումքն է, ինչպես օրինակ՝ կակաո մթերքը և կաթնամթերքը, ընկուզեղենը և թարմ մրգերից պատրաստված կիսաֆարրիկատները: Չնայած այս հումքատեսակների բարձր գնին՝ ընկերությունը բացառում է փոխարինող նյութերի և արտադրության մեջ արհեստական հավելումների օգտագործումը:

Գին (Price): Ընկերությունը իրականացնում է միջին գների ռազմավարություն, այդպիսով իր արտադրանքը հասանելի դարձնելով բոլոր սոցիալական խմբերի համար:

Բաշխում (Place): Հրուշակեղենի առաքումն իրականացվում է 270 բեռնատար ավտոմեքենաներով սեփական մանրա-մեծածախ ցանցով, ՀՀ 8 շրջաններում տեղակայված բազաներով, 29 ֆիրմային խանութներով՝ այսպիսով՝ սպասարկելով ցանցային, մեծածախ և մանրածախ սննդի առևտրով զբաղվող 8450 կետ: Այսօր «Գրանդ Քենդի»-ն անմիջականորեն մատակարարում է Հայաստանի առևտրի կետերից 99.9 տոկոսին:

2000 թվականին սկսվել է «Գրանդ Քենդի» ընկերության ֆիրմային խանութների ցանցի ստեղծումը. դրանցից առաջինը «Պոնչիկանցն» է: Այսօր ՀՀ տարածքում գործում են 29 ֆիրմային խանութներ, որոնցից 21-ը, ներառյալ 10 խանութ-սրճարանները, Երևանում են գտնվում:

Առաջնորդում (Promotion): Ընկերությունը կիրառում է մարքեթինգային հաղորդակցությունների հիմնական գործիքները՝ գովազդ, հասարակայնության հետ կապեր (PR), իրացման խթանում, ուղղակի մարքեթինգ:

Ընկերությունը իրականացնում է գովազդային գործունեություն ինչպես հեռուստատեսությամբ, այնպես էլ համացանցում: Սոցիալական ցանցերից ընկերությունը հիմնականում ակտիվություն է ցուցաբերում ֆեյսբուքյան հարթակում:

2010 թվականի սեպտեմբերի 10-ին «Գրանդ Քենդի» ընկերությունը նոր համաշխարհային ռեկորդ է սահմանել՝ «Աշխարհի ամենամեծ շոկոլադե սալիկ» անվանակարգում, որը գրանցվել է Գինեսի ռեկորդների գրքում: Սա Հայաստանի առաջին արդյունաբերական ռեկորդն է:

Վերջերս ընկերությունը իրականացրեց մրցույթ՝ «Գնահատենք հայ մարդու աշխատանքը» խորագրով: Մի քանի ամիս տևած մրցույթի շրջանակներում հաղթած քաղաքացիները ընկերության կողմից ստացան դրամական մրցանակներ:

Ընկերության մարքեթինգային գործունեության վերլուծության համար, ինչպես նաև ՀՀ հրուշակեղենի շուկայի հետազոտության նպատակով իրա-

կանացվել է առցանց հարցում, որին մասնակցել է 150 ռեսպոնդենտ, որոնցից իգական սեռի են 112-ը (74,7%), արական սեռի՝ 38-ը (25,3%): Հարցվողների գերակշիռ մասը կազմում են 21-30 տարեկան իգական (38%) և արական (51%) սեռի ներկայացուցիչները: Մեծ մաս է կազմում նաև 31-40 տարիքային սեգմենտը (իգական՝ 26%, արական՝ 23%):

Պարզվեց, որ հարցվողների 58,7 %-ը հրուշակեղեն օգտագործում է ամեն օր, 25%-ը՝ շաբաթը մի քանի անգամ, ինչը վկայում է այն մասին, որ ՀՀ քաղաքացիների որոշ զանգվածի համար հրուշակեղենը և քաղցրավենիքն առօրյայի անբաժան մասն են կազմում:

Հարցվողների 78 %-ը նախապատվություն է տալիս հայկական արտադրանքին, հիմնականում պատճառաբանելով, որ հայկականը համեղ է, որակով և ոչնչով չի զիջում արտասահմանյան արտադրանքին: Հաջորդ տարածված պատճառը՝ հայրենական արտադրողին աջակցելն է: Արտասահմանյան արտադրանք ձեռք բերելու հիմնական պատճառն է նախընտրած բրենդ ունենալը: Իսկ հարցվողներից որոշները ստիպված են ընտրել արտասահմանյան արտադրանք՝ առողջական խնդիրներից ելնելով, և նշում են, որ եթե հայաստանյան ընկերությունները առաջարկեն համապատասխան բաղադրությամբ հրուշակեղեն, ապա միանշանակ կօգտվեն հայկական արտադրանքից:

Հարցվողների մեծամասնությունը (91%) ՀՀ-ում հրուշակեղեն արտադրող ընկերություններից ավելի հաճախ ձեռք է բերում «Գրանդ Քենդի»-ի արտադրանքը, որոշ մասը նաև գնում է «Դարոյնք» (19,3%) և «Ջեյթուն Սվիթ» (22,7%) ընկերությունների արտադրանքը:

Հարցման արդյունքում պարզվեց, որ ռեսպոնդենտների գերակշիռ մասը «Գրանդ Քենդի»-ի արտադրատեսակներից առավել հաճախ սպառում է հրուշակեղեն («Ֆավորիտ» արտադրատեսակներն են շոկոլադը և թխվածքները) և պաղպաղակ (հատկապես նախընտրում են «Սենդվիչ», «Ֆիեստա», «Իդեալ», «Ջամբո», «Ջերբա»):

Հարցվողների շրջանում 40 %-ի մոտ գնման որոշում կայացնելու վրա ազդեցություն ունի ապրանքի փաթեթավորումը, 43 %-ը պատասխանել է, որ մասամբ է ազդում, իսկ 17%-ի համար ապրանքի փաթեթավորումը նշանակություն չունի:

Հարցվողների մեծամասնությունը (91,3%) գտնում է, որ «Գրանդ Քենդի» ընկերության որակը համապատասխանում է սահմանված գնին:

«Գրանդ Քենդի»-ի արտադրանքը հարցվողներից 43 %-ը ձեռք են բերում ընկերության ֆիրմային խանութներից, 40 %-ը օգտվում է սուպերմարկետներից և հիպերմարկետներից, իսկ այլ խանութներից՝ 17 %-ը:

Հարցումից պարզ դարձավ, որ «Գրանդ Քենդի» ընկերության նոր արտադրանքի մասին հարցվողների 64 %-ը տեղեկանում է՝ խանութներում տեսնելով, 45 %-ը՝ հեռուստատեսային գովազդը միջոցով, 19,3 %-ը՝ մտերիմներից և ծանոթներից, 12,7 %-ը՝ ինտերնետային գովազդի միջոցով:

Հարցման արդյունքում բացահայտվեց նաև, որ «Գրանդ Քենդի»-ի կողմից սոցիալական հարթակներում (Facebook-ում և Instagram) գովազդը և

հրապարակումները հարցվողների 46 %-ի մոտ տեսանելի չեն, հազվադեպ են տեսնում հարցվողների 45 %-ը, և միայն 9 %-ն է բավականին հաճախ տեսնում:

Փորձագիտական հարցման արդյունքում ավելի ամբողջական պատկերացում կազմեցինք ՀՀ հրուշակեղենի շուկայի և «Գրանդ Քենդի» ընկերության գործունեության վերաբերյալ: ՀՀ հրուշակեղենի շուկայում հիմնական արտադրողներն են «Գրանդ Քենդի» ՍՊԸ, «Դարոյնք» ՍՊԸ, «Երևանի շոկոլադի գործարան» ՓԲԸ, «Ջեյթուն Սվիթ» ՍՊԸ, «Էլիտ Շանթ» ՍՊԸ և այլ ընկերություններ, որոնց միջև ծավալվում է առողջ մրցակցություն: Ներմուծվող արտադրանքին համարժեք հայկականը ստեղծելը ոլորտի զարգացման հիմնական ուղղություններից մեկն է: ՀՀ հրուշակեղենի շուկայի առաջատար ընկերություններից «Գրանդ Քենդի»-ն տարեկան թողարկում է մոտ 10 անուն նոր արտադրանք: Ընկերության արտադրանքը հաջող մուտք է գործել չինական, ճապոնական, ամերիկյան և եվրոպական շուկաներ, սակայն աշխատանքներ են տարվում ԵՄ տարածքում ընդլայնվելու շուրջ: «Գրանդ Քենդի» ընկերության արտահանման զգալը մասը բաժին է ընկնում Ռուսաստանի Դաշնությանը: Ընկերությունը արտադրանքը արտահանում է «JOYCO» ապրանքանիշով կեղծումներից խուսափելու համար: ՀՀ հրուշակեղենի շուկայում մարքեթինգային հաղորդակցությունների կիրառման առումով ամենաշատ հեռուստատեսային և ինտերնետային գովազդներ իրականացնող ընկերությունը «Գրանդ Քենդի»-ն է:

Եզրակացություն

Հրուշակեղենի արտադրությունը անվերջ զարգացող ոլորտ է: Տարիների հետ մարդկանց համային ցանկությունները փոփոխվում են, ուստի հրուշակեղեն արտադրող ընկերությունները մշտապես պետք է հանդես գան նորարարություններով, տարբերվող և յուրօրինակ համային համադրություններով՝ սպառողների հետաքրքրությունները բավարարելու համար: Կիրառելով մարքեթինգային գործիքներ՝ արտադրող ընկերությունները կարող են ավելի ամուր կապ առաջացնել սպառողի և ապրանքի միջև: Հրուշակեղենի ոլորտում շատ կարևոր գործառույթ է իրականացնում մարքեթինգը, քանի որ հրուշակեղենը հիմնականում ձեռք է բերվում իմպուլսիվ որոշումների արդյունքում, ուստի պետք է կարողանալ ստեղծել տպավորիչ և չկրկնվող փաթեթավորում, ինչպես նաև իրականացնել թիրախային շուկային համապատասխան առաջնորդման քաղաքականություն:

Հրուշակեղենի համաշխարհային շուկայի միտումները ուսումնասիրելով՝ պարզ դարձավ, որ հրուշակեղենի արտադրության զարգացման հիմնական ուղղությունը մոտակա ժամանակներում կդառնա դեղորայքային հրուշակեղենի արտադրությունը: Եթե հրուշակեղենի համաշխարհային շուկան հատվածավորենք, ապա կտեսնենք, որ հրուշակեղենի սպառումը մեծ է մեծահասակների սեգմենտում, և ակնկալվում է, որ հաջորդ տասնամյակում հրուշակեղենի հիմնական սպառողները կպատկանեն 60 և ավելի տարիքային խմբին, ինչն էլ իր հերթին նպաստավոր պայմաններ կստեղծի ծերաբուժա-

կան հատվածին ուղղված հրուշակեղենի արտադրության զարգացման համար: Կանխատեսվում է, որ հրուշակեղենի սպառման քանակով Եվրոպան իր դիրքերը կզիջի Ասիա-Խաղաղօվկիանոսյան շրջանին: Ինչ վերաբերում է հրուշակեղենի շուկայում բաշխման կապուղիներին, ապա կանխատեսվում է, որ հաջորդ տասնամյակում մեծ զարգացում կապրի բիզնեսի առցանց կազմակերպումը, որը նպաստավոր հիմքեր կստեղծի էլեկտրոնային առևտրի զարգացման համար:

XXI դարում, տեխնոլոգիաների զարգացման հետ համընթաց համացանցի օգտատերերը մեծ արագությամբ շատանում են, մարդիկ սկսում են ավելի երկար ժամանակ անցկացնել սոցիալական հարթակներում, ուստի այսուհետ կարևոր է ոչ միայն խանութներում ապրանքների դասավորվածությունը, այլև ապրանքների գրավչության ներկայացումը սոցիալական հարթակներում:

Հարցման արդյունքները օգնում են հասկանալ, որ վերջին տարիներին գնման որոշում կայացնելիս՝ մարդիկ մեծ ուշադրություն են դարձնում կազմակերպության ակտիվությանը և հրապարակումներին սոցիալական հարթակներում: Այս տեսանկյունից շատ կարևոր է կարողանալ ապահովել հաճախորդների ներգրավվածությունը՝ ընկերության սոցիալական կայքերում:

Սպառողներին գրավելու և իրենց էջում պահելու համար կազմակերպությունները ունեն ընդամենը մի քանի վայրկյան, ուստի էջը պետք է ունենա վիզուալ հաղորդակցություն, որը հետաքրքրություն կառաջացնի այցելուների մոտ:

«Գրանդ Քենդի» ընկերությունը բնակչության շրջանում կարողացել է ստեղծել այնպիսի իմիջ, որի արդյունքում «մանուշակագույն» պատկերացնելիս առաջին միտքը հենց «Գրանդ Քենդին» է: Այս ամենը կարող է օգտագործվել սոցիալական հարթակներում հրապարակումներ անելիս: Այն ոչ միայն կապահովի էջի վիզուալ տեսքը, այլև «Գրանդ Քենդի»-ի հրապարակումները այլ հրապարակումներից տարբերակելու միջոց կդառնա: Անհրաժեշտ է կապ ստեղծել հաճախորդի հետ, ինչը դատարկ հրապարակումները չեն կարող իրականացնել: Սոցիալական հարթակները այսօր արդեն լայն հնարավորություններ են տալիս շփվելու հաճախորդների հետ, հասկանալու նրանց գոհունակությունը, ցանկությունները, միզուցե բողոքները, առաջարկությունները: Պարզագույն մեկնաբանությանը պատասխանելը բավարար է հաճախորդին, որպեսզի իրեն ավելի մոտ զգա ընկերությանը:

ՀՀ երիտասարդության շրջանում առավել շատ օգտագործվող սոցիալական հարթակներից են «Ինսթագրամը» և «Տիկտոկը»: Մշտապես երիտասարդության տեսադաշտում լինելու համար ճիշտ է ակտիվություն ցուցաբերել վերոնշյալ կայքերում: Օգտատերերի հոսքը կայքից կայք ապահովելու համար տարբեր կոնտենտ ներկայացնելը արդյունավետ գաղափար է: «Գրանդ Քենդի» ընկերությունը դեռևս ակտիվություն չի ցուցաբերում «Տիկտոկ» կայքում, ինչի արդյունքում կորցնում է ավելի երիտասարդ լսարանին մոտ լինելու հնարավորությունը: Հաշվի առնելով այս ամենը՝ կազմակերպությունը պետք է ավելի մեծ բյուջե նախատեսի մարքեթինգի, մաս-

նավորապես սոցիալական մեդիա մարքեթինգի համար:

Մարքեթինգի նոր միտումներից Հայաստանում շատ տարածված են ակտիվ համագործակցությունները ինֆլյուենսերների հետ, սակայն «Գրանդ Քենդի» ընկերությունը նման մարքեթինգ գրեթե չի իրականացնում: Սա կարելի է համարել այն հիմնական պատճառներից մեկը, որ հարցման մասնակիցները հազվադեպ կամ ընդհանրապես չեն տեսնում ընկերության իրականացրած ինտերնետային գովազդները: Հեռուստատեսային գովազդի թիրախը այլ լսարան է, որին շատ արդյունավետ կերպով տեղեկատվություն է հասնում ընկերության արտադրանքի մասին, բայց պետք է հիշել, որ երիտասարդ բնակչության մեծամասնությունը իրենց ժամանակի գերակշիռ մասը անցկացնում է սոցիալական կայքերում և փոքր հատվածն է հեռուստացույց դիտում, ինչի արդյունքում նրանց աչքից շատ հաճախ վրիպում են նորույթները:

Խոսելով առցանց գործունեությունից, հարկ է հիշել, որ մեծ թափ է առնում առցանց առևտուրը և կանխատեսվում է, որ շուտով այն կդառնա բիզնես գործունեության անբաժան մասը: Առցանց առևտրի զարգացման համար ընկերությունը կարող է կիրառել շահագրգռող առաջարկներ, օրինակ՝ առցանց գնման դեպքում իրականացնել զեղչեր կամ փոքրիկ նվերներ ուղարկել առաքման ժամանակ:

Հարցման արդյունքներից պարզ դարձավ, որ հարցվողների որոշ մասը գերադասում է արտասահմանյան արտադրանք, նշելով, որ այն պատրաստված է ավելի լավ և որակյալ հումքից: Այս և նման այլ կարծրատիպերը կոտրելու համար «Գրանդ Քենդի» ընկերությունը կարող է հաճախ դրվագներ ներկայացնել արտադրության գործընթացից՝ միաժամանակ սպառողներին ընկերության գործունեության մասնակիցը դարձնելով:

Համաձայն հրուշակեղենի համաշխարհային շուկայի հետազոտությունների՝ հրուշակեղենի սպառողների հիմնական մասը գտնվում է 16-ից 60 տարիքային սեգմենտում: Այս տարիքային խմբի մարդիկ նախընտրում են տարօրինակ համեր (օրինակ, կծու-թթու համադրություն), հետաքրքիր և անսովոր գույներ, սառեցման և այլ էֆեկտներով կոնֆետներ և սալիկներ: Այս ամենը, իհարկե, առաջարկվում է հայկական շուկայում, բայց ոչ տեղական արտադրողների կողմից: «Գրանդ Քենդի» ընկերությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած քաղաքականությանը, կարող է հանդես գալ նման արտադրանքով և ներկայացնել նմանատիպ կոնֆետների հայկական տարբերակները:

Հրուշակեղենի համաշխարհային շուկայում արագ տեմպերով զարգանում է առանց շաքարի հրուշակեղենը, որին ՀՀ շուկան և սպառողները, ցավոք դեռ պատրաստ չեն, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում տարեցտարի շաքարային դիաբետով հիվանդների թվի աճ է գրանցվում: Հավատարիմ մնալով իրենց սովորույթներին և դժվարությամբ գնալով փոփոխությունների՝ ՀՀ քաղաքացիներից որոշ ժամանակ կպահանջվի նոր միտումները ընդունելու և առողջ հրուշակեղեն օգտագործելու համար: Հայաստանում քիչ թիվ չեն կազմում նաև ոչ գլյուտենային հրուշակեղեն փնտրող

մարդիկ: Սակայն հայաստանյան հրուշակեղենի շուկայում դեռևս չկա բավարար պահանջարկ առանց շաքարի և ոչ գլյուտենային հրուշակեղենի զանգվածային արտադրության համար: Այնուամենայնիվ առողջ ապրելակերպի կողմնակիցների թվի հետզհետե աճը հանդիսանում է ամուր հիմք հեռանկարում տվյալ ոլորտի զարգացման համար Հայաստանում:

Օգտագործված գրականության ցանկ

- Bhavana, T., Roshan, D. (2020). *Confectionery Market: Global Opportunity Analysis and Industry Forecast, 2021–2027*. Retrieved from <https://www.alliedmarketresearch.com/confectionery-market>
- Cargil, (2020). A connection with candy: Trends in the evolving and vibrant non-chocolate confectionery market. Retrieved from <https://www.cargill.com/doc/1432156848752/a-connection-with-candy.pdf>
- Euromonitor (2023). *Chocolate Confectionery. Market research on the snacks industry*. Retrieved from <https://www.euromonitor.com/chocolate-confectionery>
- Heber, Y. (2021). 2021 Marketing trends transformed by 2020. *Marketing Insider*. Retrieved from https://pubhtml5.com/mmgp/vuhk/American_Speedy_Marketing_Insider_Tri_1_2021/
- Global Confectioneries Industry Research Report, *Growth Trends and Competitive Analysis 2022–2028* (2022). Retrieved from <https://www.360researchreports.com/global-confectioneries-industry-21846184>
- Martinho, V. J. (2020). *Food Marketing as a Special Ingredient in Consumer Choices: The Main Insights from Existing Literature*. doi:10.3390/foods9111651
- Roberts, O. (2020). Marketing Trends 2020 and beyond. *Evolve. Enabling Success*. Retrieved from https://evolveadvisory.co.uk/wp-content/uploads/2020/02/Evolve-White-Paper-Marketing_compressed-2.pdf
- SPARXOO (2021). 10 Digital Marketing Trends to Take You into the New Year. Retrieved from https://sparxoo.com/wp-content/uploads/2020/11/SPX_2021_TrendsGuide-1.pdf
- Sugar-Free Confectionery Market Report by Product* (Sweet and Candy Confectionery, Chocolate Confectionery, and Others), Distribution Channel (Supermarkets and Hypermarkets, Convenience and Drug Stores, Online and D2C, and Others), Region 2023–2028. Retrieved from <https://www.imarcgroup.com/sugar-free-confectionery-market>
- “Grand Candy” company, <https://www.grandcandy.am/about-us>

Лилия Аветисян

Доцент кафедры Маркетинга Армянского государственного экономического университета и кафедры Управления и ИТ Международного университета

Евразия, кандидат экономических наук

Эл. адрес: l.a.avetisyan.l@gmail.com

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ КОНДИТЕРСКОГО РЫНКА И НОВЫЕ МАРКЕТИНГОВЫЕ ПОДХОДЫ В ПОСТЭПИДЕМИЧЕСКИЙ ПЕРИОД

Маркетинг не остается в стороне от кондитерской отрасли. Мировой рынок кондитерских изделий постоянно развивается. Изменяющиеся предпочтения людей из года в год бросают вызов кондитерским компаниям – создавать новые, самобытные, необычные вкусовые сочетания. Потребление кондитерских изделий в два раза возросло, когда распространилась культура дарения шоколада. Маркетинговые инструменты используются для создания специфических, эффективных способов представления товара и посредством их пытаются привлечь внимание потребителей, поскольку кондитерские изделия в основном приобретаются в результате импульсивных покупок. Рынок кондитерских изделий в Армении насыщен как отечественной, так и импортной продукцией. Что касается маркетинговой деятельности в этой отрасли, надо отметить, что новые тренды маркетинга, наблюдаемые на мировом рынке кондитерских изделий, частично используются в Армении. Среди компаний, действующих в сфере производства кондитерских изделий, есть также упущения, связанные с осуществлением маркетинговой деятельности в социальных сетях. Все вышеуказанное определило актуальность темы исследования. Цель исследования заключается в выявлении современных тенденций развития маркетинга на мировом рынке кондитерских изделий и их проявлений в Армении, на примере ООО «Гранд Кенди».

В статье представлены актуальные тренды маркетинга, проанализирована динамика развития мирового рынка кондитерских изделий по видам товаров, возрастным группам, ценовой категории, каналам дистрибуции, регионам, а также выявлены особенности маркетинга в современных условиях развития кондитерского рынка, в результате многостороннего анализа маркетинговой деятельности «Гранд Кенди», одной из ведущих компаний на рынке кондитерских изделий Республики Армения, раскрыты существующие проблемы и предложены возможные пути их преодоления.

Ключевые слова: рынок кондитерских изделий, маркетинг в социальных сетях, инфлюенс-маркетинг, интернет-реклама, сладости, электронная торговля.

Lilya Avetisyan

*Associate Professor at the Chair of Marketing, Armenian State University of
Economics and the Chair of Management and IT, Eurasia International University*

PhD in Economics

Email: l.a.avetisyan.l@gmail.com

TRENDS IN THE DEVELOPMENT OF THE CONFECTIONERY MARKET AND NEW MARKETING APPROACHES IN THE POST-EPIDEMIC PERIOD

Marketing does not remain aloof from the confectionery industry. The global confectionery market is constantly evolving. The changing preferences of people from year-to-year challenge confectionery companies to create new, original, unusual taste combinations. Confectionery consumption doubled as the culture of chocolate gifting spread. Marketing tools play a pivotal role in devising specific and effective ways to showcase products, aiming to capture the attention of consumers who often make impulse purchases when it comes to confectionery. The confectionery market in Armenia is saturated with both domestic and imported products. Regarding marketing activities in this industry, it should be noted that new marketing trends observed in the global confectionery market have found partial adoption in Armenia. Among companies operating in the confectionery industry, there are also omissions associated with the implementation of marketing activities on social networks. All of the above determines the relevance of the research topic. The purpose of the study is to identify current trends in the development of marketing in the global confectionery market and their manifestations in Armenia, using the example of ‘Grand Candy’ LLC.

The article presents current marketing trends, analyzes the dynamics of the development of the global confectionery market by product, age group, price category, distribution channels, regions, and also identifies the features of marketing in modern conditions of the confectionery market development. As a result of a multilateral analysis of the marketing activities of ‘Grand Candy’, one of the leading companies in the confectionery market of the Republic of Armenia, existing problems are revealed, and possible ways to overcome them are proposed.

Keywords: confectionery market, social media marketing, influencer marketing, online advertising, sweets, e-commerce.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. դեկտեմբերի 2-ին:
Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. դեկտեմբերի 6-ին:
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. դեկտեմբերի 11-ին:

Համազասպ Գալստյան

Հայաստանի պետական ​​​ փնտեսագիտական ​​​ համալսարանի Ամբերդ գիտահետազոտական ​​​ կենտրոնի հետազոտող, փնտեսագիտության ​​​ թեկնածու
Էլ. հասցե՝ hamazasp.s.galstyan@gmail.com

Քրիստինե Թատոսյան

Հայաստանի պետական ​​​ փնտեսագիտական ​​​ համալսարանի մարքեթինգի ամբիոնի սահպրենսր ՀՀ պետական ​​​ վերահսկողական ​​​ ծառայության ​​​ ավագ ​​​ վերահսկող
Էլ. հասցե՝ kristine.tatosyan@gmail.com

Գագիկ Բաղդայան

Հայաստանի պետական ​​​ փնտեսագիտական ​​​ համալսարանի կառավարման ամբիոնի սահպրենսր ՀՀ բարձր տեխնոլոգիական ​​​ արդյունաբերության ​​​ նախարարության ​​​ փորձագետ
Էլ. հասցե՝ gagikbadadyan@gmail.com

DOI: 10.53614/18294952-2023.2-93

ՀՀ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՄԱՆ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ՕՊՏԻՄԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ (ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

ՀՀ խոշորացված համայնքներում սոցիալ-տնտեսական ​​​ զարգացման մակարդակը բարձրացնելու և համայնքային խնդիրների լուծման կարևոր լծակը բյուջետային եկամուտների և ծախսերի արդյունավետ գործող համակարգն է: Հոդվածում վերլուծվում են համայնքային բյուջեի եկամտային և ծախսային կառուցվածքները և ներկայացվում են գործնական

առաջարկություններ՝ խոշորացված համայնքների բյուջեների ծախսերի օպտիմալացման համար:

Հեղազոյություն առարկան ՀՀ վարչատարածքային բարեփոխումների ազդեցության գնահատումն է համայնքի եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի օպտիմալ կառավարման տեսանկյունից: **Հեղազոյության օբյեկտը** ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի եկամուտները և ծախսերն են: **Հեղազոյության նպատակն է** գնահատել խոշորացման ազդեցությունը Չարենցավան համայնքի եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի օպտիմալ կառավարման մակարդակի վրա՝ ընդհանուր եկամուտներում սեփական եկամուտների մասնաբաժնի փոփոխության և համայնքապետարանի աշխատակազմի վրա կատարվող ծախսերի փոփոխությունների (խոշորացումից առաջ և հետո) հաշվարկի իրականացման միջոցով:

Հետազոտության հիմնական **խնդիրներն են** վերլուծել Չարենցավան համայնքի 2012-2022 թթ. եկամուտների ապակենտրոնացման հիմնական ցուցանիշները, դրանց բացարձակ, հարաբերական արժեքները և տալ ամփոփ գնահատական, ինչպես նաև ուսումնասիրել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի վարձատրության ֆոնդերի և հաստիքների փոփոխությունը համայնքի խոշորացման պայմաններում: **Հեղազոյության արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ ՀՀ-ում գրեթե չեն իրականացվել որևէ համայնքի եկամուտների և ծախսերի ուսումնասիրություններ՝ ինչպես 2015 թվականից մեկնարկած վարչատարածքային բարեփոխումներից առաջ, այնպես էլ՝ դրանից հետո: Սույն հետազոտությամբ փորձ է արվել պարզելու իրավիճակը և նախանշելու Չարենցավան համայնքի եկամուտների ապակենտրոնացման և ծախսերի կառավարման օպտիմալացման հնարավոր ուղիները:

Հիմնաբառեր. խոշորացված համայնքներ, եկամուտների ապակենտրոնացում, համայնքային ծախսերի օպտիմալ կառավարում, աշխատակազմ, վարչական ծախս

Ներածություն

Ըստ որոշ հեղինակների՝ հարկաբյուջետային ապակենտրոնացման արդյունավետությունը կախված է նրանից, թե ինչպես են տեղական ինքնակառավարման մարմինները կարողանում ազատորեն տնօրինել և օգտագործել իրենց ծախսերն ու որքանով են նրանք ինքնավար իրենց եկամուտների առումով: Հետևաբար, կենտրոնական կառավարությունը պետք է առավելագույնս մեծացնի տեղական մարմինների եկամուտների ապակենտրոնացման մակարդակը՝ ընդլայնելով նաև տեղական հնարավոր եկամուտների ծավալը (Priyantha W. Mudalige, 2019, էջ 125):

Ակադեմիական հրապարակումներում հանդիպում են կարծիքներ, ըստ որոնց հարկաբյուջետային ապակենտրոնացումը տարածքային և տեղական

ինքնակառավարման մարմինների գործունեության ֆինանսական կողմն է, որը բաղկացած է երկու հիմնական փոխկապակցված խնդիրներից, մեկը՝ ծախսերի պարտականությունների և եկամուտների աղբյուրների բաշխումն է ազգային, մարզային, ինչպես նաև շրջանային կառավարման մարմինների միջև, մյուսը՝ տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններին տրվող հայեցողության չափն է՝ իրենց եկամուտները և ծախսերը տնօրինելու համար (Siti Aisyah, 2010, էջ 11), իսկ Ֆագուետը (2004) գտնում է, որ ապակենտրոնացման արդյունքում պետական ներդրումները կրթության և ծառայությունների մյուս ոլորտներում դրական են անդրադառնում բնակչության իրական կարիքների վրա:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում 2015 թվականից մեկնարկած վարչատարածքային բարեփոխումների գործընթացների ազդեցության էական գնահատումներ դեռևս չեն իրականացվել: Նշվածի իրականացման անհրաժեշտությունը և կարևորությունը կայանում է նրանում, որպեսզի ՀՀ-ում համայնքների խոշորացման գործընթացը չդիտարկվի որպես ինքնասպասակ, այլ հանգեցնի թե՛ սեփական եկամուտների դիվերսիֆիկացմանը և թե՛ համայնքային ծախսերի օպտիմալացմանը, ինչը, ենթադրաբար, կնպաստի համայնքների համաչափ զարգացմանը, առաջացնի ոլորտը անընդհատ բարելավելու նոր ուղիներ և մեթոդներ:

Մեթոդը

Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության ընդհանուր մեթոդներից էմպիրիկ հետազոտության համեմատության մեթոդը, վերլուծության, համադրության, վերացարկման մեթոդները, ինչպես նաև ինդուկցիայի մեթոդը: Աշխատանքում կիրառվել է նաև դինամիկ վերլուծության մեթոդը, որի շրջանակներում ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի՝ 2012–2022 թթ. եկամուտների վերլուծությունն իրականացվել է այդ տվյալների միակցմամբ, մասնավորապես, խոշորացումից առաջ՝ մինչև 2017 թվականը Չարենցավան համայնքի և նրա կազմում ընդգրկված 5 բնակավայրերի ցուցանիշների վերլուծության համար անհրաժեշտ տվյալները (եկամուտ, ծախս) գումարվել են մինչև 2017 թվականից հետո խոշորացված Չարենցավան համայնքի եկամուտների հետ համեմատությունը համադրելի դարձնելու նպատակով:

Արդյունքները

Չարենցավան խոշորացված համայնքի սեփական եկամուտների՝ 2012–2022 թթ. բացարձակ և հարաբերական արժեքների վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ խոշորացմամբ պայմանավորված՝ համայնքում 2017 թ. հետո նկատվում է սեփական եկամուտների բացարձակ և հարաբերական ցուցանիշների աճ, ինչը վկայում է համայնքի ինքնուրույնության, անկախության մակարդակի բարձրացման մասին՝ շնորհիվ համայնքի սեփական եկամուտները ձևավորող գույքահարկի, վարձավճարների, ինչպես նաև՝ տեղա-

կան վճարների էական աճի, թեպետ համայնքը դեռևս շարունակում է պահպանել իր կախվածությունը ՀՀ պետական բյուջեից:

Չարենցավան համայնքի (խոշորացված) համայնքապետարանի աշխատակիցների վարձատրության չափերի փոփոխության գնահատման նպատակով (խոշորացումից առաջ և հետո) իրականացված վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ խոշորացումից հետո համայնքապետարանի աշխատակազմի վարձատրության ֆոնդը բացարձակ ցուցանիշով աճել է, սակայն դրա մասնաբաժինն ընդհանուր ծախսերում նշանակալի նվազել է Ալափարս, Արզական, Բջնի, Կարենիս, Ֆանտան նախկին համայնքների գումարային ցուցանիշների (խոշորացումից առաջ) համեմատ:

Ծախսերի արդյունավետության մյուս բաղադրիչի գնահատման արդյունքում պարզվել է, որ խոշորացումից հետո Չարենցավան համայնքում շարունակել է պահպանվել վարչական ծախսերի բարձր մակարդակն ընդհանուր ծախսերում, ինչպես որ եղել էր խոշորացումից առաջ:

Խոշորացման ազդեցության պայմաններում մասշտաբի էֆեկտի հաշվին կանխատեսվում էր, որ հիշյալ ցուցանիշը ի հաշիվ ֆոնդային ծախսերի կնվազեր, մինչդեռ ստացվել է հակառակ պատկերը:

Քննարկում

ՀՀ-ում վարչատարածքային բարեփոխումների գործընթացը սկսվել է 2015 թվականից և շարունակվում է իրականացվել մինչ օրս (վերջին խոշորացումը տեղի է ունեցել 2022 թվականին): Ներկա դրությամբ ՀՀ բոլոր մարզերի գրեթե բոլոր համայնքները խոշորացվել են՝ բացառությամբ Արագածոտնի մարզի Շամիրամ, Արարատի մարզի Վերին Դվին, Արմավիրի մարզի Ֆերիկ, Կոտայքի մարզի Արզնի, Շիրակի մարզի Գյումրի, ինչպես նաև Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքները:

Համայնքների խոշորացման ակտիվ գործընթացների այս փուլում ՀՀ բոլոր մարզերում արդեն ձևավորվել են 64 խոշորացված համայնքներ, որոնցում ներառվել են 993 բնակավայրեր:¹ Համայնքների խոշորացումն ինքնապատակ չէ և այդ գործընթացները միտված են համայնքների կառավարման արդյունավետության բարձրացմանը՝ այդպիսով նպաստելով համայնքների զարգացմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը՝ հնարավորություն տալով որոշ տնտեսումների արդյունքում ֆոնդային ծախսերի մեծացման հաշվին նպաստել տեղական զարգացմանը, ինչպես նաև համայնքի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

1 Տվյալները հավաքագրվել և ամբողջացվել են հեղինակների կողմից՝ հիմք ընդունելով «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքի համապատասխան տարիների փոփոխությունները

Աղյուսակ 1

ՀՀ Կուրայքի մարզի Չարենցավան խոշորացված համայնքի եկամտային ապակենտրոնացման ցուցանիշները²

Համայնք և կազմում ներառված բնակավայրեր	2012	2013	2014	2015	2016	2017	2018	2019	2020	2021	2022
Չարենցավան խոշորացված համայնք											
Հարաբերական արժեք, %	36.7	36.3	34.0	33.2	33.7	39.6	43.9	43.3	32.9	36.9	39.3
Բացարձակ արժեք (սեփական եկամուտ), մլն դրամ	260,8	257,6	273,7	277,9	276,4	353,4	410,7	448,2	376,6	497,1	539,6

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից՝ Չարենցավան խոշորացված համայնքում վերջին՝ 2022 թ. դրությամբ սեփական եկամուտների տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտներում կազմել է շուրջ 39 %: Հարկ է նշել, որ խոշորացումից առաջ այդ ցուցանիշը հինգ տարվա կտրվածքով միջինում կազմել է շուրջ 35 %, իսկ խոշորացումից հետո՝ 2017–2022 թթ., միջին հարաբերական արժեքը կազմել է 39%: Ստացվում է, որ Չարենցավան համայնքում կա եկամուտների ապակենտրոնացման դրական ցուցանիշ և նկատվում է աճի միտում, իսկ սեփական եկամուտների բացարձակ և հարաբերական ցուցանիշների միաժամանակյա աճը ենթադրում է, որ Չարենցավան համայնքում խոշորացումից հետո սեփական եկամուտների աճը ուղեկցվել է դրանց՝ ընդհանուր եկամուտներում ունեցած տեսակարար կշռի աճով:

Միաժամանակ, եկամուտների ապակենտրոնացման ցուցանիշների բարձր մակարդակներ են գրանցվել 2018 և 2019 թթ.՝ համապատասխանաբար կազմելով շուրջ 44% և 43%, ինչը ենթադրում է, որ այդ տարիներին Չարենցավան համայնքը ունեցել է ամենաքիչ կախվածությունը պետական բյուջեից: Այնուամենայնիվ, սեփական եկամուտների աճի տեմպը որոշակիորեն թուլացել է 2020 թ., որը պայմանավորված է Չարենցավան համայնքի մի շարք եկամտատեսականների նվազմամբ, մասնավորապես, 2020 թ.՝ համեմատ 2019 թ. նվազել են տեղական տուրքերը, համայնքի բյուջե վճարվող պետական տուրքերը, գույքի վարձակալությունից եկամուտները, ինչպես նաև տեղական վճարները, որոնք 2019 թ. շուրջ 158 մլն.դրամ ցուցանիշի համեմատ նվազել են՝ հասնելով մինչև 90 մլն. դրամի, ինչը, ենթադրաբար, պայմանավորված է 2020 թ. ռազմական և արտակարգ դրությամբ առաջացած սահմանափակումներով և համայնքային ռեսուրսների արդյունավետության թուլացմամբ:

Համայնքների խոշորացման հիմնական մարտահրավերներից մեկն է նաև խոշորացված համայնքի և բնակավայրերի կառավարման տնտեսական արդյունավետության բարձրացումը՝ ծախսային որոշ տնտեսումների և դրանց օպտիմալ կառավարման հաշվին՝ հնարավորություն տալով որոշակիորեն

² Եկամտային ապակենտրոնացման ցուցանիշի հաշվարկները կատարվեն են հեղինակների կողմից՝ կիրառելով եկամուտների ապակենտրոնացման հաշվարկի հետևյալ բանաձևը՝ Եկամուտների ապակենտրոնացման գործակից=Համայնքի ընդհանուր եկամուտներ-պետության կողմից ստացված պաշտոնական դրամաշնորհներ/համայնքի ընդհանուր եկամուտներ: Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից, աղյուսակը կառուցվել է հեղինակների կողմից, տվյալների աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ համայնքների բյուջետային եկամուտներ:

Համագասպ Գալստյան, Քրիստինե Թաթոսյան, Գագիկ Բաղդոսյան

կրճատել վարչական ծախսերը ի հաշիվ ֆոնդային ծախսերի: Միաժամանակ, համայնքների խոշորացման հիմնական սկզբունքներից մեկը՝ տնտեսական նպատակահարմարությունը, ենթադրում է, որ համայնքների խոշորացման արդյունքում մեծանում են տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքային սեփականություն հանդիսացող հողային ռեսուրսների, գույքի, ֆինանսական միջոցների ծավալների համատեղման և մասշտաբի էֆեկտի հետ:

Համայնքների խոշորացման կարևոր արդյունքներից մեկն է նաև աշխատակազմի պահպանման-ծախսերի օպտիմալացումը՝ ի հաշիվ համայնքների խոշորացման արդյունքում համայնքապետարանների աշխատակիցների թվաքանակի կրճատման:

Աղյուսակ 2

Չարենցավան խոշորացված համայնքի և իր կազմի մեջ մտնող բնակավայրերի աշխատակազմի պահպանման վրա կախարվող ծախսերը՝ մինչ խոշորանալը³

Բնակավայր (նախկինում համայնք)/ թվական	2014	2015	2016
Չարենցավան համայնք			
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	605,345.8	610,422.6	604,228.1
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	80,195.3	85,407.7	81,869.5
Հարաբերական արժեք, %	13.2	14	13.5
Ալափարս համայնք			
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	37,662.7	60,927.3	57,917.5
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	24,328.9	27,141.0	24,750.9
Հարաբերական արժեք, %	64.5	44.5	42.7
Արզական համայնք			
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	67,010.9	66,686.2	3,431.9
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	20,449.7	27,613.0	29,575.3
Հարաբերական արժեք, %	30.5	41.4	-
Բջնի համայնք			
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	54,824.6	60,199.0	57,311.3
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	21,314.5	23,958.7	25,210.9
Հարաբերական արժեք, %	39	40	44
Կարենիս համայնք			
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	19,774.9	21,009.6	22,711.3
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	15,684.4	17,139.0	20,369.2

³ Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից, աղյուսակը կառուցվել է հեղինակների կողմից, տվյալների աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ համայնքների բյուջետային ծախսերը:

Հարաբերական արժեք, %	79	82	90
Ֆանտան համայնք			
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	19,353.2	28,146.0	14,898.2
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	12,811.6	14,079.8	10,624.4
Հարաբերական արժեք, %	66	50	71

Աղյուսակ 3

Չարենցավան խոշորացված համայնքի աշխատանքի վարձատրության վրա կարարվող ծախսերը խոշորացումից հետո⁴

Համայնք /տարեթիվ	2017	2018	2019	2020	2021	2022
Չարենցավան խոշորացված համայնք						
Ծախս ընդամենը (փաստացի, հազ, դրամ)	927,704.4	977,972.8	977,972.8	1,118,588.7	1,275,844.6	1,384,308
Աշխատանքի վարձատրություն (փաստացի, հազ, դրամ)	197,780.5	167,845.0	167,844.0	205,756.4	236,859.0	263,304.8
Հարաբերական արժեք, %	21	17	17	18	19	19

Ինչպես ցույց են տալիս աղյուսակներում ներկայացված տվյալները՝ Չարենցավան խոշորացված համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում (նախկին համայնքներում) մինչ խոշորացումը նկատվում է, որ աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը համայնքի ընդհանուր ծախսերում միջինում հիմնականում 50 %-ից ավելի է:

2017 թ. հետո արդեն Չարենցավան խոշորացված համայնքում նկատվում է աշխատանքի վարձատրության ծախսերի համեմատաբար ցածր մակարդակ՝ ընդհանուր ծախսերում. 2017 թ.՝ 21 %, 2018 թ.՝ 17 %, 2019 թ.՝ 17%, 2020 թ.՝ 18 %, 2021 թ.՝ 19 %, 2022 թ.՝ 19 %: Սակայն, եթե փորձենք համեմատել նաև բացարձակ ցուցանիշները, ապա ստացվում է հակառակ պատկերը: Այսպես, մինչև խոշորանալը Չարենցավան համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերում աշխատանքի վարձատրության ծախսերը 2015 թ. ընդհանուր առմամբ կազմել են շուրջ **195 մլն. դրամ**, ներառյալ՝ Չարենցավան համայնքը), իսկ արդեն խոշորացումից հետո՝ 2017 թ. այդ ցուցանիշը կազմել է շուրջ **198 մլն. դրամ**, 2020, 2021 և 2022 թթ. կրկին աճել է՝ համապատասխանաբար կազմելով շուրջ 206 մլն. դրամ, 237 մլն, դրամ և 263 մլն. դրամ:

Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմին վճարվող աշխատավարձերի աճը խոշորացված համայնքի բնակչության թվաքանակի աճի և ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի բարձրացման խորապատկերին, ըստ էության, չէր էլ կարող նվազել, քանի որ համայնքի գործունեությունը խոշորացման արդյունքում համեմատաբար մեծ թվով համայնքների կառա-

4 Հաշվարկները կատարվել են հեղինակների կողմից, աղյուսակը կառուցվել է հեղինակների կողմից, տվյալների աղբյուր՝ ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարություն, ՀՀ համայնքների բյուջետային ծախսերը:

ա. *PepsiCo CEO Indra Nooyi: Embrace tough assignments. It's far better to challenge yourself by raising your hand for the toughest assignments and work to solve problems that no one else has been able to solve. That's how you truly become a trusted leader inside an organization.* [*ՊեսպիԿո կազմակերպության գործադիր փնօրեն Ինդրա Նոյի.- Ընդունեք դժվար առաջադրանքները: Շատ ավելի լավ է ինքներդ ձեզ մարտահրավեր նետեք կայարելու ամենաբարդ առաջադրանքները և աշխարհք լուծել այն խնդիրները, որոնց ոչ ոք ի վիճակի չի եղել լուծել: Ահա թե ինչպես եք կարող դառնալ կազմակերպության իրական վստահելի առաջնորդ*] (Baer, 2014):

բ. *Starbucks CEO H. Schultz: Don't allow anybody – friends, family, even your parents, to tell you you're aiming too high, because if you look at my story it's not a Hollywood movie, it's real, it's authentic and it happened to me, I am not smarter than anyone else and it can happen to you.* [*Ստարբաքսի գործադիր փնօրեն Հ. Շուլց.- Թույլ մի փվեք ոչ ոքի՝ ձեր ընկերներին, ընդհանրի անդամներին, նույնիսկ ծնողներին, ձեզ ասել, որ ավելիին եք ձգարում, քան կարող եք, քանի որ եթե նայեք իմ պարմությանը, դա հողիվուդյան կինոնկար չէ. դա իրական է և կայարվել է ինձ հետ, ես ավելի խելացի չեմ քան այլոք, և նույնը*

ձեզ հետք էլ կարող է կատարվել] (London Business Forum, 2013):

Խորհուրդ տալու պերլոկուտիվ ակտը իրացվում է նաև հռետորական հարցերի միջոցով՝

Ch. Koch: For business to survive over a long period, it needs to be contributing to society and people's well-being. Otherwise, who's going to want it? [2. Կոչ.- Որպեսզի բիզնեսը երկար ժամանակ գոյատևի, այն պիտի նպաստի հասարակության և մարդկանց բարեկեցությանը: Այլապես ո՞ւմ է այն պետք] (Ryssdal, 2015):

Զգուշացման խոսքային ակտի միջոցով հաճախ առաջանում է տագնապի պերլոկուտիվ ազդեցություն: Այդպիսի օրինակ է ստորև բերված ասույթը, որը հնարավոր է տագնապի ազդանշան լինի մրցակից գործարարների համար՝

Ch. Koch: If you're not creating value for others, customers, society, isn't going to let you be around. [2. Կոչ.- Եթե դուք չեք ստեղծում արժեքներ այլոց համար, սպառողները, հասարակությունը կիրաժարվեն ձեզանից] (Ryssdal, 2015):

Գործարարները երբեմն զղջման և ներողության խոսքային ակտ են կատարում, երբ իրենց արտադրանքը թերի է լինում: Այդօրինակ խոսքային ակտի պերլոկուտիվ նպատակն է ներագդել և հանդել լսարանին, որ գիտակցելով սխալը, իրենք ուղղել են այն և այսուհետ դարձել էլ ավելի վստահելի: Նման օրինակ են Տոյոտա կազմակերպության ավտոմեքենաները, որոնց խնդիրը կայանում էր նրանում, որ գորգը խցանում էր արագացուցիչը, և դա վթարի պատճառ էր հանդիսանում: Կազմակերպության տնօրենի ներողություն հայցող խոսքային ակտը կարող ենք բնութագրել որպես «ամոքիչ» խոսքային ակտ:

Toyota CEO Akio Toyoda: We pursued growth over the speed at which we were able to develop our people and our organization. I regret that this has resulted in the safety issues described in the recalls we face today, and I am deeply sorry for any accidents that Toyota drivers have experienced. [Տոյոտայի գործադիր սննդաբան Ակիո Տոյոդա.- Մենք առաջնային համարեցինք աճը և ոչ արագությունը, թե որով կարող էինք զարգացնել մեր աշխատակազմին և կազմակերպությանը: Ես զղջում եմ, որ դա հանգեցրել է անվտանգության հետ կապված այն խնդիրներին, որոնք նկարագրված են հետ կանչված արտադրարեսակների արձանագրությունում, որոնց հետք էլ մենք առերեսվում ենք այսօր, և ես խորապես ցավում եմ ցանկացած վթարների համար, որ Տոյոտայի վարորդների հետ կատարվել են] (Toyota CEO apologizes for recall, 2010):

Ակիո Տոյոդան, նույնիսկ նման աններելի և ճակատագրական սխալից հետո իր մեկ այլ ԳԼՑ-ում փորձում է վերականգնել իր կորցրած դրական հանրային վարկը և ետ շահել իր հաճախորդների վստահությունը՝ հավելելով.

Toyoda: Believe me, Toyota cars are safe. We always put the customer first. [Տոյոդա.- Հավատացե՛ք ինձ, Տոյոտա ավտոմեքենաները սպառողն են: Մեզ համար հաճախորդները միշտ առաջնային են] (McCurry, 2010):

ԳԼՑ-ների վերջաբանում սովորաբար հուզական կոչեր պարունակող ակ-

տերին հաջորդում են հաստատական խոսքային ակտեր՝ բարդ ստորադասական նախադասություններով կազմված՝ տեսակետ արտահայտող ցուցիչներով (*We believe/think/suppose*) [*Մենք հավատում ենք, կարծում, ենթադրում*] կամ առանց դրանց: Այստեղ տեսակետ արտահայտող արտահայտությունների կիրառումը լեզվահոգեբանական հնարի դեր է կատարում. գործարարը այնպես է շարադրում իր պատասխանը, որպեսզի կարողանա ներագդման, երբեմն վախեցնելու կամ սպառնալու միջոցով համոզել լսարանին իբրև թե իրենք են եկել այդ եզրակացության, որի արդյունքում էլ գործարարը կհասնի իր հետհաղորդակցական ցանկալի արդյունքին՝

Jayne Day: If we could eliminate hunger in this country, and I believe that we can, I would love it if we could close our doors and nobody needed our food assistance. Unfortunately, I don't think that's going to happen. We are here to provide for those when nobody else can. And, so, I think it's critical for our organization and for the people that we serve that we exist. [Զեյնի Դեյ.-Եթե մենք կարողանայինք վերացնել սովը այս երկրում, և ես հավատում եմ, որ մենք կարող ենք, ես կցանկանայի, որպեսզի մենք կարողանայինք փակել մեր դռները, և որ ոչ ոք մեր սննդային աջակցության կարիքը չունենար: Դժբախտաբար, չեմ կարծում, որ դա տեղի կունենա: Մենք այսօրեղ ենք ապահովելու նրանց, ում ոչ ոք չի կարող: Եվ այսպիսով, կարծում եմ, որ մեր կազմակերպության և այն մարդկանց համար, ում ծառայում ենք, շատ կարևոր է, որպեսզի մենք գոյություն ունենանք] (Ryssdal, 2017):

Եզրակացություն

Ինչպես պարզ դարձավ մեր քննության արդյունքում, մի կողմից ԳՀՑ-ին հատուկ են ողջույնի, հրաժեշտի, գովեստի, շնորհավորանքի, հաճոյախոսության, երախտագիտության, շնորհակալության, խոստումի, գնահատման խոսքային ակտերը, որոնց պերլոկուտիվ նպատակն է ջերմ ու գնահատողական արտահայտությունների միջոցով ներագդել լսարանի ենթագիտակցության վրա, ձևավորել դրական կարծիք խոսողի մասին, մոտիվացնել և պարտավորեցնել աշխատողներին շարունակել նույն ոգով և էլ ավելի նվիրվածությամբ աշխատել իրենց կազմակերպության համար, իսկ սպառողների վրա ներագդել, նրանց համոզել, որ իրենք կատարել և կատարում են ձիշտ ընտրություն՝ այսպիսով՝ ենթագիտակցաբար նրանց մղելով շարունական ցանկալի հետհաղորդակցական գործողության: Սյուս կողմից ԳՀՑ-ում պերլոկուցիան իրացվում է նաև ներողություն հայցման, զղջման, խորհրդի, հորդորի, զգուշացման, հրամանի, կոչի ուղղակի կամ անուղղակի խոսքային ակտերի միջոցով: Այս դեպքում պերլոկուտիվ ակտի նպատակն է դիմացինին համոզել, ներշնչել, երբեմն վախեցնել, մտաշահարկել, սպառնալ, խրախուսել կամ ետ պահել այս կամ այն հետհաղորդակցական անցանկալի գործողությունից, և լսարանի զգացմունքների վրա ներագդելով՝ հասնել նպատակաուղղված հաղորդակցության ցանկալի արդյունքի: Մեր քննության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ ԳՀՑ խոսույթում բոլոր տեսակի խոսքային ակտերի կենտրոնում գտնվում է ներագդումը որպես

պերլոուտիվ ազդեցության հասնելու միջոց, քանի որ, ըստ էության, ողջ ԳՀՑ հաղորդակցությունը նպատակաուղղված է ազդել հանրության հետագա ընտրության և վարքի վրա՝ ցանկացած միջոցով հանդեպով, որ ներկայացվող ապրանքատեսակը կամ ծառայությունը լավագույնն է:

Հարկ ենք համարում նշել նաև, որ ընդունելով լեզվաբանության մեջ ընդունված ավանդական այն համոզմունքը, որ հաղորդակցական գործընթացում ընդհանուր առմամբ պերլոուտիվ ազդեցության դրսևորումները անկանխատեսելի են, ինչպես նաև չպլանավորված և անկառավարելի այն առումով, որ խոսողը չի կարող նախապես իմանալ իր արտաբերած ասույթի առաջացնող ազդեցության բնույթը, հետևաբար չի կարող գիտակցաբար նախապես մշակել պերլոուտիվ ակտի իրագործում, առավել ևս կառավարել այդ ազդեցությունը, մենք նաև չենք կարող չփաստել, որ մի շարք ԳՀՑ խոսքի մեր քննությունը ապացուցում է, որ պերլոուտիվ ներագուման լեզվական դրսևորումը ԳՀՑ-ում հաղորդակցական մի այնպիսի գործընթաց է, որն իր բնույթով ինչ-որ չափով կարող է կառավարելի, ինչպես նաև կանոնակարգված լինել այն դեպքում, երբ գործարարը կարողանում է կոնկրետ դիտավորությամբ պատասխան նախադասություններ արտաբերել, ունի հաղորդակցական հնտություն և նախապես մշակված նպատակ հասնելու ցանկալի պերլոուտիվ ազդեցության: Հարկ է հավելել, որ քննության արդյունքում նաև պարզ դարձավ, որ ԳՀՑ-ում միևնույն իլլոկուտիվ ակտի հետևանքով առաջացած պերլոուտիվ ազդեցության քանակը կարող է լինել մեկից ավելի և տարաբնույթ, այն է՝ գործարարի խոսքային ակտը կարող է տարբեր ազդեցություններ առաջացնել ինչպես մեկ ունկնդրի, այնպես էլ մի քանի ունկնդիրների վրա՝ մերթ առաջացնելով, օրինակ, հիացմունք, մերթ բարկություն կամ տագնապ: Նույնը նաև վերաբերում է պերլոուտիվ ակտի ցանկալի արդյունքի հաջողված կամ ձախողված լինելուն, որը կախված է ոչ միայն գործարարի լավ մշակված և կանխամտածված խոսքից, այլև հասցեատիրոջ հենքային գիտելիքից, սոցիալ-հոգեբանական դիրքորոշումից, ինչպես նաև նախատրամադրվածությունից:

Օգտագործված գրականության ցանկ

- Airline association CEO criticizes electronics ban. (2017, March). Retrieved from <http://www.bnn.ca/airline-association-ceo-criticizes-electronics-ban-1.708577>
- Baer, D. (2014, October). *Pepsi CEO Indra Nooyi gave the perfect advice for getting noticed at work*. Retrieved from <http://www.businessinsider.com/pepsi-ceo-indra-nooyi-career-advice-2014-10>
- Bargiela-Chiappini, F. (Ed.). (2009). *The Handbook of Business Discourse*. Edinburgh: Edinburgh University Press.
- Blodget, H. (2014, December). *I asked Jeff Bezos the tough questions*. Retrieved from <https://www.businessinsider.com/amazons-jeff-bezos-on-profits-failure-succession-big-bets-2014-12>
- CEO BK YOON emphasizes the 'Unimaginable Value' of the IoT (2016, January). Retrieved from <https://news.samsung.com/global/interview-ceo-bk-yoon-emphasizes-the->

unimaginable-value-of-the-iot

- Drew, P., Heritage, J. (Eds.). (1992). *Talk at Work: Interaction in Institutional Settings*. Cambridge: Cambridge University Press.
- Fox, S. (2008). *Business Etiquette for Dummies*. USA: Wiley.
- Heilpern, W. (2016, August). *Richard Branson talks about his 'debilitating' shyness, climate change, and being a father*. Retrieved from <http://uk.businessinsider.com/interview-with-virgin-founder-richard-branson-2016-8>
- Leech, G. (2014). *The Pragmatics of Politeness*. New York: Oxford University Press.
- McCurry, J. (2010, February). *Toyota president Akio Toyoda 'very sorry' for safety recalls*. Retrieved from <https://www.theguardian.com/business/2010/feb/05/toyota-president-very-sorry-recalls>
- Nokia CEO Stephen Elop discusses new phones and accessories*. (2012, September). Retrieved from <https://www.youtube.com/watch?v=NmQuBzHjU8s>
- Ryssdal, K. (2015, October). *Full interview: Charles Koch*. Retrieved from <https://www.marketplace.org/2015/10/21/business/corner-office/full-interview-charles-koch>
- Ryssdal, K. (2017, June). *What if the social safety net isn't safe anymore?* Retrieved from <https://www.marketplace.org/2017/06/02/life/what-it-means-to-be-backup-to-social-safety-net>
- Toyota CEO apologizes for recall*. (2010, February). Retrieved from <http://economictimes.indiatimes.com/news/international/toyota-ceo-apologizes-for-recall-accidents/articleshow/5612494.cms>
- Wal-Mart stores president & CEO Doug McMillon speaks with CNBC's Carl Quintanilla on "Squawk Alley" today*. (2015, February). Retrieved from <https://www.cnbc.com/2015/02/19/cnbc-transcript-cnbc-exclusive-wal-mart-stores-president-ceo-doug-mcmillon-speaks-with-cnbc-carl-quintanilla-on-squawk-alley-today.html>
- Weinberger, M. (2017, April). *Mark Zuckerberg just signed the death warrant for the smartphone*. Retrieved from <http://www.businessinsider.com/facebook-f8-mark-zuckerberg-on-augmented-reality-2017-4>
- London Business Forum*. (2013, February). Starbucks' CEO Talks Business. Retrieved from <https://www.youtube.com/watch?v=83yInyYIKLs>

Сюзанна Григорян

Ассистент Ереванского государственного университета,
Эл. адрес: suzy.grigoryan@ysu.am

ПРАГМАЛИНГВИСТИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ РЕЧЕВЫХ АКТОВ ВЫРАЖАЮЩИХ ВОПРОС-ОТВЕТ В КОММУНИКАТИВНОЙ МОДЕЛИ БИЗНЕС-ИНТЕРВЬЮ

Целью данной статьи является исследование речевых актов выражающих вопрос и ответ в бизнес-интервью на английском языке. Бизнес-интервью рассматривается как единство локутивных, иллюкутивных, перлокутивных актов, в которых подчеркиваются коммуникативная цель и намерение

собеседников, а также влияние бизнесменов на дальнейший выбор и действия аудитории. Анализ речевых актов позволяет выяснить, что перлокуция имеет ключевое значение в вопросно-ответной речевой последовательности в бизнес-интервью. В данной работе выявляются наиболее распространенные речевые акты в дискурсе бизнес-интервью, которые используются как средство достижения желаемого перлокутивного эффекта. Перлокутивный эффект – это изменение подсознания, мыслей, эмоций, мнения, выбора и посткоммуникативного поведения потребителей в результате речевых актов бизнесмена в бизнес-интервью.

Ключевые слова: бизнес-интервью, речевые акты, перлокутивный эффект.

Syuzanna Grigoryan

Assistant at Yerevan State University

Email: suzy.grigoryan@ysu.am

PRAGMALINGUISTIC PECULIARITIES OF SPEECH ACTS EXPRESSING QUESTION-ANSWER IN THE COMMUNICATIVE MODEL OF BUSINESS INTERVIEWS

The given article studies speech acts expressing questions and answers in business interviews in the English language. A business interview is considered as a combination of locutionary, illocutionary, perlocutionary acts, which emphasize the communicative purpose and intention of the interlocutors, as well as the influence of businessmen on the further choice and actions of the audience. The thorough analysis of speech acts shows that perlocution is of key importance in the question-answer speech sequence in business interviews. Our study identifies the most common speech acts in the discourse of a business interview, which are used as a means of achieving the desired perlocutionary effect. The perlocutionary effect refers to consumers' thoughts, emotions, opinions, choices, and post-communicative behavior resulting from a businessman's discourse.

Key words: business interview, speech acts, perlocutionary effect.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. հոկտեմբերի 27-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. նոյեմբերի 10-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. դեկտեմբերի 17-ին:

Մանկավարժություն և դասավանդման մեթոդիկա

Արփինե Սարգսյան

*Հայաստանի պետական ​​​ փնտեսագիտական ​​​ համալսարանի
Գյումրու մասնաճյուղի դասախոս, փնտեսագիտության թեկնածու
Էլ. հասցե՝ a.s.arpinesargsyan@gmail.com
<https://orcid.org/0000-0003-3415-983X>*

DOI: 10.53614/18294952-2023.2-180

ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ: ԱԿՏԻՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ (ՀԻՄՆԱԽՆԴԻՐԱՀԵՆՔ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԵՎ ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԿԻՐԱՌՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Համալսարաններում տնտեսագիտության դասավանդումը կարող է լինել և՛ ստեղծագործական, և՛ արդյունավետ՝ ներառելով տարբեր մեթոդներ, որոնք ներգրավում են ուսանողներին, խթանում նրանց քննադատական ​​​ մտածողությունը, և տեսությունը կապում իրական աշխարհի երևույթների հետ:

Տնտեսագիտական ​​​ կրթությունը համալսարանական ​​​ մակարդակում ենթարկվում է տարբեր փոխակերպումների՝ պայմանավորված արագ փոփոխվող աշխարհի պահանջներին համապատասխանելու, ուսանողներին գործնական ​​​ հմտություններով և իրական աշխարհի տնտեսական ​​​ երևույթների խորը ըմբռնման կարողությամբ օժտելու անհրաժեշտությամբ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է տնտեսագիտական ​​​ կրթության առջև ծառայած մարտահրավերներով, ինչպիսիք են պասիվ ուսուցումը, տեսական ​​​ գիտելիքների և գործնական ​​​ հմտությունների միջև առկա բացը:

Սույն հետազոտության նպատակն է՝ բացահայտել տնտեսագիտական ​​​ կրթության մեջ նորարարական ​​​ մեթոդների կարևորությունը և ուրվագծել ճանապարհային քարտեզ դասավանդողների համար՝ ուսումնական ​​​ գործընթացն ավելի արդ-

յունավետ և հետաքրքիր դարձնելու, ինչպես նաև ուսանողներին ժամանակակից տնտեսական մարտահրավերներին նախապատրաստելու համար:

Ուսումնասիրվում է ակտիվ ուսուցման մեթոդների, մասնավորապես՝ հիմնախնդրի վրա հիմնված ուսուցման (անգլ.՝ Problem-based learning- PBL) և իրավիճակային վերլուծության (case study) մեթոդների ներդրումը համալսարանական կրթության մեջ՝ տնտեսագիտության դասավանդման համար: Ակտիվ ուսուցման մեթոդները բարձրագույն կրթության մեջ իրենց լայն կիրառումն են գտել քննադատական մտածողության, հիմնախնդիրների լուծման, ստեղծարարության և այլ հմտությունների խթանման, ինչպես նաև տեսական գիտելիքների գործնական կիրառման հնարավորության շնորհիվ:

Հոդվածը կարող է հանդիսանալ համապարփակ ուղեցույց՝ PBL-ի և իրավիճակային վերլուծության կիրառման վերաբերյալ՝ առաջարկելով օրինակներ և գործնական առաջադրանքներ դասախոսների համար, ովքեր նպատակ ունեն նորարարական մոտեցումներ կիրառելու իրենց դասընթացներում:

Հիմնաբառեր: Մեթոդ, ակտիվ ուսուցում, հիմնախնդրահենք ուսուցում, իրավիճակային վերլուծություն, միջգիտական, քննադատական մտածողություն, ուսանողների ներգրավվածություն:

Ներածություն

Կրթությունը, այդ թվում՝ տնտեսագիտական, արագ զարգացող և փոխակերպվող աշխարհի մարտահրավերների կենտրոնում է: Ավանդական դասախոսություններն ու տեսական մոտեցումները, թեև կարևոր են, հաճախ չեն կարողանում ուսանողներին ապահովել գործնական հմտություններով և խորը իմացությամբ, որոնք անհրաժեշտ են տնտեսական հիմնախնդիրների բացահայտման և լուծման համար: Ավելին, տեսական գիտելիքների և գործնական աշխարհում պահանջվող կարողությունների և հմտությունների միջև առկա է նշանակալի խզվածք: Նվազեցման տեսանկյունից կարևորվում է ուսուցման նորարարական մեթոդների և մոտեցումների կիրառումը կրթական գործընթացում: Այս առումով, ակտիվ ուսուցման մեթոդների ինտեգրումն ավելի ու ավելի մեծ նշանակություն է ստացել (Smith, 2022, էջ 210-230):

Սույն հետազոտությունը նպատակ ունի լրացնելու այս բացերը՝ ներկայացնելով ակտիվ ուսուցման մեթոդների ներդրման և կիրառման կարևորությունը, ինչպես նաև դասավանդողներին տրամադրելով տնտեսագիտական կրթության մեջ PBL-ի և Case Studies-ի կիրառման հակիրճ ուղեցույց: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել և վերլուծվել են տնտեսագիտական կրթության մեջ նոր, ոչ ավանդական մեթոդների ներդրման, կիրառության առանձնահատկությունները, տրվել են դրանց առավելությունների մեկնաբանությունները՝ ներկայացնելով այն երկարաժամկետ օգուտ-

ները, որոնք կունենան ուսանողները, համալսարանները դրանց կիրառման արդյունքում: Իրականացված վերլուծությունների առանցքում ակտիվ ուսուցման երկու մեթոդներն են, որոնք ապահովում են ուսուցման ինտերակտիվությունը, ուսանողների ներգրավվածությունը՝ միաժամանակ նպաստելով գործնական գիտելիքների, տարբեր հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը: Ներկայացված մեթոդների կիրառումը կնպաստի ուսանողալենտորն դասավանդման արդյունավետության բարձրացմանը, դասընթացից բավարարվածությանը՝ նպաստելով ցանկալի վերջնարդյունքների ստացմանը:

Ներկայացված մեթոդներն ու մոտեցումները կարող են ծառայել որպես հակիրճ ուղեցույց՝ համալսարանական կրթության մեջ ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման համար:

Գրականության ակնարկ

Կրթության մեջ արդիական մեթոդներին և նորարարական մոտեցումներին անդրադարձել են բազմաթիվ հեղինակներ, ինչպիսիք են Սմիթը (2015, էջ 124-129) և Ջոնսոնը (2017, էջ 287-296), ովքեր վերլուծել են դասախոսությունների վրա հիմնված ավանդական ուսուցման սահմանափակումները՝ ընդգծելով տեսական տնտեսագիտության և դրա գործնական կիրառման միջև առկա բացը:

Ակտիվ ուսուցումը, որը բնութագրվում է ուսուցման գործընթացում ուսանողների ներգրավվածության բարձր աստիճանով, ձանաչում է ձեռք բերել՝ շնորհիվ պասիվ ուսուցման մեթոդների թերությունները վերացնելու իր ներուժի: Մայերը (2019, էջ 589-601) և Բրաունը (2020, էջ 45-68) ներկայացրել են ակտիվ ուսուցման առավելություններն ու արդյունավետության ապահովման գործոնները: Այնուամենայնիվ, չնայած դրա առավելությունների վերաբերյալ աճող կոնսենսուսին, ակտիվ ուսուցման կիրառումը տնտեսագիտական կրթության շրջանակներում մնում է համեմատաբար չուսումնասիրված:

Խնդրի վրա հիմնված ուսուցումը (PBL) մանկավարժական մոտեցում է, որն ուսանողներին դնում է խնդիրներ լուծողների, որոշումներ կայացնողների դերում, որտեղ նրանք բախվում են բարդ, իրական աշխարհի սցենարների հետ: Մինչ PBL-ը հաջողությամբ իրականացվել է այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են բժշկությունը և ճարտարագիտությունը (Dolmans, Loyens, Marcq, Gijbels, 2016, էջ 1087-1120), դրա կիրառումը տնտեսագիտական կրթության շրջանակներում սահմանափակ ուշադրության է արժանացել: Հատկանշական բացառությունները ներառում են Գրինի (2016, 215-232) և Փաթելի (2018, 35-51) աշխատանքը, ովքեր ընդգծել են PBL-ի կարևորությունը՝ տնտեսագետ-ուսանողների շրջանում քննադատական մտածողության և խնդիրների լուծման հմտությունները զարգացնելու տեսանկյունից:

Մյուս կողմից, իրավիճակների վերլուծությունները (case studies) լայնորեն ձանաչված են որպես տեսության և պրակտիկայի միջև անջրպետը վերացնելու արժեքավոր գործիք (Yin, 2014): Տնտեսագիտական կրթության համա-

տեքստում կիրառվել են տարբեր case-եր՝ պարզաբանելու բարդ տնտեսական հասկացությունները և ուսանողներին բացահայտելու իրական աշխարհի տնտեսական երկրնտրանքները (Roberts, 2017; Hughes, 2020, էջ 421-439): Այնուամենայնիվ, այս մեթոդի լիարժեք և համակարգված ինտեգրումը տնտեսագիտության ուսումնական ծրագրերում և դրա արդյունավետության հիմնավորումը մնում են չուսումնասիրված ոլորտներ:

Այսպիսով, չնայած տնտեսագիտական կրթության մեջ ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման անհրաժեշտության ընդունմանը, դեռևս առկա է հիմնախնդրահենք ուսուցման (PBL) և Case Studies-ի գործնական կիրառման վերաբերյալ համապարփակ ուղեցույցների պակասը:

Քննարկում

Տնտեսագիտական կրթությունը վերջին երկու տասնամյակների ընթացքում ակնհայտ է եղել աստիճանական փոխակերպումների, որի ընթացքում լայն կիրառություն են ստացել ակտիվ ուսուցման մեթոդները, որոնք նպատակաուղղված են տնտեսագիտական կրթության արդիականացմանը, ավանդական ուսուցման սահմանափակումների հաղթահարմանը: Նման սահմանափակումներն ու անհամապատասխանություններն առավել արտահայտվում են տնտեսական աշխարհի և տնտեսագիտության փոփոխվող բնույթի պատճառով, որտեղ դինամիկ համաշխարհային շուկաները և բարդ սոցիալ-տնտեսական խնդիրներն առաջադրել են հարմարվողականություն և իրական աշխարհի խնդիրների լուծման հմտությունների հրամայականը:

Արդյունքում սկսել են մշակվել, կիրառվել, կատարելագործվել և զարգանալ դասավանդման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու ուսումնական գործընթացում ուսանողների ներգրավվածության ապահովմանն ուղղված մեթոդներ և տեխնիկաներ, որոնցից մի քանիսը ներկայացված են ստորև՝ աղյուսակ 1-ում:

Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառումն ունի մեծ դրական ազդեցություն ինչպես ուսանողների, դասավանդողների, այնպես էլ համալսարանի և կրթական գործընթացի վրա: Այսպես, ակտիվ ուսուցման մեթոդների կիրառումն ուսանողի համար ունի հետևյալ առավելությունները.

- քննադատական մտածողության և տնտեսական հասկացությունների գործնական կիրառման համար անհրաժեշտ հմտությունների ձևավորում և զարգացում,
- իրական աշխարհի տնտեսական մարտահրավերների ճանաչում և որոշումների կայացում,
- վերլուծական հմտությունների և նոր տեխնոլոգիաներին և տնտեսական պարադիգմներին հարմարվելու կարողության ձեռք բերում,
- մտահորիզոնի ընդլայնում՝ օգնելով հասկանալ տնտեսագիտության փոխկապակցվածությունը գլոբալացված աշխարհում,
- շփվելու /ներթրքինգ/ հնարավորությունների, նրանց ոլորտի մասնագետների հետ կապի ձևավորում և այլն:

Համալսարանները, որոնք հաջողությամբ ինտեգրում և կիրառում են նո-

րարար մեթոդները, ապահովում են՝

- իրենց հեղինակության բարելավումը,
- մրցակցային առավելությունները,
- ուսանողների բավարարվածության ավելի բարձր մակարդակը,
- շրջանավարտների ուժեղ ցանցը,
- Հետազոտության հնարավորություններ և ներուժ,
- Ֆակուլտետի զարգացում,
- Դասախոսների հմտությունների զարգացում և այլն:

Աղյուսակ 1: Տնօրենագիտական կրթության մեջ առավել կիրառելի նորարարական և արդյունավետ մեթոդները:

Ակտիվ ուսուցում	
Հիմնախնդրահենք ուսուցում – Problem-Based Learning (PBL)	Ուսանողներն աշխատում են իրական աշխարհի տնտեսական խնդիրների վրա՝ խթանելով քննադատական մտածողությունը և խնդիրներ լուծելու հմտությունները:
Իրավիճակային վերլուծություն – Case studies	Բարդ տնտեսական իրավիճակների, իրական դեպքերի վերլուծությունը թույլ է տալիս ուսանողներին կիրառել տեսական գիտելիքները գործնական իրավիճակներում:
Տեխնոլոգիաների ինտեգրում	
Առցանց սիմուլացիաներ	Ինտերակտիվ տնտեսական սիմուլացիան ապահովում է գործնական գիտելիքներ և փորձ՝ տնտեսական որոշումների կայացման հարցում:
Տվյալների վերլուծության գործիքներ	Էմպիրիկ վերլուծության և մոդելավորման համար տնտեսական տվյալների հետ աշխատանքի ծրագրային ապահովման օգտագործում:
«Շրջված» լսարան	Ուսանողները դասախոսությունները ստանում են առցանց՝ ազատ դասաժամը տրամադրելով քննարկումներին և ինտերակտիվ աշխատանքին:
Փորձառական ուսուցում	
Փորձառություններ	Ուսանողների համար իրական աշխատանքային միջավայրում և դերերում աշխատելու հնարավորությունների ապահովում:
Գործնական այցեր	Այցելություն տնտեսական հաստատություններ, քիզնեսներ կամ պետական մարմիններ գիտելիքի և փորձի ձեռքբերման համար:
Համագործակցային ուսուցում	
Խմբային նախագծեր	Համագործակցային նախագծերի հանձնարարում, որոնք պահանջում են թիմային աշխատանք և տնտեսական հայեցակարգերի կիրառում:
Խաչաձև ուսուցում (peer teaching)	Թույլ տալ ուսանողներին ուսուցանել և սովորել միմյանցից:
Ակտիվ լսարան մեթոդներ	
Մտածել-քննարկել-կիսվել-Think-Pair-hare	Խրախուսել ուսանողներին մտածել ինքնուրույն, քննարկել դասընկերոջ հետ և կիսվել գաղափարներով լսարանի հետ:

Սուկրատիկ քննարկումներ	Ուսանողներին ներգրավել առաջնորդվող /մոդերացվող/ քննարկումներում՝ տնտեսական հայեցակարգերն ուսումնասիրելու և վերլուծելու համար:
Խաղայնացում	
Տնտեսական, դերային խաղեր	Տնտեսագիտության ուսուցումը հաճելի և գործնական դարձնելու համար կրթական խաղերի և սիմուլյացիաների ներդրում:
Մրցույթներ	Քննադատական մտածողությունը խթանելու նպատակով տնտեսական մրցույթների կամ բանավեճերի կազմակերպում:
Էթիկական և սոցիալական պատասխանատվություն	
Էթիկական խնդիրների քննարկումներ	Ուսումնասիրել տնտեսական որոշումների կայացման ժամանակ էթիկական նկատառումները:
Սոցիալական պատասխանատվության նախագծեր	Ուսումնասիրել տնտեսական խնդիրները և դրանց լուծումները սոցիալական պատասխանատվության տեսակետից:

Սույն հոդվածում դիտարկվել են ակտիվ ուսուցման մեթոդներից երկուսը՝ հիմնախնդրահենք ուսուցում (PBL) և Case Studies, տնտեսագիտական կրթության ոլորտում:

Հիմնախնդրահենք ուսումնառության (PBL) և իրավիճակային վերլուծությունների (Case Studies) կիրառությունը տնտեսագիտական կրթության մեջ. օրինակներ

PBL-ի հիմնական առանձնահատկությունները

PBL-ը սովորողակենտրոն մոտեցում է, որը պտտվում է ուսանողների շուրջ՝ հնարավորություն ընձեռելով համատեղ ուժերով լուծելու իրական աշխարհի տնտեսական խնդիրները: PBL-ի հիմնական սկզբունքները ներառում են.

ա. Խնդրի բացահայտում. Մեթոդի կիրառումը սկսվում է ներկայացնելով իրական տնտեսական խնդիր կամ սցենար, որը վերաբերում է դասընթացի տվյալ թեմայի բովանդակությանը:

բ. Անհատական – ինքնուրույն ուսումնասիրություն. Ուսանողներն ինքնուրույն ուսումնասիրում են խնդիրը, համապատասխան հասկացությունները և ձևակերպում են վարկածներ:

գ. Համագործակցություն – համարեղ վերլուծություն. Ուսանողները բաժանվում են փոքր խմբերի՝ կիսվելու իրենց ուսումնասիրությունների արդյունքներով և պատկերացումներով:

դ. Աջակցում /մոդերացիա, ֆասիլիտացիա/. Դասավանդողն ուղղորդում է ուսանողներին իրենց ուսումնասիրությունների, խմբային վերլուծությունների ընթացքում և անհրաժեշտության դեպքում աջակցություն է առաջարկում:

Օրինակներ.

1. Մակրոտնտեսագիտության դասընթացի ընթացքում ուսանողներին ներկայացվում է ռեցենսիայի ժամանակ կառավարության հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությունը երկրի տնտեսության

վրա՝ փորձելով ներկայացնել այդ քաղաքականության անհրաժեշտությունն ու առանձնահատկությունները: Ուսանողներն ուսումնասիրում են տնտեսական ցուցանիշները, ժամանակագրական տվյալները և կառավարության քաղաքականությունը՝ ռեցեսիայի դեմ պայքարի վերաբերյալ առաջարկություններ մշակելու համար: Ընթացքում նրանք կիրառում և մեկնաբանում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են հարկաբյուջետային բազմապատկիչները, համախառն պահանջարկը և հարկաբյուջետային քաղաքականության տարբեր գործիքները:

2. Աշխատանքի տնտեսագիտություն.

- *Խնդիր.* Ուսումնասիրել աշխատավարձի անհավասարության պատճառներն ու հետևանքները կոնկրետ ոլորտներում, ինչպիսիք են տեխնոլոգիաները կամ առողջապահությունը:
- *Անհատական ուսումնասիրություն.* Ուսանողներն ուսումնասիրում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեխնոլոգիական ազդեցությունները հմտությունների վրա, կրթության մակարդակը և աշխատաշուկայի քաղաքականությունը, որոնք նպաստում են աշխատավարձերի մակարդակների անհավասարությանը:
- *Համագործակցություն.* Խմբերը ներկայացնում են իրենց բացահայտումները ոլորտում աշխատավարձերի կառուցվածքի վերաբերյալ և առաջարկում են քաղաքականության առաջարկներ՝ անհավասարությունը մեղմելու համար:

3. Հանրային ֆինանսներ.

Խնդիր. Վերլուծել հարկաբյուջետային մարտահրավերները, որոնք կարող են առաջանալ բնակչության միգրացիայի արդյունքում հարկային եկամուտների նվազման պատճառով:

- *Անհատական ուսումնասիրություն.* Ուսանողներն ուսումնասիրում են հարկային քաղաքականությունը, ժողովրդագրական տեղաշարժերը և հանրային ծառայությունների դերը տնտեսության մեջ:
- *Համագործակցություն.* Ուսանողները միասին աշխատում են բյուջեի առաջարկ մշակելու համար, որը լուծում է եկամուտների պակասի խնդիրը՝ միաժամանակ պահպանելով հիմնական ծառայությունները:

Առաջադրանքներ

Եկամտի անհավասարություն.

- *Խնդիր.* Վերլուծել առանձին երկրում եկամուտների աճող անհավասարության պատճառներն ու հետևանքները՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեխնոլոգիական փոփոխությունները, գլոբալացումը և քաղաքականության արձագանքները: Առևտրային պատերազմներ.
- *Խնդիր.* Ուսումնասիրել խոշոր տնտեսությունների միջև առևտրային պատերազմների (ինչպես օրինակ ԱՄՆ-Չինաստան առևտրային պատերազմը) տնտեսական հետևանքները համաշխարհային մատակարարման շղթաների, արդյունաբերության և միջազգային հարաբե-

րությունների վրա:

Համավարակ և տնտեսական վերականգնում.

- *Խնդիր.* Ուսումնասիրել համավարակի (օրինակ՝ COVID-19) տնտեսական ազդեցությունը աշխատաշուկաների, ձեռնարկությունների, առողջապահական համակարգերի և կառավարության արձագանքների վրա: Վերլուծել տնտեսության վերականգնման ռազմավարությունները:

Իրավիճակային վերլուծության (Case studies) հիմնական առանձնահատկությունները

Իրավիճակային խնդիրներն իրական կամ հիպոթետիկ տնտեսական իրավիճակների մանրամասն պատմություններ են, որոնցում շեշտադրվում է որոշումների կայացման և խնդիրների լուծման կարողությունը: Իրավիճակային խնդիրների հիմնական բնութագրերը ներառում են.

ա. Իրապեսություն. Խնդիրները պետք է հիմնված լինեն իրական աշխարհի տնտեսական սցենարների վրա, ինչը թույլ է տալիս ուսանողներին հասկանալու իրական տնտեսական մարտահրավերները, դրանցով պայմանավորված բարդությունները և անորոշությունները:

բ. Լուծման փարբերակներ. Խնդիրները ներառում են լուծման տարբերակներ, որտեղ ուսանողները պետք է վերլուծեն տեղեկատվությունը, կիրառեն տնտեսական տեսությունները և կատարեն տեղեկացված ընտրություն:

գ. Քննարկումների վրա հիմնված. Իրավիճակների ուսումնասիրությունները և վերլուծությունները հաճախ պահանջում են քննարկումներ, բանավեճեր, որոնց ընթացքում սովորողները պետք է կարողանան պաշտպանել իրենց դիրքորոշումները և դիտարկել այլընտրանքային լուծումներ (Eisenhardt, 1989, էջ 532-541):

Օրինակներ

1. Միկրոտնտեսության դասընթացի ընթացքում իրավիճակի ուսումնասիրությունը կարող է պատվել նոր շուկա մուտք գործել պատրաստվող ընկերության կողմից կայացվող որոշման շուրջ: Ուսանողները վերլուծում են այնպիսի գործոններ, ինչպիսիք են շուկայի կառուցվածքը, պահանջարկի կառուցվածքը, առաձգականությունը, արտադրության ծախսերը և մրցակցային ռազմավարությունները: Նրանք պետք է առաջարկեն, թե արդյոք ընկերությունը պետք է մուտք գործի շուկա և հիմնավորի իրենց որոշումը՝ հիմնվելով տնտեսական սկզբունքների վրա:
2. Վարքագծային տնտեսագիտություն.
 - *Իրավիճակ.* Ուսումնասիրել խնայողությունների և ներդրումների միջև ընտրության վերաբերյալ սպառողների վարքագիծը փոփոխվող տնտեսական միջավայրում:
 - *Լուծման փարբերակներ.* Ուսանողները վերլուծում են վարքագծային առանձնահատկությունները (ինչպիսիք են կորստի հակակրանքը և ստատուս քվոյի կողմնակալությունը), լուծման հնարավոր տարբե-

րակները, և ինչպես են դրանք ազդում ֆինանսական որոշումների և ներդրումային վարքագծի վրա:

3. Գլոբալիզացիա և աշխատաշուկա.

- *Իրավիճակ*. Ուսումնասիրել օֆշորինգի ազդեցությունը զարգացած երկրի աշխատաշուկայի վրա՝ հաշվի առնելով այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատատեղերի և աշխատավարձերի փոփոխությունները:

- *Հունձան փարբերակներ*. Ուսանողները գնահատում են գլոբալացման ազդեցությունը տնտեսության տարբեր ոլորտների վրա, առևտրային քաղաքականության դերը և աշխատողների վերապատրաստման հնարավոր ծրագրերը:

Առաջադրանքներ

2008 թվականի համաշխարհային ֆինանսական ճգնաժամ.

- *Իրավիճակ*. Վերլուծել 2008 թվականի ֆինանսական ճգնաժամի պատճառներն ու հետևանքները, ներառյալ հիփոթեքով ապահովված արժեթղթերի դերը, բանկերի ձախողումը և կառավարության միջամտությունները:

Uber-ն ընդդեմ ավանդական տաքսիների.

- *Իրավիճակ*. Ուսումնասիրել Uber-ի նման պլատֆորմների՝ ավանդական տաքսիների արդյունաբերություններին համօգտագործելու պատճառով առաջացած խափանումները՝ անդրադառնալով կարգավորող մարտահրավերներին, աշխատանքային խնդիրներին և սպառողների օգուտներին:

Եվրոպական պարտքային ճգնաժամ.

- *Իրավիճակ*. Ուսումնասիրել եվրոպական պարտքային ճգնաժամը՝ կենտրոնանալով այնպիսի երկրների վրա, ինչպիսիք են Հունաստանը և Իսպանիան, վերլուծել արժույթային միության շրջանակներում պետական պարտքի կառավարման մարտահրավերները:

Ներկայացված մեթոդների գործնական իրականացման նկատառումներ
Գնահատում և հետադարձ կապի ապահովում – PBL-ի և իրավիճակային վերլուծությունների գնահատման մեթոդները կարող են ներառել ինչպես անհատական, այնպես էլ խմբային ներկայացումները, գրավոր զեկույցները կամ նկարագրական վերլուծությունները: Հետադարձ կապը պետք է կենտրոնանա ինչպես առաջարկվող լուծումների խորության և որակի, այնպես էլ տնտեսական իրավիճակի ընկալման աստիճանի, իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների խորության վրա:

Ռեսուրսներ և նյութեր – Մեթոդների կիրառման ընթացքում դասավանդողները պետք է ապահովեն համապատասխան տնտեսական տվյալների, հոդվածների և ռեսուրսների հասանելիություն՝ ուսանողների հետազոտություններին և վերլուծություններին աջակցելու համար:

Ակտիվ օժանդակություն – Դասավանդողներն առանցքային դեր են խաղում քննարկումներն ուղղորդելու, հասկացությունները պարզաբանելու գործում:

Եզրակացություն

Տնտեսագիտական կրթության անընդհատ զարգացող համատեքստում հիմնախնդրահենք ուսուցման (PBL) և իրավիճակային վերլուծության (Case Studies) ինտեգրումն ուսուցման գործընթացներում ի հայտ է գալիս որպես փոխակերպող մոտեցում՝ նպաստելով նորարար, ստեղծարար և քննադատական մտածողության, տեսությունը գործնականում կիրառելու, տնտեսական որոշումների կայացման հմտությունների ձևավորմանը և զարգացմանը: PBL-ի միջոցով ուսանողները կարողանում են մասնատել բարդ տնտեսական սցենարները, հիմնախնդիրները և առաջարկել լուծումներ, դիտարկել որոշումների այլընտրանքները և կայացնել հավասարակշիռ որոշում: Մյուս կողմից, Case Studies-ը ուսանողներին ծանոթացնում է իրական աշխարհի տնտեսական մարտահրավերներին՝ կատարելագործելով նրանց վերլուծական կարողությունները:

Միաժամանակ, տնտեսագիտական կրթության կարևոր մարտահրավերներից մեկը տեսության և պրակտիկայի միջև աճող անջատումն է: Հողվածում ներկայացված մեթոդները՝ PBL-ը և Case Studies-ը, լրացնում են այս բացը՝ լսարանը վերածելով իրական տնտեսական կյանքից վերցված դեպքերի, երևույթների և գործընթացների, քաղաքականության այլընտրանքների քննարկումների, վերլուծությունների միջավայրի: Դասավանդողներն էլ, իրենց հերթին, գիտելիք տարածողներից վերածվում են հետազոտության օժանդակողների՝ նպաստելով քննարկման և դիտարկվող հարցերի վերաբերյալ հետաքրքրության առաջացմանը, կառուցողական և հետաքրքիր վերլուծությունների իրականացմանը:

Այսպիսով, սույն հետազոտության շրջանակներում իրականացվել է այս ուղղությամբ առկա գրականության ուսումնասիրություն և վերլուծություն, որի արդյունքում բացահայտվել են առկա բացերը, հիմնավորվել է տնտեսագիտական կրթության մեջ PBL-ի և Case Studies-ի ներդրման կարևորությունը:

Նման մեթոդների կիրառման միջոցով է, որ ապագա տնտեսագետները դառնում են գիտակ և հմուտ մասնագետներ, քաղաքականություն մշակողներ և ապագա առաջնորդներ, ովքեր կկարողանան առաջարկել արդյունավետ լուծումներ՝ ազգային և համաշխարհային տնտեսության բարդ մարտահրավերների հաղթահարման համար:

Այսպիսով, տնտեսագիտության մեջ դասավանդման նորարարական և արդյունավետ մեթոդների ընդունումը և կիրառումը դրական ազդեցություն է ունենում համալսարանների գործունեության, կրթական գործընթացի արդյունավետության ապահովման վրա՝ բարձրացնելով նրանց հեղինակությունը, մրցունակությունը և ընդհանուր կրթական որակը: Ուսանողների համար այս մեթոդները հանգեցնում են ուսումնառության բարելավված արդյունքների ձեռքբերմանը, աշխատաշուկայում մրցունակության ապահովմանը: Վերջիններս հիմնավորում են տնտեսագիտական կրթությունում ուսուցման ակտիվ մեթոդների ներդրման և կիրառման երկարաժամկետ դրական արդյունքները, ուստի և կարևորությունը համալսարանական կրթության մեջ:

Օգտագործված գրականության ցանկ:

- Smith, J. R. (2022). Modernizing Economic Education: Integrating Active Learning Methods. *Journal of Economics Education*, 45(3).
- Smith, A. (2015). Rethinking Economics Education: Challenges and Opportunities. *Journal of Economics Education*, 38(2), pp. 123-145.
- Johnson, L. (2017). The Gap Between Economic Theory and Practice: A Review. *Economics Today*, 45(3), pp. 287-305.
- Mayer, R. (2019). The Effectiveness of Active Learning Strategies: A Meta-analysis. *Journal of Educational Psychology*, 112(4), pp. 589-605.
- Brown, E. (2020). Active Learning in Higher Education: A Comprehensive Review. *Higher Education Research Quarterly*, 25(1), pp. 45-68.
- Dolmans, D. H., Loyens, S. M., Marcq, H., & Gijbels, D. (2016). Deep and surface learning in problem-based learning: A review of the literature. *Advances in Health Sciences Education*, 21(5), pp. 1087-1112.
- Greene, J. (2016). Problem-Based Learning in Economics: An Empirical Study. *Economics Education Research Journal*, 22(3), pp. 215-232.
- Patel, R. (2018). Enhancing Critical Thinking Through Problem-Based Learning in Economics. *Journal of Economic Education*, 41(1), pp. 35-51.
- Yin, R. (2014). *Case Study Research: Design and Methods*. Sage Publications.
- Roberts, M. (2017). Using Case Studies to Bridge Theory and Practice in Economics Education. *Journal of Economics Case Studies*, 12(2), pp. 65-82.
- Hughes, S. (2020). The Role of Case Studies in Teaching Applied Economics. *Economics Education Review*, 30(4), pp. 421-439.
- Eisenhardt, K. M. (1989). Building Theories from Case Study Research. *Academy of Management Review*, 14(4), pp. 532-550.

Արփինե Սարգսյան

*Преподаватель Гюмрийского филиала Государственного
экономического университета Армении,
кандидат экономических наук
Эл. адрес: a.s.arpinesargsyan@gmail.com
<https://orcid.org/0000-0003-3415-983X>*

**МОДЕРНИЗАЦИЯ ЭКОНОМИЧЕСКОГО ОБРАЗОВАНИЯ.
ОСОБЕННОСТИ ПРИМЕНЕНИЯ АКТИВНЫХ МЕТОДОВ ОБУЧЕНИЯ
(ПРОБЛЕМНОЕ ОБУЧЕНИЕ И КЕЙС-СТАДИ)**

Преподавание экономики в университетах может быть творческим и эффективным, если включать различные методы, которые привлекают студентов, способствуют критическому мышлению и связывают теорию с практикой. Экономическое образование на университетском уровне находится в процессе различных трансформаций, чтобы соответствовать требованиям быстро меняющегося мира и вооружить студентов практическими навыками

и глубоким пониманием реальных экономических явлений.

Актуальность статьи обусловлена современными проблемами, с которыми сталкивается экономическое образование, такими как пассивное обучение и разрыв между теоретическими знаниями и практическими навыками.

Данная методическая статья призвана выявить важность инновационных методов в экономическом образовании и предоставить педагогам практическую дорожную карту, позволяющую сделать процесс обучения более эффективным и интересным, а также подготовить студентов к современным экономическим задачам.

В статье рассматривается внедрение активных методов обучения, в частности проблемно-ориентированного обучения (ПОО) и методов тематических исследований, в университетское образование при преподавании экономики. Методы активного обучения широко используются в высшем образовании благодаря способности развивать критическое мышление, решение проблем, творческие способности и другие навыки, а также возможности практического применения теоретических знаний.

Статья может служить всеобъемлющим руководством по использованию PBL и анализа кейсов, предлагая примеры и практические задания для преподавателей, которые стремятся реализовать инновационные подходы в своих курсах.

Ключевые слова: метод, активное обучение, проблемное обучение, тематические исследования, междисциплинарность, критическое мышление, разработка учебной программы, вовлечение студентов.

Arpine Sargsyan

Lecturer of the Gyumri branch, Armenian State University of Economics

Ph.D. in economics

Email: a.s.arpinesargsyan@gmail.com

<https://orcid.org/0000-0003-3415-983X>

MODERNIZATION OF ECONOMIC EDUCATION. FEATURES OF THE APPLICATION OF ACTIVE LEARNING METHODS (PROBLEM-BASED LEARNING AND CASE STUDIES)

Teaching economics in universities can be both creative and effective by incorporating various methods that engage students, promote critical thinking, and connect theory to real-world applications. Economics education at the university level is undergoing various transformations to meet the demands of a rapidly changing world, and to equip students with practical skills and a deep understanding of real-world economic phenomena.

The relevance of the article is explained by the current challenges economics education is facing, such as passive learning, and the gap between theoretical knowledge and practical skills.

This methodological article aims to identify the importance of innovative methods in economics education and to provide a practical roadmap for educators to make the learning process more effective and interesting, as well as to prepare students for modern economic challenges.

The article examines the implementation of active learning methods, particularly problem-based learning (PBL) and case studies methods in university education for teaching economics. Active learning methods are widely used in higher education due to the ability to promote critical thinking, problem-solving, creativity, and other skills, as well as the possibility of practical application of theoretical knowledge.

The article can serve as a comprehensive guide to the use of PBL and case analysis, offering examples and practical tasks for instructors who aim to implement innovative approaches in their courses.

Keywords: Method, active learning, problem-based learning, case studies, interdisciplinary, critical thinking, curriculum development, student engagement.

Հոդվածը խմբագրություն է ներկայացվել՝ 2023թ. դեկտեմբերի 4-ին:

Հոդվածը հանձնվել է գրախոսման՝ 2023թ. դեկտեմբերի 5-ին:

Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2023թ. դեկտեմբերի 17-ին:



Տարածման 100 օրինակ

EDIT PRINT
43 D. Malayan Str., Norvich
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻՑ ՊՐԻՆՏ
Էդիսինգ, Նորվիչ
հեռ.՝ (374 10) 20 848
www.editprint.am
info@editprint.am